


ԱՐԻԱԿԱՆ ԱՐԴԱՎՅԱՆ

ԴԻՐՔՈՂՈԽ

ԿՈԼԵԿՑԻՈՆԵՐԻ
ԽՅԱԼԻ ԳԻՒՅ



1931 ՀԵՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

6 NOV 2011

891-99

4-30

44

ԱՆՈՒՑՎԱՆ ՎՐԴԱՆՅԱՆ

ՆՎԵՐ

ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻՆ

ՀԵՂԻՆԱԿԻՑ

= ԳԻՐՔԵՐՈՒՄ =

ՊԻՏԵՍ Յ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ և ՊԱՏԿԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Ըստիկ Յի. ԱՐԱՐՈՒ ՎԱՐԹԵՐՈՅ

ՅԵՐԵՎԱՆ

1981

— Գ Ո Ր Մ Ո Ղ Ա Ն Ձ Բ Ի Ք —

- | | | |
|----------------|-------------------------------|--------------------|
| 1. Տիգրան | Կոլխոզի անդամ | Կոլխոզի նախագահ |
| 2. Ավետիք | » | Գյուղինոր նախ. |
| 3. Արշակիր | » | Կոմիջիջի քարտ. |
| 4. Սեթի | » | Զքավոր գուղացի |
| 5. ՆԱՐԴԻԶ | » | Արթոյի կինը |
| 6. ԱՀԱԿ ԻԻՉԱՆ | » | Միջակ գյուղացի |
| 7. ԱԱՆԱՄ | » | Նրա կինը |
| 8. ՀԱՄԲՈ | » | Զք. գյուղ. (ԼԿՅԵՄ) |
| 9. ՇՄՈ | » | » » » |
| 10. ԹԵՎՈՒ | » | » » » |
| 11. ՄԱՐԳԱՐ | » | Բատրակ |
| 12. ՀՐՈՒՇ | » | |
| 13. ԶՄՐՈՒԽԻԾ | » | |
| 14. ԿԱՐՈ | Բանֆակի ռւսանող կոմսոմոլ | |
| 15. ՈՀԱՆՆԵՍ | Գործարանի բանվոր զյուղի շեֆ | |
| 16. ԳԵՂԱՄ | » | » » |
| 17. ՀԵՂԻՆԱՐ | Դանել աղայի կինը | |
| 18. ԴԱՆԵԼ ԱՆԱ | Կուլակ, դաշնակ փրկ. կոմ. անդ. | |
| 19. ՅԵՂԱՌ | Նրա աղջիկը | |
| 20. ԳԵՂԱՄՈՒՄ | Նախկին խանութպան | |
| 21. ՏԵՐՏԵՐ | | |
| 22. 1 ԳՅՈՒՂԱՑԻ | | |
- ՄԻ ԽՈՒՄԲ ԲԱՆՎՈՐՆԵՐ, ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ և ԲԱՆԴԻՑ

ՊԵՏՑՐԱՏԻ ՏՄԱՐԱՆ

ԳՐԱՆ. 6157 (Բ)

ՏԻՐԱԺ 4000 ՊԱՏՎԵՐ 169

ԱՐԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է աշխատանքի ժամանակ: Կոլ-
խողնիկները յերգելով աշխատում են: Խոկ կուլակները
կանգնել հեռվից նայում են:

Տ Ե Ս Ի Լ 1.

Դամնել, Գարասիմ և տերտեր.

ԴԱՐԱՄ — Իմ այդին սրանց սահմաններին շատ և մոռ.
Ճեռքից խլելու յին:

ԴԱՆԵԼ — Իմ այդին, վոր հեռու ա, կարծում ես չե՞ն
խլելու: Խլելու յին: Աչքի ընկնող այդինները,
լավ մշակված հողամասերը սրանք վերցնելու յին
կենտրոնացնեն իրանց ճեռքում, խոկ անպետք և
հեռուներում ընկած, անմշակ հողերը վերցնեն
տան մեղ:

ԳԱՐԱՄ — Վոր մշակենք, դան նորից ճեռքներից խը-
յե՞ն: Ուշացել են: Այդուցս ճեռ կըաշեմ, կըորա-
ցնեմ. ծառերը կկտրատեմ փետ կշինեմ. դան
կենտրոնացնեն տեսնեմ, վոնց ե՞ն կենտրոնաց-
նում:

ԴԱՆԵԼ — Այդիդ չորացնել կարող ես, բայց թե անտ-
սունները ինչ պտես անի: Կոլխոզը անասունների
կարիք ա զդում: Նրանք առաջի հերթին քալու
յին տավարը մեր ճեռքից խլեն: Տավարն ել չորա-
ցնել կամ ծախել հռ չես կարող:

ԳԱՐԱՐ — Բա չե, աչքերս բաց բաց յես նրանց կթող-
նեմ գան տավարս տանեն : Դանակը կքաշեմ
եքուցվանից դիմ կմորթեմ, միսը կգցեմ դուրս
չները կուտեն : Խելքը ուրա՞ գնում :

ԴԱՆԵԼ — Զես կարա, դրա մասին նրանք վաղորոք
մտածած, միջոցներ ձեռք առած կլինեն, նրանք
քնած չեն :

ՏԵՐՏԵՐ — Զուրը չհասած, դուք արդեն բորկանում
եք: Սպասեք, բալքի հենց ասսու վողորմությու-
նը հասնի, մտքները փոխեն :

ԳԱՐԱՐ — Դու յել բան ես ասում: Հյուսներս, վոր աս-
սու վրա դնենք, լավ հացի կտիրանանք, եղ բա-
րի խորհուրդը դու պահի քեզ համար: Ես տնա-
քանդը ընենց խոսում ա, կարծես ես աշխարհում
չլինի:

ԴԱՆԵԼ — Մեղաղելու չի, յեկեղեցում սրբերի հետ ա
դործ ունեցել: Կոմունիստներին լավ չի ճանա-
չել: Խոր. Նրանք վոր մտքներումը դրին, տառը
հազար աստված ել վոր յերկնքից վեր գա, միե-
նույն ա, նրանց միտքը չի փոխվի. Նրանք իրանց
ասածը անելու յեն: (Սիհակը վազգ-վոազ գալիս ե
անցնելու):

Տ Ե Ս Ի Լ 2.

Նույնի և Սիհակ

ՍՀԱԿ — Ազրավները ելի հավաքվել են, խորհուրդ են
անում: Տեսնես ելի ի՞նչ պլան են քաշում (ու-
գում ե զնա նրան կանգնեցնում են).

ԴԱՆԵԼ — Սհակ բիձա, եղ ո՞ւր ես ըտենց վրազ-վոազ
գնում:

ՍՀԱԿ — Աշխատանքի յեմ գնում . ես որ յես մի քիչ ու-
շացել եմ: (Ուզում ե զնա)

ԳԱՐԱՐ — Այ մարդ, դու նորից խարվեցի՞ր:

ԴԱՆԵԼ — Միամիտ մարդ ա, իհարկե կիսարվի: Սհակ
բիձա, չմոռանաս, ես մի խոսք ա յես քեզ ասում
եմ, դու միտդ պահի: Շատ չի քաշի, դու փոշմա-
նելու յես: Ես որ եգուց ելած չելածը ձեռքիցդ
դուրս կու, դու են ժամանակ կհասկանաս, վոր
յես քու լավին ելի ուզում:

ՍՀԱԿ — (Գարասիմին) դու բան չե՞ս ասելու:

ԴԱՆԵԼ — Ասս, բալքի ես մարդը քու խորհուրդն ա ու-
զում իմանս:

ԳԱՐԱՐ — Սհակ բիձին խորհուրդ տալու համար միշտ
ել յես պատրաստ եմ: Լսիր Սհակ բրիձա, դու
հալիվոր մարդ ես, դրա համար ել յես քեզ խըլ-
ցում եմ. կոմունիստներին դու շատ ել մի հա-
վատա: Եղ կոլխող մոլխողը գարդակ բան ա-
դրանից բան դուրս չի գա: Կոլխողի մահանով
նրանք հաշվի յեն առնում իմանան ով ի՞նչ ու-
նի, վոր նրա համաձայն տուրքեր ավելացնեն...

ՏԵՐՏԵՐ — Արդար խոսք ա, դրանց միտքը ետ ա...

ԴԱՆԵԼ — Եղ ել, վոր չկենի դու աշխատավոր մարդ
ես, դու նրանց հետ ի՞նչ դործ ունես, նրանք
թամբալ մարդիկ են. Նրանք մի որ աշխատում
են, տաս որ՝ քնում են:

ՏԵՐՏԵՐ — Արդար խոսք ա. աշխարհիս երեսին ինչ-
քան թամբալ մարդիկ կան, մտել են կոլխոզ:
Խելքը գլխին, աշխատավոր, գործունյա մարդ
կոլխոզում դու չես տեսնի:

ԳԱՐԱՐ — Տո ջանմ, նրանք գոր ծանողներ չեն: Նրանք
իրանք պարապ նտում են, գործը թողնում են,

վոր մաշնը անի : Մաշինի արած բանն ել հս դիտեք ելի : Մի սհաթ կանի երկու որ կեանգնի : Դե արի, յերեսները շուռ են տալու ամեն մեկը մի կողմի վրա գնա : Սա նրա վրա ա դցելու . նա նրա, գործը շաբաթներով մնա...
(Խորքից յերգի ձայն) .

ԱՀԱԿ .— Լուսւմ ե՞ք... համ յերգում են, համ ել աշխատում : Հլա մի նրանց թամաշա արեք : Տեսեք նրանք վոնց սրտով կպել են աշխատանքին, մեծ պատիկ, երեխա, խառնվել են, գործը իրար ձեռքից են խլում... Նրանք իրանց համար ըտենչ չեյին աշխատում : Եղ աշխատանքը, յես կարծում եմ, վոր զուր չի կորչի :

ԴԱՆԵԼ .— Եղ քյամանչի ճենը հետո կիմանաս . սպասի : Մինչեվ վերջ նրանք իրար հետ եղակն սիրով չեն մնա, եսոր-եղուց շուն ու կատու յեն դառնալու իրար միս ուտեն :

ԱՀԱԿ .— Դուք խոսեցեք, յես գնամ նրանց քոմագ անեմ, ուշացել եմ... (դուրս և գնում) :

ԴԱՆԵԼ .— Գնա, տեսնենք քանի որ ես եղ խելքին մնալու : (Դուրս են գնում) :

Տ Ե Ս Ի Լ 3.

Նարգիզ հետո Հրուշ և Զմբուխտ .

ՆԱՐԳԻԶ .— Լաց մի ըլլի, բալիկ ջան, քեզ համար ճոճ եմ պատրաստում դնեմ մեջը քնացնեմ : (Յերեխան դնում և գետնին, պարանը վերցնում յերեխայի համար նոն պատրաստում և դնում մեջը որորում) :

ԶՄԲՈՒԽՏ .— Ես զահը բուժարը նորից քուին ընկազ

պատռվեց : (Նստում ե ասեղ քելը վերցնում դեյրի պատռված տեղը կարում, իսկ Հրուշը նամակ կարդալով գալիս ե :

ՀՐՈՒԽՏ .— (Կարդում ե) կուլակները գիշեր-ցերեկ կուլիովը քանդելու մասին են մտածում, արթուն կացեք, կոլխովը լավ պահեք, լավ վոր չպահեք կոլխովը կեանդպի... .

ԶՄԲՈՒԽՏ .— Քաղաքում նստած կոլխողի մասին ամտածում, երեվում ա, վոր Ռհանեսը խելոք տղա ա...

ՀՐՈՒԽՏ .— Խելոք վոր չլիներ . յես նրան կսիրեյի : Ռուստամ բեզի տղան որը տասը մարդ եր հետեւից ուղարկում, կդնայի ելի... .

ՆԱՐԳԻԶ .— Վոր գնայիր դու կարծում ես կփոշմանեցի՞ր, հողս քու շաշ խելքին : Հարուստ տուն, լիքը ոչաղ, կեր ու խմի քեֆ արա, ինչ դարդ կունենայիր : Իսկ Ռհանեսը քյասիր տղա ա, մի բանել ա չունի, նրանց տան ելած չելածը բարձես մի աքլորի վրա կտանի : (Դառնալով յերեխային) այ լակոտ, դե քնի ելի, միսս կերար... Առանց են ել վրես խոսում են, դիմի են են տում, վոր Մեթոյի կնիկը գործ չի անում, ծառերի տակը նստած երեխա ա պահում : (Յերեխային ծիծ ե տալիս) :

ՀՐՈՒԽՏ .— Աղջի Զմբուխտ, տես հլա ի՞նչ ա դրում : (Կարդում ե) «Հրուշ ջան, ես եկող ամսի 15-ին կդամ, դրանից շուտ չեմ կարող, վորովհետեւի մեր գործարանի բանվորներից մի մասը եքսկուրսիյա են գնացել : Նրանք կվերադառնան, յես իմ հերթական արձակուրդս կվերցնեմ կդամ մի տասնհինգ որ կովսողում քեզ հետ միասին կաշ-

իստեմ... Հրուշ ջան քեղ համար ծաղկավուն
չթից դեյրացու յեմ առել, եկողի ձեռքով կու-
ղարկեմ...

ԶՄՐՈՒԻՆԾ Եղ քոռ բախտը հենց ինձ համար եր կոր-
վե՞լ... Ելած չելած ես մի դեյրան ա, ամեն
ասուու որը կարկատում եմ, մի երկու սհաթից
հետո նորից պատովում ա:

ՆԱՐԴԻՉ.— Աղջի, քոռ նշանածն ել քաղաքումն ա. գրի
թող մի դեյրացու առնի զրկի. ջանը դուրս
չի գա:

ԶՄՐՈՒԻՆԾ.— Ունի՞ վոր զրկի:

ՆԱՐԴԻՉ.— Դե վոր չունի ինչի՞ ա նշանվում. Հողս
քու շաշ խելքին: Դու ել զիբելի մեջ մարդարիտ
ես ճարել:

ԶՄՐՈՒԻՆԾ.— Ինչ արած քյասիբություն ա...

ՆԱՐԴԻՉ.— Հողս քյասիբ նշանածի դլիմին... իմ մար-
դըս ել հրես քյասիբ ա, ինչի՞ նման ա, մարդ ու
կնիկ սաղ որը տանձվում չարչարվում ենք, մի
որ չենք տեսնում, ասենք աղջիկ ժամանակս ել
մի լավ-որ չեմ տեսել... Հույս ունեյի թե մար-
դու կզնամ, լավ որ կտեսնեմ: Հրես տեսնում
եմ... Հերդ չուն դառնա, գե քնի ելի... սուտ
բան ա. նշանածդ թող քոռ ըլի, քաշաւ ըլի, մե-
նակ թե հարուստ ըլի...

ՀՐՈՒՇ.— Մեշանական հասկացողություն... (նա-
մակը շարունակում է մտքում կարդալ. իսկ
Զմրուխտը շարունակ կարում ե):

ԶՄՐՈՒԻՆԾ.— Վնաս չունի, մի քանի տարուց հետո
հալբաթ ուսումը կավարտի, նրանից հետո լավ
կապրենք:

ՆԱՐԴԻՉ.— Հողս քու շաշ խելքին, նա վոր ուսումը ա-

վարտի, կզնա մի ուսումով աղջիկ կճարի նրա
հետ կապրի, ել դժվել ա, վոր քեղ ուղի... լայ,
լայ բալիկ ջան լայ լայ... (յերեխային որո-
րում ե):

ԶՄՐՈՒԻՆԾ.— Հողս գլխիս... (լաց և լինում) ինչ
թողնալու ա գնա ուրիշն ուղի...

ՀՐՈՒՇ.— Խելքը հավաքի գլուխդ... կոմսոմոլ ա,
նա եղակս բան չի անի:

ՆԱՐԴԻՉ.— Վոր կոմսոմոլ ա, նշանակում ա սուրբ ա,
հողս դրանց գլխին, ամեն ինչ դրանցից ա զուրս
գալի, դրանք վոր չամաչեն, մեկի տեղ տասը
կնիկ կպահեն... ասենք տղամարդիկ դիմ ըտենց
են, դրանց քոքը կտրվի: Ուրիշի կնանիքը դրանց
աչքին սիրուն են երելում: Ես լակոտը ինչի ա
եսոր թարսվել ու չի քնում, կոներս կոտրտվեց
որորելով... հմի նրանք կասեն ես կնիկը ուր
մնաց եսքան սհաթ: Շատ հարկավոր ա. ասում
են թող ասեն, դրանց աչքն ել դուրս գա. յես իմ
քեֆի համար չեմ եկել եստեղ նստել... (որո-
րում ե) լայ, լայ-բալիկ ջան, լայ լայ...

(Ուժեղ զանգի ձայն: Կոլխոզիկները աշխատանիքի ընդ-
միջում են ամում և գալիս հավաքվում են ծառի տակ
նստում ու հանգստանում: Սիակը չիրուխն և լցնում և
սկսում ծխել, Հրուշը շարունակ նամակ և կարդում.
իսկ Զմրուխտը մի կողմ քաշված իր դեյրի փեշն և
կարկատում):

Տ Ե Ս Ի Լ 4.

Նարգիզ, Սերո, Արշալիր, Սիակ, Տիգրան, Ավետիք,
Համբո, Զմրուխտ, Հերիքնազ, Սանամ և ուրիշները:

ՑԻԳՐԱՆ.— Առավոտվանից եկել եմ մեղ հետ կանգնել

Կալմասար աշխատում եմ... յես վոչինչ չեմ ա-
սում, դուք ել ձեն չեք հանում...

ԱՎԵՏԻՔ.— Տիգրան, Աստվածդ սիրես, դեսը մտիկ
տու. շապիկս քրտինքի մեջ կորել ա... մեջքիս
քամի ա փշում: Մի բան տվեք զցեմ վրես.
կմրսեմ, հճիվանդանամ, ոյուղիսորհուրդի դոր-
ծերը յերեսի վրա կմնա...

ԱՐՃԱՎ.— Գյուղիսորհրդի դործերով, ինչպես երեվում
ա, դու ավելի շատ ես հետաքրքրվում քան մեք
կոլխոզի գործերով:

ԱՎԵՏԻՔ.— Գյուղիսորհրդի նախադան եմ, իհարկե, ա-
մենից առաջ յես իմ պաշտոնական գործերով
պահմ հետաքրքրվի, բա վոնց, առանց են ել ա-
մենքը մի կոնից քննադատում եք:

ՀԱՄԲՈ.— Ռւրեմն, դու չես ուզում, վոր քեզ քննա-
դատեն:

ԱՎԵՏ.— Դուք ել ձեր քննադատությունով համը հա-
նեցիք... զահրումար դառնա, դրա տված ողու-
տը մենք չտեսանք, իսկ վնասը՝ ինչքան ասես...

ՏԻԳՐԱՆ.— Յես իմ տնտեսության վրա ըսենց աշխա-
տած վոր ըլեյի, միլիոնի տեր կլինեյի:

ՀԱՄԲՈ.— Մեր նախադաշը ինչպես երեվում ա, հոգ-
նել ա, սիրտը տուն դնալ ա ուզում:

ԱՐՃԱՎ.— Են կիսատ դործն ել կվերջացնենք, կդնանք
տուն:

ՍԵԹՈ.— Կիսատը կվերջացնենք, ուրիշ դործ ել կը-
կսենք, արելը տես հյա վորտեղ ա՞... տուն
դնալու ժամանակ չի:

ԱՎԵՏ.— Տիգրան, լուսմ ե՞ս ինչ են ասում...
ՏԻԳՐԱՆ.— Ինչ ուզում են թող ասեն. յես դնում եմ:

Դրասնեյակում սառչաղբերու թիւներ կտ, պահմ
ստորագրի:

ԱՀԱԿ.— (Մի կողմ) սա գործից փաղչելու նշան ա:
ԱՐՃԱՎ.— Եդ թխտերը գրասնյակից չի փախչում,
իրիդունը գնալուց հետո ել կարելի ա ստորա-
գրել:

ՏԻԳՐԱՆ.— Կարելի վոր ըլեր, դործը եստեղ յերեսի
վրա չեյի թողնա ու վեր կենա զնա: Ավետիք,
յես դնում եմ, զալիս ես, զու յել արի:

ՍԵԹՈ.— Դու գնում ես զնա, ել նրան ո՞ւր ես պոչի
նման հետելիցդ քաշ տալի տանում:

ԱՅԼԵՑ.— Դու մի քիչ քաղաքավարի խոսա...
ԱՐՃԱՎԱՀԻՐ.— Եդ խոսքը նա քեզ վիրավորելու մտքով
չի ասում...

ԱՎԵՏԻՄ.— Յես հասկանում եմ ինչ մտքով վոր ասում
ա: Խնդրում եմ դու նրա տեղ փաստաբանություն
չանես: Տիգրանը վոր չասեր, դու կարծում ես
յես չեյի գնալու:

ԱՐՃԱՎԱՀԻՐ.— Ասենք նա դործ ունի գնում ա, դու ինչի՝
համար ես գնում:

ԱՎԵՏԻՔ.— Վոնց թե ինչի՞ համար եմ գնում: Եդ
ի՞նչ հարց ա: Դու իմ գլուխ տե՞րն ես... դործ
ունեմ, գնում եմ...

ԱՀԱԿ.— (Մի կողմ) քյամանչի ձենը արդեն լը-
վում ա...

ՍԵԹՈ.— Դե լավ, դուք վոր գնում եք, բա ես դործը
ո՞վ պտի անի:

ՏԻԳՐԱՆ.— Բա եսքան խալիսը ինչացու ա՞:
ՍԵԹՈ.— Եսքան խալից մեկն ել դու: Ի՞նչի դու չես
ակնառուամ...

ՀԱՄԲՈ. — Մենք վոր աշխատում ենք, դու ել պահս
աշխատի: Ես խալիսը քու հոքարը չի, վոր
նախագահ ես չպտե՞ս աշխատի... մեղ հետ դու
յել պարտավոր ես աշխատելու:: Դու վերի ար-
տի ճածիկը չես, վոր զնենք առաջներս հոտ քա-
շենք:

ՆԱՐԳԻԶ. — Դու նախագահ ես, լայաղ չես անում դաս
աշխատես, կնդադ ել իրավունք չես տալի: Ինչ
ա, վախում ես կոները բարակի, չի բարակի.
խանում խաթունի նման տանը ենքան պարապ-
սարապ նստացրել ես, վոր Ռուսաստանի քառա-
սուն փթանոց խող ա դառել. հողս նրա դլիսին:

ՏԻԳՐԱՆ. — Ով խոսում ա, խոսա գոնե դու ելա մի
մի խոսա:

ՆԱՐԳԻԶ. — Պատճառը:

ՏԻԳՐԱՆ. — Պատճառը, վոր դու ինքու չես աշխատում,
սադ որը ծառերի հովում նստած երեխա ես պա-
հում...

ՆԱՐԳԻԶ. — Իմ երեխաս ա, պտեմ պահի. բա հո դեն
չեմ դցելու:

ՏԻԳՐԱՆ. — Երեխատեր ուրիշ կնանիք ել կան, ինչի՞
նրանք ձեն չեն հանում, դիմ դու ես խոսում:
Չեռքիցդ երկու կոպեկի բան չի դա, իսկ խոսա-
լուց երկու արշին լեղու յես հանում...

ՆԱՐԳԻԶ. — Աչքու ել ևմ հանում: Սոնքսուղ մարդ ես
երեխա ունեցողների դրության մեջ չես մըտ-
նում... արի դու նստի մի սհաթ իմ երեխաս պա-
հի, յես զնամ ձեր երկուսի չափ գործ անեմ,
հողս ձեր թամբալ դիսին...

ՏԻԳՐԱՆ. — Զենդ կորի, թե չե կդամ եղ յեղուդ տա-
կառից կհանեմ... (ուզում ե հարձակվել նրա
վրա, Սեթոն առաջը կտրում ե):

ՄՀԱԿ. — (Մի կողմ) .— Դանել աղի ասածը կատար-
վում ա...

ՄԵԹՈ. — Դե մի վորձի նրա վրա ձեռք բարձրացրու,
տես գլուխու քան իտեղից ա ջարդվում:

ՄՀԱԿ. — Այ կնիկ վեր կաց զնանք:

ԱՐՃԱՎ. — Սհակ բիձա, դու ինչի՞ համար ես դնում,
քեզ հո բան չասի՞ն:

ՄՀԱԿ. — Ինձ ասել հարկավոր չի... այ, սրանց ասա,
վոր չուն ու կատու են գառել, իրար միս են
ուտում, նրան ասա, վոր ըստեղ նստած սազ որը
չորն ա կարկատում. ես սեկին ասա, վոր առու-
վոտվանից կանգնել նամակ ա-կարգում. են մե-
կին ասա, վոր տարբ ինչ սկել ա, ծառի տակ
նստել մի դլուկ երսլա ա որորում... հարամ ըլի
ըսենց կովսովը. գնանք այ կնիկ. կովսովի տված
իները յես չուկեցի...

(Սանամի եետ դրւրս ե գնում)

ՄԵԹՈ. — Եսպես, վոր շարունակվի գիփ դուրս կդան,
կովսովում մի մարդ չի մնա...

ԱՐՃԱՎ. — Մսուրի շենքը ի՞նչի համար ա եսքան ուշա-
նում, յես չեմ հասկանում... ես բոլոր խո-
սակցությունը նրա պատճառով ա...

ՏԻԳՐԱՆ. — Դե վոր ուշանում ա, մեղավորը հո յես
չեմ.

ՄԵԹՈ. — Իհարկե վոր դու ես. բանի հետեւից վոր
չընկնես, կուշանա բա վո՞նց: Երկու քոսոս գե-
րանի պատճառով, երկու ամիս ա են չենքը կի-
սատ ա մնում... Եդ զարումար զերասներն ել
հո արտասահմանից շենք ստանում: Ես քասէլա-
ծումը ծառերը ինչքան ասես կա, գնացնք կըտ-
րեք ինչքան հարկավոր ա, ո՞վ ա ձեռքներու
բռնում...

ՀԱՄԲՈՒ — Յեթե դուք չուրհք չունեք դործ անելու,
դրաղ քաշվեք, թողեք մի ուրիշ մարդ դա եղ
գործն անի...

ԱՐՇԱՎ. — Սուտ չի ասում, ձեր անշնորքության
պատճառով: Կոլխոզի զործը հարկավոր չափով
առաջ չի դնում:

ՍԵԹՈՒ. — Սրանց պես մարդիկ վոր դործի գլուխ կանդ-
նեն, իհարկե վոր առաջ չի դնա:

ՏԻԳՐԱՆ. — Դրանով դու ինչ ես ուղում ասել:

ՍԵԹՈՒ. — Դրանով յես են եմ ուղում ասեմ, վոր երկու
ամիս ա ընտրություն ենք կատարել, բայց
ժինչե որս ծրագիր չի կազմված, աշխատանքի
բաժանում չի կատարված, կարդ ու կանոն չկա-
ռվ ուղում գալիս աշխատում ա, ով չի ուղում
գնում իր քեֆին ման ա գալի: Մեկը մյուսին
չի յենթարկվում...

ԱՐՇԱՎԻՐ. — Ճիշտ ա ասում. մեր կոլխոզում կարդա-
պահություն ասած բանը գոյւթյուն չնի:

ՍԵԹՈՒ. — Սշխատող ձեռքի համար մենք եստեղ ինչ
տեսակ նեղություն ենք քաշում. իսկ մեր կոլխոզի
ժյուս անդամները սաղ որը անդործ ման են դալի,
դու նրանց չես տեսնում, դու նրանց բան չես
ասում, իսկ իմ կնիկը, վոր մի սհաթ երեխին
քնացնելու պատճառով դործից յետ ա ընկնում,
դու նրա վրա բերանդ երկու արշին բաց ես ա-
նում ու հաղար մի ավել պակաս խոսքեր ա-
սում... բա քու գլխին խելք կա՞...

ԱՎԵՏԻՔ. — Եղ ինչի՞ դուք դրա մասին մեղ ժամանա-
կին չեք ասում:

ՀԱՄԲՈՒ. — Ձեր երեսը մենք տեսնում ենք վոր ա-
սենք...

ԱՐՇԱՎ. — Տեսնելու ի՞նչ կարիք կա. ցծացակում ա-
նունները կա, բավական ա... միելնույն ա, ես
դործը առանց նրանց ել յոլա ա գնում:

ԱՎԵՏԻՔ. — Դրանով դու ինչ ես ուղում ասել:

ԱՐՇԱՎ. — Դրանով յես եմ ուղում ասել, վոր դուք
ձեր տեղումը չեք, դուք ձեր կոչման բարձրու-
թյան վրա չեք կանգնած: Փոխանակ ուրիշներին
խրախուսելու, նրանց մեջ յեռանդ մտցնելու,
ընդահակառկը դուք ձեր վերաբերունքով ուրիշ-
ներին ել հուսահատեցնում եք և վատ որինակ
դառնում... Հաղարից մի անդամ եկել եք մի
յերկու ժամ դործ չեք արել, յերեսներդ չուռ եք
տալիս ու ղալի ձիու նման, թողնում հետ զը-
նում:

ՏԻԳՐԱՆ. — Գործ ունեմ գնում եմ:

ԱՐՇԱՎ. — Դու դործ ունես, գնում ես, իսկ սա ինչի՝
համար ա գնում:

ԱՎԵՏԻՔ. — Ուրեմն քու ասելով, կոլխոզի դործերը ա-
վելի վաժնի ա՞ քան գյուղապորհորդի՞: Այ տես-
նում ես, քու հասկացողությունն ինչքան ա:
Բջիջի քարտուղար ես, բայց թե կոլխոզի և
գյուղապորհորդի Փունկցիաներն ել չես հասկա-
նում: Ուրիշ տեղ ել եղ խոսքը կասես, վրիդ
կծիծաղեն, ամոթ ա:

ԱՐՇԱՎԻՐ. — Ի՞նչ ես ուղում ասել, չեմ հասկանում:

ԱՎԵՏԻՔ. — Են եմ ուղում ասեմ, վոր գյուղապորհորդ.
դը վլաստ ա, իսկ կոլխոզը ի՞նչ վիրել ա: Նա
եսոր կա, եզրոց կարող ա չլինի...

ՏԻԳՐԱՆ. — Գնանք: Ինչ ես կանգնել սրանց հետ խո-
սում, սրանց ձեռքին տասը կտոր չենք ըլելու...
(դուրս ե գնում):

ԱՎԵՏԻՔ — Գնանք, առանց են ել վրես դանգատվում
Են թե գյուղխորհրդի նախագան կանցելյարում
մի սհաթ չի նստում. թողնո՞ւմ են, վոր նստեմ:
(դուրս ե զնում):

ՍԵԹՈ — Դե արի ու ես տեսակ մարդկանց հետ աշխա-
տի... թո՛ւ ձեր մարդ ասողին...

(Կանգնում նրանց հետեւից նայում են)

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ե Ր

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում ե կոլլոզի գրասենյակի առջևի:
Աջ և ձախ փողոց. կենտորնում մի հարկանի շենք:
Փողոցի վրա յերկու փոքրիկ ու նեղ լուսամուտ և
մի դուռ: Դրան ճակատին ցուցանակ, վրան խո-
շոր տառերով գրած «ԿՈԼԽՈԶ»

Ց Ե Ս Ի Լ 1.

Դանել և Շմբ

ԴԱՆԵԼ — Յերեվում ա, վոր դու խելոք տղա յես.
կոլխողից թե վոր դուրս գասս, յես իմ աղջիկը
կտամ քեզ:

ՇՄԲ — ձի՞տ ես ասում, Դանել աղա, խափում հո
չե՞ս:

ԴԱՆԵԼ — Խափելու ի՞նչ ունեմ: Խոսքս խոսք ա. վոր
ասեցի կտամ, նշանակում ա, վոր կտամ:

ՇՄԲ — Դարս կդամ: Կոլխողը ինչի՞ս ա պետք:

ԴԱՆԵԼ — Ապրես, Լսիր, կարծեմ եսոր եստեղ ինչ
վոր ժողով ա ըլելու:

ՇՄԲ — Կոլխողի նախագահի դեկուցումն ա: Կոլխո-
ղի նախագահին ուզում են փոխեն: Զեկուցումը
հենց զրա համար ել դրել են: Կոլխողի աշխա-
տանքները նա լավ չի տանում: Նրանից դժողով
են: Դրա համար ել նրան ուզում են հեռացնեն:

ԴԱՆԵԼ — Ապրես, լսիր. Կոլխողի նախագահը, վոր
ասում են աշխատանքները լավ չի տանում, սուս

ա, չհավատաք, նա իբ աշխատանքները շատ
լով ա տանում, զուր տեղը եղ ինդ տղին ու-
զում են կոլխոզի նախագահի պաշտոնից գցեն,
ճի՞ք թողնա:

ՇՄՈ — Դե լավ, մենք ի՞նչ կարանք անի:

ԴԱՆԵԼ — Վոնց թե ինչ կարանք անի: Ընտրության
ժամանակ պահանջեք, վոր նրան չհեռացնեն:
Նրան հեռացնելով միւսույն ա, դրությունը չի
փոխվելու: Կոլխոզի գործերը վոր լավ չի գնում,
են ինդ մարդը ի՞նչ մեղավոր ա: Ճիշտ չե՞մ
ասում:

ՇՄՈ — Ճիշտ ես ասում:

ԴԱՆԵԼ — Ապրես: Ուրեմն յեղ քեզ վոնց վոր ասում եմ
դու գնա ընենց արա:

ՇՄՈ — Լավ, կդնամ վոնց վոր դու ասում ես ընենց
կանեմ... (գնում ե ներս):

Տ Ե Ս Ի Լ 2.

Դանել և 1 զյուղացի

ԴԱՆԵԼ — Լավ ժամանակին եկար: Յես քեզ ինչ վոր
ասել եմ, դու ընենց կանեմ: Հասկանում ե՞ս
ինչ եմ ասում:

1. **ԳՅՈՒՂ** — Դու արխային կաց, Դանել աղա, դու¹
վոնց վոր ասել ես, յես ընենց կանեմ, միայն թե
դու քու տված խոստումդ կատարես: Մի վոչխար,
երկու եծ: (Մատների վրա ցույց ե տալիս):

ԴԱՆԵԼ — Մի վոչխար, երկու եծ: (Նույնպես մատնե-
րով ցույց ե տալիս):

(Գյուղացին ներս ե գնում, իսկ Դանելը դուրս է
գնում).

Տ Ե Ս Ի Լ 3.

Աերս, Տիգրան, Ավետիք, Համբա և Մարգար (Տիգ-
րանն ու Ավետիքը խմած են)

ՏԻԳՐԱՆ — Յես իմ կյանքում վոչ սխալին եմ, վոչ
ել կյանքին... Իհարկե, յես Փինանսական
տեսակետով եմ ինդքին մտունում...

ՍԵԹՈՒ — Ինչ տեսակետով ել ուզում ես մոտեցի՛՛, ուշ
խալ բան ես ասում...

ԱՎԵՏ — Տիգրանի տեսակետին յես համամիտ եմ:
Գարասիմին մենք, վոր կոլխոզում ընդունենք,
զաղափարական տեսակետով դրսեվում ուժեղ
հակառակորդներ ել մենք չենք ունենա:

ՄԱՐԳԱՐ — Դրսեվում չենք ունենա, բայց թե ներսում
կունենանք:

ՏԻԳՐԱՆ — Դու ել մեթամ ամերիկա գիշար:

ՍԵԹՈՒ — Դուք են ասեք, գլխներդ, վրներդ ա՞, թե՝ մո-
ռացել ուրիշ տեղ եք թողել: Արա դուք չե՞ք ա-
մաչում, ըստենց ախմախ բան կասեն, յես չեմ
հասկանում: Գլխներիդ ձի ա քացի տվե՞լ, թե՝
հացի տեղ խոտ եք ուտում:

ԱՎԵՏԻՔ — Լեզուուդ քեզ քաշի, խոսքդ ճանաչի:

ՏԻԳՐԱՆ — Մենք քու հավասար մարդ չենք:

ՍԵԹՈՒ — Ինձ հավասար մարդ վոր ըլերիք, իհարկե
եղ խոսքը դուք չեյիք ասի: Դուք ձեզ յերեվա-
վակայում եք, և ձեր մասին շատ մեծ կարծիք
ունեք, բայց խելքներդ մեքան տերդ չի կորում,
վոր կուրակը, յեթե կոլխոզ մտնի, գել կը դառ-
նա մեզ կուտիք...

ՏԻԳՐԱՆ.—Եղ նշանակումա, վոր դու կայուն բայլչե-
վիկ չես։ Ուրիշ խոսքով, դու հակահեղափոխա-
կան ես կամ տրոցկիստ։ Լավագույն դեպքում,
ծածկված ողողիցիոներ, դրա համար ել մեր
ակտիվի ուժը դու թերապնահատում ես….

ՍԵԹՈ.—Հակահեղափոխական եմ թե տրոցկիստ, թող
եղ ուրիշներն ատեն, իսկ դուք վոր աջ թեքման
կողմանակիցներ եք, սրանում արդեն կասկած չը-
կա։

ՄԱՐԳԱՐ.—Աջ թեքման կողմանակիցներ վոր լէինեն,
Գարասիմի նման կուլակին կոլխոզում ընդունե-
լու առաջարկություն կանե՞ն։

ՀԱՄԲՈ.—Յես վոնց, վոր տեսնում եմ, սրանք Գարա-
սիմին ընդունելուց հետո, Դանել աղին ել պոտն
ընդունի։

ՏԻԳՐԱՆ.—Նրան, վոր չունդունենք բա քեզ ընդու-
նենք, տո ախմախ, վոր սկի չլինի Դանել աղան
մի անուն ելա ունի, նա վոր գա, հետը ահազին
կարողություն կրերի. իսկ դու վոչիներից ա-
վել ուրիշ բան ունե՞ս, վոր հետդ բերես…

ՍԵԹՈ.—Կոլումբոսի եշը թամքեց…ճրաքով ման դա-
յինք, կոլխոզի համար սրա պես նախազահ մենք
չելինք դտնի։

ՀԱՄԲՈ.—Դյուղխորհրդի նախազահն ի՞նչ պականա։

ՄԱՐԳԱՐ.—Յերկուսն ել կատես, լատարյում ընկած
ըլեն…

ՏԻԳՐԱՆ.—Դրանով դուք ի՞նչ եք ուզում ատել։

ՍԵԹՈ.—Դրանով մենք են ենք ուզում ատել, վոր կոլ-
խող կենտրոնին հարկավորա իմաց տանք, վոր
ձեզ միստավիա ուղարկին,, կամ թանդարա-

նում դնեն պահեն, ձեր հատն ու կտորը ուրիշ
անգամ սաղ աշխարհը վոր մանդանք, չենք ճա-
րի…(Համբոն ու Մարգարը ծիծաղում են)։

ԱՎԵՏԻՔ.—Ինչ եք ծիծաղում։

ՏԻԳՐԱՆ.—Թե գժվել եք, դնացեք գժանոց։

ՍԵԹՈ.—Գունդոցում տրանց չեն ընդունի. դուք դնա-
ցեք բաւլքի ձեղ ընդունեն…(Մարգարն ու Համ-
բոն նորից ծիծաղում են)։ Ինչե՞ք ծիծաղում, մի
մի բան եր, սխալվեցին, վնաս չունի, հարբած
մարդիկ են, ներելի ա։ Հարբած վոր ընելին
եղ խոսքը նրանք չելին ասի…

ԱՎԵՏԻՔ.—Ուրեմն, քու ասելով՝ ով վոր դուզ խոսքա
ասում, նշանակում ա, վոր նա հարբած ա՞։ Հա-
մարձակ կարելի ա ասել, վոր ձեր տեսակետը
սիալ ա։

ՏԻԳՐԱՆ.—Վոչ միայն սիալ ա, այլ թե ուզորտունիս-
տական տեսակետ ա՞։

ՍԵԹՈ.—Իսկ ձեր տեսակետը յերեվի կոմունիստական
տեսակետ ա։

ՏԻԳՐԱՆ.—Իմ համեստությունը ինձ թույլ չի տա-
լի, վոր եղ հարցի պատասխանը իմ ասեմ, թող
Ավետիքը ասի։

ԱՎԵՏԻՔ.—Իմ ասելուն ի՞նչ կարիք կա, շարքային
ամեն մի անդամ կուսակցության ճիշտ տեսա-
կետը իմանում ա. իսկ յեթե սրանք չեն իմա-
նում, թող գնան կովալենկոյի գրածը վերցնեն
կարգան, մենք կարդացել ենք…

ՍԵԹՈ.—Կովալենկոյի գրածի տեղ՝ դուք սխալվել
Բուխարինի գրածն եք կարդացել, նրա համար
եղ կուսակների սրտիցն եք խոսում և նրանց

բերած կարողությունով դուք հւզում եք կոլխաց
կաղմեք...

ՏԻԴՐԱՆ.—Բա վո՞նց եյիր ուզում, կառավարություն
նը մեզ փող չի տալի, իսկ մենք ել չունենք, իսկ
կոլխաց կաղմելու համար դու գիտես, վոր տ-
ռաջին հերթին մեզ փողա հարկավոր:

ՄԵԹՈՒ.—Ծո խելքի տոպրակ, կառավարությունը, յե-
թե փող տալու ըլի, ել դու ինչացու ես: Կոլ-
խողը դու ընենց հիմքերի վրա պտես դնի, վոր եղ
փողը մենք ինքներս ստեղծենք... իսկ կառավա-
րությունը իրա հերթին ամեն տեսակի աջակցու-
թյուն մեզ ցույց կտա, ինչքան վոր կկարողա-
նա...

ԱՎԵՑԻՔ.—Դլիմ ես ընկնո՞ւմ, եղ խոսքը նա ուրիշ
տեղա խիում...

ՏԻԴՐԱՆ.—Նշանակում ա, վոր յես կոլխողը լավ հիմ-
քերի վրա չեմ դրել և դրա համար ել ես որ դուք
իմ զեկուցումն եք նշանակել...

ԱՎԵՑԻՔ.—Ուրիշ խոռքով, սրանք քեզ ուզում են հե-
ռացնեն, քու տեղ մի ուրիշ մարդ դնեն: (Ներ-
սից ծափահարաւթյուն) .

ՏԵՍԻԼ 4.

ՍԵՐՈ, Մարգար և Համբ

ՀԱՄԲՈՒ.—Սրանց մեջքը պինդա երեկում :

ՄԱՐԳԱՐ.—Արշավիրն ել թարսի նման ստեղ չի:

ՄԵԹՈՒ.—Զահրումար դառնա, ըջկոմի պլենումն ել
հրավիրելու ժամանակ դտա՞վ. հմի վոր տա-
պալիւնք, մենք մեղալո՞ք կլինենք... Արշա-

միրը ստեղ ըլեր, դուքս կոչար ըստ եյության
կհասար, յես խոսալու չնորք չունեմ...

ՀԱՄԲՈՒ.—Գնանք ասենք եղ զեկուցումը թող ես ոք
հետաձգեն:

ՄԵԹՈՒ.—Վարչության նխոտում յես առաջարկեցի, իմ
առաջարկությունը չանցկացավ: Լսիր Մարգար,
ել ուրիշ ճար չկա. գնա Արշավիրին ասա թող
գա. կարձ ճամբով գնաս մի սհաթում կը դաք
կհասնեք:

ՄԱՐԳԱՐ.—Զահրումար դառնա, հեռախոս չլներ ծե-
ռած իմաց տայինք դար: (Տրեխների կապը ամ-
րացնում ե).

ՀԱՄԲՈՒ.—Ել խոսալու ժամանակ չի. վոտներու
յեղի:

ՄԱՐԳԱՐ.—Դե յես գնացի. դուք եղանդ մի քիչ զալ-
մազալ բարձրացրեք, ժողովը յերկարի մինչ
մենք դանք հասնենք:

ՄԵԹՈՒ.—Ըստենց կանենք, դու գնա... (Մարգարը
դուրս է զենում, իսկ նրանք մտնում են կոլխու-
զի գրասենյակ):

ՏԵՍԻԼ 5.

Դամել, Հեղինար և Յեղան

ԴԱՄԵԼ.—Տուն դնալու կարիք չկա. յես ձեզ հազար
անգամ ասել եմ, եղ քանդված տնից ձեռ քա-
շեք:

ՀԵՂԻՆ.—Մի անդամ եմ տնից դուրս եկել, քնթիցս
հանցեին... քիչ առաջ տեսնեյիր հարեվանի
աղջկերքը ինչ խոսքեր եյին ասում.

ԴԱՆԵԼ.—Բամբառանքները լսելու համար ականջներդ
սուր ա: Խալիսի պատճառով յես սրան դուսաղ
չպտեմ անի, հերիքա ինչքան դու նրան փակ
պահել ես: Արդեն չափահաս աղջիկա դառել,
հարկավոր ա նրան աղատություն տալ. թող
գնա ամեն ժամանակ սրանց ժողովներին մաս-
նակցի, տեսնի նրանք իրանց ժողովներում ինչ
են խոսում, ինչ են ասում, ամեն բան իմանա,
դա իմացածը մեղ ասի:

ՀԵՂԻՆ.—Զեմ հասկանում:

ԴԱՆԵԼ.—Իհարկե, չես հասկանա, վոտը կոտրած հա-
վի պես սաղ որը տանը նստել ես. չես տեսնում
դուրսը, ինչերա կատարվում:

ՀԵՂԻՆ.—Քու ասած խոսքերը, յես ինչպես տեսնում
եմ, դու մոռացել ես, այ մարդ, դու չեյի՞ր,
վոր ասում եյիր, տնից դուրս չը դաք, նրանց
հետ չը խոսա՞ք:

ԴԱՆԵԼ.—Առաջ ըստենց եր հարկավոր, հմի ըստնցա
հարկավոր:

ՀԵՂԻՆ.—Առաջ վորնա՞ , հմի վորնա . ախր, դու ա-
սում եյիր, վոր կամունիստները ես որ եղուցա
զնում են, նրանց որենքները ժամանակավորա:

ԴԱՆԵԼ.—Շատ ել վոր ասել եմ, ամեն մի ասած բան
հո չի կատարվում: Լսիր, կամունիստները ել
չեն զնում: Սրանց որենքները հիմնավորվեց.
ուղենք չուղենք, եղ որենքներին պտենք հար-
մարվի, աղջի յես քեզ իրավունք եմ տալի, ե-
զուցվանից կգնաս կոմումոլ կդրվես...

ՀԵՂԻՆ.—Այ մարդ դու եղ ի՞նչ ես ասում...

ԴԱՆԵԼ.—Թե կարա՞ս կուսակցության մեջ դրվի...
կամ թե մի կոմունիստ փեսացու ձարի, նրա

դրա պառկվի, յես զեմ շեմ... կոմունիստները
վատ մարդիկ չեն:

ՀԵՂԻՆ.—Ես մարդը դրուստ, վոր խելքից ըլելա:

ԴԱՆԵԼ.—Յես քեզ բան եմ ասում, դու ելի քու եշտ
ես քում: Լսիր եղտեղ ժողովա կա. Յեղսոյին
հետով վերցրու զնա եղ ժողովը:

ՀԵՂԻՆ.—Այ մարդ ախր...

ԴԱՆԵԼ.—Ել ախր, մախրի ժամանակ չի. յես քեզ ինչ ա-
սում եմ, դու ընենց արա. Շմավոնի, Գարասի-
մի, տերտերի ել ուրիշ մի քանի կնանիք գնացել
են, ինչ վոր հարկավորն ա յես նրանց ասել եմ,
հենց վոր տեսնեք նրանք ձեռքները բարձրաց-
նում են, դուք ել ձեռքներդ կրարձրացնեք...
դե ել միք ուշանա, իսկական ժամանակն ա,
գնացեք... (դուռը կամաց բաց և անում, նրանց
ներս կրում, իսկ ինքը լուսամուտի տակ դրած
ֆարի վրա նստում և համբիչը ձեռքին շարու-
նակ գցում):

Տ Ե Ս Ւ Լ 6.

Դանել, Սիակ հետո Գարասիմ և տերտերը.

ՍՀԱԿ.—Վոնց վոր երեվում ա ժողովից յես ուշացել
եմ (ուզում ե ներս զնա):

ԴԱՆԵԼ.—Սհակ բիծա չի կարելի, հետ դառ. ժողովը
դոնփակա:

ՍՀԱԿ.—Բա դուռը ինչիա՞ բաց :

ԴԱՆԵԼ.—Բաց պտի ըլի բա հո կողակեքով չեյի՞ն կող-
պելու: Դունփակ, նշանակում ա, վոր ամեն մար-
դու չի կարելի:

ԱՀԱԿ. — Աի կարելի, յես ել չեմ զնոտ: (Կառամ է չի բուխը լցնում) .

ԴԱՐԱՄ. — Այ մարդ դու վորածեղ ես.

ՏԵՐՏԵՐ. — Քու հետեւիցը երկու սհաթա մենք մասն ենք գալիք.

ԴԱՐԱՄ. — Ի՞նչ արիր.

ԴԱՆԵԼ. — Ինչ վոր հարդկալորն եր, արի, (ականջին) նբանց ուղարկեցի ներս, սրան ել իսպիրն եմ, վոր ժողովը դռնիակ ա:

ՏԵՐՏԵՐ. — Եսքան ժամանակ ժողով չի՞ սկսվել:

ՈՀԱԿ. — Սկսվել ա:

ՏԵՐՏԵՐ. — Բան ինչի ես նստել, ինչի՞ ներս չես զը նում:

ՈՀԱԿ. Դռնիակ ա:

ԴԱՐԱՄ. — Սուս արա. զալմաղաները սկսվել ա ...

ՏԵՐՏԵՐ. — Տեսնես զալմաղաները ինչի՞ վրա ա:

ԴԱՆԵԼ. — Ինչի՞ վրա ուղում ա ըլի. կուժն ու կուլան վերջում մեր գլխին ա կտրիցելու, կոլխողի նախաղահի դեկուցումն ա: Կարծեմ Տիգրանին նախագահությունից ուղում են հանեն:

ՏԵՐՏԵՐ. — Բա ովա՞ նշանակվում նրա տեղ.

ԴԱՆԵԼ. — Մտքներն ա Սեթոյին նշանակեն նրա տեղ:

ՈՀԱԿ. — Սեթոն Տիգրանից դոչաղա:

ԴԱՆԵԼ. — Ղոչաղությունը չի կարելոր: Տիգրանը յուլա դնացող մարդ ա: Իսկ Սեթոն կատաղած շումա. նրա հետ խոսալ չի ըլում:

ՏԵՐՏԵՐ. — Վոր ըտենց ա, ելի Տիգրանը իրա պաշտոնին մնար լավ եր:

ԴԱՆԵԼ. — Ինչ ես իմանում, բաւեր հենց մնում ա (ա-

կանչին) միջնորդեր ձեռք = առևված ... զաւ միամիտ կաց: Ես մի խոսք եր առեցի. Հմի կը աեսնես:

ՈՀԱԿ. — Պա՞հ, քու տիրու հերն անիծած, չուն ե՞ր թե կատու, եկալ ես արանքով անցկացավ:

ԴԱՐԱՄ. — Ուրա՞ , ըստեղ վոչ շունա երելում, վոչ կատու: (Այս այն կողմ ե նայում) .

ԴԱՆԵԼ. — Միջակների աչքին ամեն տեղ շուն ու կատու ա յերելում (ներսում աղմուկ, իրարանցում):

ՀԱՄԲՈ. — (Ներսից) ընտրությունը ես որ հետաձը գեք:

ԴԱՆԵԼ. — Հետաձգելու կարիք չկա, անցեք ընտրության:

ՀԱՅՆԵՐ. — (Ներսից) հետաձգելու կարիք չկա. անցեք ընտրության (աղմուկ):

ՏԵՐՏԵՐ. — Պանել աղա չնորքով մարդ ես:

ԴԱՆԵԼ. — Շնորքի բան չի, եսուեղ ուրիշ հաշիվ կա: Կամունիստները ասում են, ո՞վ—ո՞ւմ, այսինքն, ետ նշանակում ա, վոր մենք մեր գործերը ընենց պոտի դասավորենք, վոր հավիտյանս հանդիսենից չլինենք... Այ խոսքի որինակ, յետ ըստեղ նստած եմ, ենուեղ ընտրություն ա կատարիլում, բայց թե գործերը առաջուց ընենցա դասավորված, վոր ո՞ւմը վոր յետ ուղենամ, նաել կընտրվի... հասկանում ես իս ինչ ե՞մ առում ...

ՈՀԱԿ. — Խոսքի որինակ հմի դու ո՞ւմն ես ուղում վոր ընտրվի:

ԴԱՆԵԼ. — Եես ուղում եմ, վոր Տիգրանը նորից մնաիր պաշտոնում:

ԶԵՅՆԵՐԻ .—Մենք ուզում ենք, վոր ընկեր Տիգրանը
նորից մնա իր պաշտոնում... (ներսում ծափա-
հարսկայուն, աղմուկ, իրարանցում) :

ԴԱՆԵԼ .—Ընտրությունը վերջացավ. վեր կացեք զը-
նանք. մեր եստեղ մնալը յետ կարծում եմ, վոր
սրանից հետո ավելնորդ ու :

ԳԱՐՍՍ .—Նրանք արդեն դուրս են գալիս... զնանք :

ՏԵՐՏԵՐ .—Գնանք... (յերեխով դուրս են գնում) :

ՍՀՈՒԿ .—Նրանք գնացին յետ ինչի եմ նստել... լավ չա-
րի վոր կոլխոզից դուրս եկա... (դուրս ե գը-
նում) :

Տ Ե Ս Ի Լ 7.

Համբո, Սերո, Տիգրան, Ավետիք, Նարգիզ, Հրուշ,
Զմրուխտ և ուրիշներ

ՍԵՐՈ .—Դուք ինչ ուղում, եք ասեք, կուլակների մա-
տը ես բանում խառնա... .

ԱՎԵՏԻՔ .—Ասածներդ հիմնավորելու համար փաստ
ա հարկավոր...

ՀԱՄԲՈ .—Հրես փաստ. ես կուլակի կնանիքը ի՞նչ
գործ ունեն մեր ժողովում. նրանք ի՞նչի՞ հա-
մար են եկել. նրանց ովա՞ հրավիրել:

ՍԵՐՈ .—Յեթե հրավիրված չնելին, չելին դա: Տես
զո՞նց փախչում են... (կուլակների կնանիքը
իսկովն հեռանում են) :

ՆԱՐԳԻԶ .—Նախադահից հրավիրատումս ստացած կլի-
նելին.

ՏԻԳՐԱՆ .—Դուք ի՞նչքան ուղում եք խոսացեք, յետ
ու ընտրվեցի:

ՍԵՐՈ .—Վոր ընտրվեցիր, կոլխոզի տեր ու տիրական
չղառար, յեթե սրանից հետո կոլխոզի գործե-
րը վրոց վոր հարկավորնա ընենց չես տանի,
նախադահի պաշտոնում մի սհաթ չես մնա. պո-
չեցու կրոնենք, սատկած կատվի նման դուրս
կաղըտենք: Խելքը ուր ա՞ դնում...

ՏԻԳՐԱՆ .—Եղ քեզ չի վերաբերվում, թե յետ իմ գոր-
ծը ինչպես կտամեմ... կոլխոզի նախադահը յետ
եմ, վոր ուղում եմ, ընենց ել կանեմ, քու
ասելը ինձ պետք չի: Մի անձնյա ղեկավարու-
թյան մասին, ինչպես երեվումա, դու գաղա-
փար չունես: Ավետիք ինչի համար ես կանգնել.
Տենք եսորվանից կոլխոզը պաշտոնապես համա-
տարած ենք հայտարարում:

ՍԵՐՈ .—Եղ հարցը մեղ մոտ դեռ քննված չի:

ՏԻԳՐԱՆ .—Խնդրում եմ դու ինձ չխանդարես. Ավե-
տիք, զյուղխորհրդի նախադահ ես. կարգադրի,
վոր կոլխոզում ով չի գրվել թող գա գրվի, իշ-
խանության անունից կհայտարարես, ով վոր
չդրվի, նա հարկահեղափոխականա, և գնում ա
դեպի կապիտալիզմը... իսկ ով վոր գրվումա,
նա հեղափոխական ա և գնում ա դեպի սոցիա-
լիզմը...

ԱՎԵՏԻՔ .—Այ խալիս, ինչի՞ համար եք կանգնել, կու-
խոզի նախադահ, ախր եղ հայտարարությու-
նը ձեզ համարա անում. զիտակից մարդիկ եք,
խոսքը ձեզ տասնանդամ կրկնելու ի՞նչ կարիք
կա, եկեք գնանք ժողովրդին հավաքենք և իմա-
նանք ով չի գրվել իմաց տանք, վոր նրանք գան
դրվեն...

(Բացի Տիգրանից, Սերոյից և Համբոյից բո-
լորը գնում են):

Ցիգրան, Սեբո և Համբ

ՍԵԹՈՒ. — Դու ինքնապլուխ բան ես բռնում: Եղ մասին դեկավար որդաններից մենք համապատասխան հրահանդ չենք ստացել:

ՀԱՄԲՈՒ. — Ճիշտ առ առում. կենտկոմը բալքի համաձայն չի:

ՏԻԳՐԱՆ. — Կենտկոմը ավելի ուրախ պետք ե լինի. ուսուը բարձրացնում ենք, ոո չենք քաշացնում: Բայց թե ձեր միտքը յես հասկանում եմ: Արշավիրը վոր ստեղ չի, զրա համար ել դուք թերահավատությամբ եք վերաբերվում: Առանց նրա ինիցիւստիվի դուք վոչինչ չեք ուղում անել: Կարծում եք զործը կիսափանվի և գլուխ չի գա:

ՀԱՄԲՈՒ. — Միթոմ սուտ ա՞~

ՏԻԳՐԱՆ. — Այ տեսնում ե՞ք, վոր ասում եմ: Դուք ինձ թերապնահատում եք, նրա համար ել նախագահի վերընտրության հարց եյթիք բարձրացրել: Բայց տեսաք, մասսան իմ կողմն եր: Հեղինակություն եմ վայելում: Յես Արշավիրից պակաս գլխի տեր մարդ չեմ: Կուսակցության ծրագիրը կարդացել եմ. պրոֆինպլան, սոցմրցում, պետիետկա, բանրիգադադ եղ բոլոր հարցերին յես ել տեղյակ եմ...

ՀԱՄԲՈՒ. — Արա Սեթո, դու կանգնել մտածում ես, բայց թե նրանք գնացին հրեն նաղարա դուռնան առաջներն արած ժողովրդին հազաքել բերում են:

ՏԻԳՐԱՆ. — Մտածելու բոլորովին կարիք չկա.

ՍԵԹՈՒ. — Ցավն ել հմեց եւու, վոր դուք առանց մտածելու եք բանը անում: Յես դաշմանում եմ ամեն որվա լրագրում հենց զրա մասին ա գրվում: Եղ գրածները բա դուք սկի չե՞ք կարդում:

ՏԻԳՐԱՆ. — Խոսքը հնչի մասին ա:

ՀԱՄԲՈՒ. — Խոսքը ջալադյոգության մասին ա:

ՏԻԳՐԱՆ. — Լեզուդ քեզ քաշի, խոսքէ ճանաչի... մենք քալադյոգություն չենք անում...

ՍԵԹՈՒ. — Քալադյոգությունը պոչավոր ու պողավոր չի ըլում...

ՏԻԳՐԱՆ. — Որինակ.

ՍԵԹՈՒ. — Բա սա որինակ չի. դմիսիդ զոր նա տալի, չափադանցության հետեւից ես ընկնում և կուսակցության դիրեկտիվը աղավաղում:

ՏԻԳՐԱՆ. — Այսինքն.

ՍԵԹՈՒ. — Դե յես վո՞նց ասեմ, հազար ու մի որինակ կա...

ՏԻԳՐԱՆ. — Հաղարից մեկը ասա.

ՍԵԹՈՒ. — Այ հենց մեկը են, վոր կոլխող գրվելը կամ մալոր պարի ըլի. հարկադրելու և կարչական միջոցների դիմելու կարիք չկա: Կամ թե, չե եղ զահրումար համատարածը ամեն տեղ ոո չի կարելի: Դրա համար առաջուց նախապատրաստական աշխատանք ա հարկավոր տանել, իսկ եղ աշխատանքը հարկավոր չափով մենք չենք տարել:

ՏԻԳՐԱՆ. — Որիները գու կարծում ես եւ աշխատանքը տարել են, վոր համատարած են հայտարարել... մի գնա տես, ամեն տեղ ոխտանասուն,

առ Թանգառում լատիշարի մն հասցըել, Պենտկում
ինչի՞ Նրանց բան չի ասում: Յեթե ուրիշները
տիտանասում, ութանասում են հասցըել, մենք
վոր քիչ զոռենք, հարյուրի կհասնենք... մենք
ուրիշներից ի՞նչով ենք պահաս... (նադարա
գուուի ձայն):

ԶԱՅՆՆԵՐ.—(Խորից) կեցցե համատարածը, կեցցե
հարյուր տոկոս:

ՏԻԳՐԱՆ.—Լսում ե՞ս, ինչի՞ ուրիշ բան չեն ասում,
ինչի՞ կեցցե համատարածը, կեցցե հարյուր
տոկոս են ասում: Դրանից դու ի՞նչ պտի յեղ-
րակացնես: Նրանց ասելը ինչա՞ նշանակում,
դա նշանակում ա, վոր համատարածը բոլորի
ժանկությունն ա, բոլորի պահանջն ա, յեթե եղ
ժանկություններին, եղ պահանջներին մենք
ընդհառաջ չդնանք և եղ շարժումը չը դեկավա-
րեն. մեզ վոչ միայն աջ թեքման, այլ թե ո՞վա
իմանում ի՞նչի մեջ մեղադրեն... (դուրս ե զը-
նում):

(Սեբոն և Համբոն կանգնած միմիանց լուր նա-
յում են):

Վ. Ա. Ր. Գ. Ո. Ւ. Յ. Բ. Ր.

ԵԿՐՈՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է Դամել Աղի մարաֆի առաջ:
Յերեկո յե: Մարգարը յերգելով յերկու քրոց (դար-
մանով լիքը) դուրս ե բերում դնում դռան առաջ:
Սիակը փողոցի հակառակ կողմից նույնպիս դարմա-
նով լիքը քրոց շալակած ինքն իրեն խռովելով գալիս ե
անցնելու:

Տ Ե Ս Ւ Ի Լ 1.

Մարգար և Սիակ

ՍՀԱԿ.—Թեկուզ հաղար անգամ ասա, նա իրա իմա-
ցածը անելու ա: Դրուստ, վոր աշխարհը շուռ
ա եկել:

ՄԱՐԳԱՐ.—Շուռու եկել, բայց թե եղ շուռ գալը դու
վո՞նց ես հասկանում, Սհակ բիճա:

ՍՀԱԿ.—Ես ընենց եմ հասկանում, վոր ես կնիկ այ-
մատները շատ են երես առել (քրոցը վեր ե
դնում):

ՄԱՐԳԱՐ.—Սհակ բիճա, վոնց վոր երելում ա, ուրիշ
կնանիք քեզ նեղացըել են:

ՍՀԱԿ.—Ուրիշ կնանիքանց հետ յետ ի՞նչ հաշիվ ունեմ:
(Ասում ե Տարին):

ՄԱՐԳԱՐ.—Բայ եղ ովա՞ քեզ նեղացըել (Ասում ե
Արտ կողքին):

ՄՀԱԿ.—Կոլիսոց եմ քրվել. ինձ ո՞վ կարա նեղացնի: Անդաջ արա: Գնացել եմ տում, վոչ ճրազնա վառված, վոչ ջուրն ա բերված. վոչ տումն ա ավլված, երեսի վրա թողելա ամեն ինչ, գնացել ա վո՞ր ջանդամը կորել, չեմ իմանում: Քեզ եմ հարցնում բա սա կարքա՞ն, բա սա ո՞րենքա... բալքի յես եմ ու սոված ծարավ մեռնում եմ. բա են քանդվածումը մի կտոր թրջած հայ չլինի՞ն, վերցնեմ ուտեմ. մի ստաքան ջուր չըլլինի՞ն, վոր վերցնեմ խմեմ... (չիրուխը լցնում ե ու ծխում):

ՄԱՐԳԱՐ.—Հենց դրա համար ել նեղացել ե՞ս: Տնաշեն, ճրաք վառելը կամ թե ախարից մի վոտ ջուր բերելը ինչ մի դժվար բան ա. վերցրու ինքդ արա: Սանամ մոքիրը հալբաթ ժամանակ չի ունեցել, կամ թե չե մեր շեֆերը ես որ եկել են, կինո մն շանց տալի, բալքի ընդի ա գնացել...

ՄՀԱԿ.—Դրանք ել հո թամամ չորը հանեցին: Որը մի մահանա են բռնում, վեր կենում պալիս: Գալուց ել հո մեկը կամ երկուաը չի գա. թարտնով են դալի: կամես, ոսի զուշուն ա: Բանվորները գալիս են, կոմիտեն ա դարկել, կոմտումոները գալիս են, կոլլեկտիվն ա դարկել: Կնանիքը գալիս են, կին բաժին ա դարկել:

ՄԱՐԳԱՐ.—Դե լավ, նրանք իրանց քեֆի համար հո չե՞ն դալի:

ՄՀԱԿ.—Գիտեմ ինչի՞ն համար վոր դալիս են: Թող զան, բան չեմ ասում, դան գեղը լուսավորեն, մեզ քոմադ անեն, մի խոսքով մեզ ինչ ուգում են թող անեն, միայն թե կնիկ արմատների, հետ

գործ չունենան: Առանց են ել ես մեր կնիկ արմատների հետ խոսալ չի ըլում, դրանք ել մի կոնեցնեն գալի նրանց որում-կապում ջաններիս ու իրանք թողնում գնում:

ՄՀԱԿ.—Բատենց ել հարկավոր ա: Ընկեր Լենինը ասել ա, վոր խոհարարներ ել յերկիր պտեն կառավարի, իսկ յերկիր կառավարելու համար, նրանք ամեն բան պտեն իմանա: Զիմացած բանն ել պտեն ուրիշներից սովորի:

ՄՀԱԿ.—Զե, ընկեր Լենինի հետ եղ մի բանում յեա համաձայն չեմ: Կառավարական գործերում կը-նանիքը, վոր ակտեցին խառնվել, մեր գործերը լավ չի գնա... (չիրուխը դատարկում ե դիմում գրապանը).

ՄԱՐԳԱՐ.—Մհակ բիձա, ուրիշի կշտի ել վոր դու ըդենց խոսաս, քեզ կմեղադրեն. կասեն կուլակ-ների աղղեցության տակ ա ընկել...

ՄՀԱԿ.—Կուլակների հերն անիծած, իմ խելքը վոնց վոր կտբում ա, ընենց ել ասում եմ: Յես կոլիսողի անդամ եմ, կուլակների հետ յես ի՞նչ հաշիվ ունեմ:

ՄԱՐԳԱՐ.—Վոր կոլիսողի անդամ ես, Մհակ բիձա, յես դրա համար քեզ բան չեմ ասում, յես մենակ են ասում, վոր դու Խորհրդային Խշանության որենքները ամբողջովին կարող ա պատահի, վոր չիմանս, բայց թե ես մի բանը դու պտի իմանս, վոր սրանից հետո քու կնիկը մենակ քու տան գործը չպտի անի...

ՄՀԱԿ.—Ես ի՞նչ ա ասում... յես կնիկ եմ բերել, վոր

իմ առան վործն անի, բաւ վո՞չը... (քրոջը շայլում են և յերկուսով միասին դուրս են գընում: իսկ Դամելին ու Հեղինարը հակառակ կողմից մի մեծ սադուկ յերկու կոկմից բանած բըրում են).

ՏԵՍԻԼ 2.

Դամել և Հեղինար.

ՀԵՂԻՆԱՐ.—Կոներս կոտրվեց. այ մարդ. վեր դիր մի քիչ դինջանամ...

ԴԱՄԵԼ.—Ուղարի պարը կարծումչի վրա կը զա, վոր առել են, թամամ քունն ա. Յես չեմ իմանում, ես զահրում առը վոնց ուաղ անեմ, վոր մարդ չտեսնի, դու քու դինջանալու մասին ես մտածում, դե Հմբի Ջինչացի ինչքան ուզում ես: Բատկ աչքեց հեռու տեղ ա, գնացող նեղող չկա: (Սնունկը մարտիք դանի առաջ վեր են դնում):

ՀԵՂԻՆԱՐ. Զահրում ար դառնա, ես ել կը մանք ա, վոր մենք ենք քաջում...

ԴԱՄԵԼ.—Այոր քրդային յերկում ուրիշ կերպ չի կարի: Կատաղած գաղաններ են դատել ընկել ջաններս: Այս մի նոր որենք են հնարում և իմր չխացված պորտֆելը տալի կոմառուկները ու ու գալի գլխիդ կամդնում: Ես անհատական տուրք ա, պտես տա, ես յեկամուսին տուրք ա, պտես տա. Ես զահրու-դիրի ա, պտես տա. զի արի ու ապրի: Հոգի համատից հանում են, թողնում ե՞ն վոր ապրես: Ծուն շանվորդիք: Մի

թամաց ել պահանջում են, կարծես, իրանց հորից մեռացած ժառանգություն ա, բերել ինձ պահ են այլել, վոր յերբ օտղեան գան տանեն:

ՀԵՂԻՆ. — Ուրիշ կատավարության ժամանակ ել, կարծեած եղ հարկն ու նալոգը դու ավել ես:

ԴԱՄԵԼ.—Նրանց տվել եմ չատ ու ըախ եմ, սրանց ել տամ: Ինչի՞ տամ: Ես քան տարի կյանք մաշեմ, արյուն քրտինք թափեմ, սեվ որվա համար մի քամի կուլեկ փող հետ դցեմ, հետո վերցնեմ սըրան-նրան տամ, հետո յետ սոված մնա՞մ, պատճառը...

ՀԵՂԻՆ. — Զեր առաջ առաջ շիշու կուլեմ.

ԴԱՄԵԼ.—Եղ կուլու գարդից չի՞ վոր տան ելած յերածը հառլաքել եմ բերել: Եղ անիծվածների վրա հույս գնելու չի: Նրանց աչքին ինչ վոր ընկավ, պրծա՞վ, ել տերը չես, կդան կիերցնեն կը տանեն:

ՀԵՂԻՆ.—Դե լով, տնից տանողը ըստեղից չի՞ տանի:

ԴԱՄԵԼ.—Տեղը վոր իմանան, իհարկի կտանեն, բայց թե ո՞ւմ մտքի կզա, թե մարագում դարձանի տակը բան ա դրած... ե՛կ. հարամեց,, այ կնիկ, ես քանովածումը ել տպրել շարժի... (Կառամ և սնդուկի վրա և մտածում):

ՀԵՂԻՆ.—Այ մարդ, բա ել ո՞ւր ենք մնում, առն ու տեղ ծախենք, զնանք ուրիշ յերկիր:

ԴԱՄԵԼ.—Եղ առաջաց պահելինք մտածած, հմի արդին ուշ ա: Դե ել մի նստի, վեր կաց զնա. զիչ հետո տեղ ուրիշ մարդեկ են քալու, մինչն նրանց պալը, յետ տանեմ սրանք տեղավորեմ: Հսիր, Ծեղառյին բան չտուս, թե չե դյաղի ան-

գաջը կնկնի ել տերը չես։ Եղ գյաղան ես
դարձանով մեքը քթոցը ինչի ա՞ թողել ստեղ։
Ես ճամբով հազար ու մի տնասակ շուն ու գել ա
գնում դալի, վոր լիրցնեն տանեն հետո՞...

ՀԵՂԻՆ. — Դե լավ, ինձ վոր ասում ես յես ի՞նչ անեմ.
Հալբաթ լեր! ու քթոց ա ըլել, մեկը տարել ա,
վոր հետո դա եղ մյուսն ել տանի։ (Դուրս ե գը-
նում) .

ԴԱՆԵԼ. — Կարծես մեջքը կկոտրվեր, վոր յերկուաը
միասին տաներ։ (Սնդուկը վելցնում տանում
ե մարաքը։ Իսկ Գարասիմն ու տերտեր հակա-
ռակ կողմից գալիս են) :

ՏԵՍԻԼ 3.

Գարսիմ, տերտեր և հետո Դանել

ՏԵՐՏԵՐ. — Ասում ես, եղ եկողը վրկության կոմիտե-
յեցն ա՞.

ԴԱՐԱՄԻՄ. — Դանել աղան ըտենց ե բասում։ Ես ո՞ւր
ա, ինչի՞ բա ինքը չի եկել։

ՏԵՐՏԵՐ. — Մեզ ասում ա չուշանաք, իսկ ինքը ուշա-
նում ա։

ԴԱՆԵԼ. — (Ներսից) Դանել աղան պարտաճանաչ մարդ
ա, նա չի ուշանա։ (Դանելը մերս ե գալիս) .

ՏԵՐՏԵՐ. — Այ մարդ, զու եղ տեղ ինչ ե՞ս չինում։

ԴԱՆԵԼ. — Ճքնում եյի։ Ասի մի մտնեմ տեսնեմ դար-
ձանը տավարին ես ձմեռ հեցիք ա անելո՞ւ, թե՝
նորից պտեմ առնի։

ՏԵՐՏ. — Տավարի համար դուք մասածում եք, իսկ ինձ
համար սկի չեք մտածում։ Ելած չելած մի տեր-

տեր ունեք, նրա հոգսը չեք ուզում քաշեք։ Եհ
վնաս չունի։ աշխարհի բանը ասում են նարդ-
վան ա, մեկը վոր բարձրանում ա, մյուսը՝ պտի
քաշանա։

ԴԱՆԵԼ. — Ուրեմն, դու բարձրանալու հույս ունե՞ս.

ՏԵՐՏ. — Բա հո ըսենց չեմ մնա։ Եղ բախտի դուռը
հալբաթ մի որ ել մեզ համար կլացվի, աստված
ըղործած ա...

ԴԱՐԱՄ. — Ասուռ հերին ել անիծած, ոխտանասուն տա-
րի ա դու նրա վիեշից բռնել ես, ինչի՞ տեր ես.
ուղտի պոչի նման վոչ երկարում ես, վոչ կար-
ճանում։

ՏԵՐՏԵՐ. — Առաջ ինչս եր պակաս, տասը քեզ նմանե-
րին կառնեյի կծախեյի։ Հիմա, վոր ըսենց ինեղ-
ճացել եմ։ Բայլեկվիկների վիզը կոտրվի, նրանք
վոր յեկան, իմ բանը թարսվեց։ Եղ Զագս ա
թե ինչ զահրումարա, մեջ լնկավ, ել վոչ հար-
սանիքա ըլում վոչ կնունք. մեռելն ել հո. սովո-
րություն ա դառել, կուսակցական, թե անկու-
սակցական առանց տերտերի յեն տանում թա-
զում

ԴԱՐԱՄ. — Բա ել ո՞ւրես կանգնել, փարաջեղ հանի,
գնա քեզ համար մի ուրիշ զրազմունք ճարի, սո-
ված հո չպտե՞ս մնա։ Տերտերությունը տեսնում
ես, վոր իսոդիշ ընկել ա. գնա բորսայում
գրվի, վախտին քո գլմի ճարը տես. միենույնա,
տերտերությունով դու բան չես դառնա։

ԴԱՆԵԼ. — Նա ասեց զու ել հալատացի՞ր։ Աշխարհիս
յերսին հոգեվորականներիցն ել ստախոս, աչ-
քածակ մարդ մի տեղ ել չկա։ Աշխարհի հարս-
տությունը, վոր վերցնես տաս դրանց, ելի չեն

Կշտանա: Մի գլուխ կասեն տուր... Ասր ու ծոր
տերտերի փոր, վոր ասել են սուսա չեն ասել:

ՏԵՐՏԵՐ.—Դրանով դու ի՞նչ ես ուզում ասել.

ԴԱՆԵԼ.—Դրանով յես են եմ ուզում ասեմ, վր տեր-
տերների ասած տասը խոսքից մեկը չի կարելի
հավատալ: Այ խոսքի որինակ հենց մեկը դու:
Եղբան գանդատվում ես, բայց ի՞նչ վոսկի երծա-
թը մեշոկներով ո՞վա իմանում վո՞րտեղ ես դրել
պինդ պինդ պահել:

ՏԵՐՏԵՐ.—Ասումա, շնուռ արա դողին բռնի, թե չե
գողը քեզ կրոնի: Հմի քուննա: դու վոր պահել
ես, հենց իմանում ես յես ել եմ պահել: Քու
արշնով ուրիշներին ինդրում եմ ըջչափես:
Յես քեզ ասում եմ, վոր բայլէվիկները, ինչ
վոր յեկել են, յեկամուտիս աղբյուրները որ որի
վրա կտրվում ու ցամաքում ա...

ԴԱՆԵԼ.—Վոչ հավատում սուտ քրիստոս: Քու յե-
կամուտի աղբյուրները ինչքան ել վոր կտրվի ու
ցամաքի, դու ընենց խորամանկ աղվեսն ես, վոր
սրան-նրան խաբելով գլուխդ կպահես:

ՏԵՐՏԵՐ.—Մրանց մտիկ, արար աշխարհ իրանք են թա-
լանում: Իրանք են կողովում, ելի իրանք են
կանգնում ուրիշի վրա խոսում:

ԳԱՐԱՍ.—Մենք սպեկուլյանտ մարդիկ ենք: մենք ինչ
վոր անենք մեղներելիս, իսկ դու հոգեվորա-
կան ես—քրիստոսի փոխանորդ, քեզ չի կարելի:

ԴԱՆԵԼ.—Արի ծիշտը խոստովանվի, քու ծիսականնե-
րից յանի ամիսը մի յերկու հարյուր մանեթ
խաչնամբուր չե՞ն վերցնի:

ԳԱՐԱՍ.—Իհարկե կվերցնի: յերկու հարյուր մանեթ
ի՞նչ փողա վոր:

ԴԱՆԵԼ.—Դե ել ի՞նչո ուզում: կոմունիստները, վոր
դշեր ցերեկ աշխատում են, դու կարծում ես յեր-
հարյուրից ավել են վերցնո՞ւմ: Խորհրդային յեր-
կրում մենակ սպեցներն են, վոր ավել ստանում:
Դե սա ել չո սպեց չի: պարտ մաքսիմումա ըս-
տանում, ուրիշ ել ի՞նչո ուզում:

ԳԱՐԱՍ.—Սուս արեք, են մարդը գալիսա.

ԴԱՆԵԼ.—Եղ եկողը մեր ցյաղանա: յերելի դարմանը
տանելու համար ա զալի: Քաշվենք զրադ թող
մեղ չտեսնի: (Նրանք մտնում են մարաքը
իսկ Մարգարը Յեղայի հետ խոսալով զալիս ե):

ՏԵՍԻԼ 4.

Մարգար և Յեղան

ՄԱՐԳԱՐ.—Ճիշտ ա, մենք մեր թշնամուն մեռցրել,
բայց թե թաղել չենինք... զրա համար ել եղ
մեռելը քանի մնում, հոտում ա...իսկ մեռելի
հոտը շատ վնասակար բան ա. զանազան հիվան-
դություններ առաջ կրերի. և զրա համար մենք
վճռել ենք, վոր եղ մեռելը վերջնականապես
թաղենք: Թաղման արարողությունը, արդեն
սկսված ա...

ՅԵՂԱՆ.—Քու ասածներից յես վոչինչ չեմ հասկանում:

ՄԱՐԳԱՐ.—Վորովհնեավ դու յել թշնամի դասակար-
գեց ես. քու մեջ ել կուլակի արին կա: մտածե-
լու ժամանակ չի, գնանք քթոցը բռնի, դարմանը
ցնեմ:

ՅԵՂԱՆ.—Քթոցը հրեն գարմանը լիրած պատրաստ
դրած ա:

ՄԱՐԳԱՐ.—Յես սխալվեցի. ուզում եյի ասեմ, գնանք
քթոցը դու բռնի, յես դատարկեմ:

ԴԱՆԵԼ .—(դռան տակից) գյաղի միտքը ծուռ ա... .

ՄԱՐԴԱՐ .—Դե ել ինչի՞ ես կանչնել դնանք .+

ՅԵՂՍՈՒ .—Յես չեմ հասկանում, թե վոր դատարկելու եյթ, ել ինչի՞ համար ես լցրել: Քանի վոր լցրել ես, վերցրու տանենք:

ՄԱՐԴԱՐ .—Թու հերը ինձ սոսէլ ա: Վոր տառ վարին սրանից հետո չաս դարման չասս: Զմեռը դարմանի պակասություն ենք քաշելու:

ԴԱՆԵԼ .—Ստի հերն անիծած, թե ե դիսոքը յես քեզ ասել եմ:

ՅԵՂՍՈՒ .—Վույ, քոռանամ, սա իմ հոր ձենն ա...

ՄԱՐԴԱՐ .—Դու ել բան ասիր, մի հարցնող ըլի ես դի- գիշերվա կեսին քու հերը հստեղ ի՞նչ ա չինում... Հմի նա ովա իմանում, ում հետ վոր քունջ ու պուճախում նստած, Խորհրդային իշխանության հիմքերն ա փորում:

ԴԱՆԵԼ .—Իմաստո՞ւն ա շան տղեն:

ՅԵՂՍՈՒ .—Քոռանամ, թե սուտ ասեմ, իսկական հորս ձենն եր . նորից լսեցի:

ՄԱՐԴԱՐ .—Դու ել հենց մի գլուխ հորդ ձենն ես լսում, հորդ ձենը լսելու ժամանակը չի: Արի ես քարի վրա նստենք քիչ զրից անենք (նատում ե քարի վրա)

ՅԵՂՍՈՒ .—Զեմ ուղում

ՄԱՐԴԱՐ .—Վոր գայիր լավ կլներ, դե վոր չես դալի, եդ ել քու կամքն ա, բայց թե եդ մի խասիաթ չի, վոր դու ունես: Մեր չեֆերը յեկել եսոր կի- նո են ցույց տալու, ասում եմ դնանք թամաշա անենք: Զես ուղում: Ասում եմ արի ես քարի վրա նստի զրից անենք, չես ուղում: ինչ ա, յես վիշապ չո չեմ, վոր վախում ես

բոնեմ մի բաշ քեզ կուլ տամ: Դե լավ, ել յերկար բարակ մտածելու կարիք չկա: Երեվում ա, վոր նստելու միտք ունես: Ել զուր տեղը ժամանակ մի կորցրու, արի նստի:

ՅԵՂՍՈՒ .—Դե լավ իմ նստելով տեսնեմ դու ինչ բավա- կանություն ես ստանում:

ՄԱՐԴԱՐ .—Ի՞նչ բավականություն եմ ստանում վո՞ր նա . երկուսով կողք-կողքի ես փափուկ քարի վրա կնստենք:

ՅԵՂՍՈՒ .—Փափուկ քարի վրա՞ հա՞ . հա՞ . հա՞ . փա- փուկ քար կլինի՞.

ՄԱՐԴԱՐ .—Ինչի ես ծիծաղում, տյուփի քարը փա- փուկ չի՞ բա ի՞նչ ա քարտաշները ուրաքով տա- չում են, մեխ են խփում...

ՅԵՂՍՈՒ .—Դու ել ուրիշ խոսալու բան չունե՞ս քարից ու մեխից ես բոնել:

ՄԱՐԴԱՐ .—Դե լավ լուսնյակից խոսանք... ՅԵՂՍՈՒ գու- կիմանաս, եդ /հին գրողները լուսնյակի մեջ ի՞նչ են տեսել վոր նրա մասին ենքան բաներ են գըել:

ՅԵՂՍՈՒ .—Յես ի՞նչ իմանամ . գնա իրանցից հարցըու:

ՄԱՐԴԱՐ .—Նրանց հետ յես ի՞նչ հաշիվ ունեմ: իմ կարծիքով եդ մարդիկ կամ սիրահարված կլինեն, կամ թե մի ուրիշ պատճառ կլինի: Առանց պատ- ճառի, դու գիտես վոր աշխարհիս յերեսին վո- չինչ չի կատարվում: Այ խոսքի որինակ են ա- ռուն վոր շըխկալի ընենց գնում ա, նա մի պատ- ճառ ունի, արեվը վոր մայր ե մտնում, լուսնյակը դուրս գալի, դա ել մի պատճառ ունի: Յես ու դու ես քարի վրա վոր ըսենց իրար կողքի նստել զրից ենք անում, սա ել պատճառ ունի... (շա- բաւակ մոտենալ ե նրան):

ԴԱՆԵԼ. — Հմի վոր Թի քար վերցնեմ խվեմ երկուսորդ
դլուխն ել ջարդեմ, դա եկ իրա պատճառը կուս
նենաւ.

ՄԱՐԴԱՐ. — Յետ չեմ հասկանում, եղ հին գրողները
ախր արեգակի են պայծառ շողքերը թողած,
լուսնի ես քոռ ճրաքի մեջ նրանք լոնչ են տես-
նում: (յերկար ժամանակ նայում ե լուսին).

ՅԵՂԱՌ. — Ինչի՞ ես լուսնին եղքան մտիկ տալի, եղ հին
գրողների պես չինի՞ դու ել սիրահարված ես:

ՄԱՐԴԱՐ. — Ըստենց ա երեվում, Յեղսո ջան, հլա մի
լավ մտիկ, են լուսնի մեջ կասես դրուստ վոր
խորհրդավոր բան կա... (Յեղսոն ուշադրու-
թյամբ նայում ե. իսկ Մարգարը ուզում է գրկել
նրան համբուրել, բայց չի համարձակվում):

ՅԵՂԱՌ. — Յետ նրա մեջ խորհրդավոր բան չեմ տես-
նում...

ՄԱՐԴԱՐ. — Դե յես մեղավոր եմ, վոր դու չես տես-
նում: Լսիր Յեղսո, արի ես գշեր մինչև լույս նը-
տենք լուսնյակին թամաշա անենք: Յեղսո ջան
զըռուստ ասա՝ մենք յերկուսով վոր ըստենց իրար
կողքի նստել հնք լավա չե...

ՅԵՂԱՌ. — Քեզ համար վո՞նց ա.

ՄԱՐԴԱՐ. — Ինձ համար անասելի լավ ա, հոգիս կասես
փառավորվում ա...

ԴԱՆԵԼ. — Շան տղա, ըստենց մարալ աղջկա կողքին նըս-
տել ես. ի հարկն հոգիդ կփառավորվի:

ՄԱՐԴԱՐ. — Յեղսո ջան, քեզ վոր ըստենց կողքիս նստած
տեսնում եմ, կասես ասդ աշխարհը ինձ են
ունել... ուրախությունից քիչա մնում թեղեր
առնեմ յերկինք թռնեմ... (ավելի ե մոտենում),

ԴԱՆԵԼ. — Շան տղա վեր գնենես բլուսիդ կեռացի,
մեղք ես... (Յերկար լուսքյան)

ՅԵՂԱՌ. — Ինչի՞ չես խոսում.

ՄԱՐԴԱՐ. — Զեմ իմանում ի՞նչ խոսամ... ուրիշ ան-
գամ մտքիս շատ բան ա գալի, հմի հակառակի
նման ելածն ել կասես մոռացել եմ... (մտածում
ե) յես զարմանում եմ, ետ բանաստեղծները են-
քան լավ լավ խոսքեր վո՞րտեղից են ճարում:
Յերանի յես ել բանաստեղծ լինելի, քեզ
համար լավ լավ խոսքեր կասելի...

ՅԵՂԱՌ. — Դրանով դու ի՞նչ ես ուզում ասել.

ՄԱՐԴԱՐ. — Դրանով յես եմ ուզում ասել, վոր այ
տեսնում ես, տրեխներս մաշկել ա... (կոանում
ե իր սրեխներին նայում).

ՅԵՂԱՌ. — Դե լավ, ինձ վոր ասում ես, յևս ինչ անեմ,
հորս ասա քեզ տրեխն կտու՝ կհագնես:

ՄԱՐԴԱՐ. — Տասն անգամ ասել եմ, անդաշի քամակն ա
գցում, չի տալի...

ՅԵՂԱՌ. — Ինչի՞ չի տալի, մեր տանը ենքան կաշի ու-
նենք վոր...

ԴԱՆԵԼ. — Մեր տանը չատ բան ունենք, ձեզ ի՞նչ:

ՄԱՐԴԱՐ. — Յեղսո ջան մի բան ասեմ, դու չնեղանաս,
քու հերը շատ սկուպո մարդ ա: Սուտ չեն ասել,
վոր չափը՝ ձու չի ածի...

ԴԱՆԵԼ. — Լոխին մտիկ. ջան տղեն առակներովն ա
խոսում:

ՅԵՂԱՌ. — Դե լավ, մի ջուխտ տրեխացուն մեծ բան չի:
Առավոտը իմ միտք զցի, յետ կառած, բող հերս
ոկի չիմանա:

ԴԱՆԵԼ. Իմ հաշվին նրան լավություն ա անում...

ԳԱՐԱՍ — Թող տեսնեմ եղ ո՞ւմ հետ ես խոսում (գլուխը ուզում ե դուրս հանել) .

ԴԱՆԵԼ — Տեսնելու կարիք չկա . մեր գյաղեն ա : Ներս քնացեք : (նրան ներս ե հրում) .

ՄԱՐԴԱՐ — Հլա մտիկ տու բորիկ վուսնելով ենքան ման եմ եկել, վոր քարերի ճղած տեղից արինա գալիս . . .

ՅԵՂԱՌ — Տեսնեմ . . . (Յեղան կուանում ե ուզում ե նայել, Մարգարը նրան գրկում ե և սկսում համրութել) :

ԴԱՆԵԼ — Վայ յես քու հերն անիծեմ . . .

ՅԵՂԱՌ — Թող, մարդ կտևնի, ամոթա (ուզում ե նրա ձեռքից ազատվել) .

ՄԱՐԴԱՐ — Ես գշերվա կեսին մարդը ստեղ ի՞նչ դաւաթա անում (համբուրում ե) .

ԴԱՆԵԼ — Շան տղի բերանը համիա ընկել, լունելա ու ել բաց չի թողնում . . .

ԳԱՐԱՍ — Եղ ումն ա բռնել, թող մենք ել տեսնենք :

ԴԱՆԵԼ — Բեղ հետ ո՞վա խոսում . դուք ինչ եք կորված գդալի նման մեջ ընկնում . Հլա մտիկ շան տղեն արջի պես փաթաթվելա : Քիչա մնում, թե խեղճ աղջկան խեղդի . . .

ՏԵՐԾ — Ուրեմն եղտեղ աղջիկ ել կա՞ . . . (գլուխը դուրս ե հանում) .

ԳԱՐԱՍ — Կաց տեսնենք եղ ինչ աղջկա . . . (գլուխը նույնակա հանում ե) .

ԴԱՆԵԼ — Աղջկա անուն ո՞վ տվեց, դուք ինչ եք՝ ձեզ զանից բաներ մոգոնում : Գյուլմաներդ ներս տարեք . բատեղ թարմաշի բան չկա : (նրանց ներս ե հրում) են գյաղեն ձեզ վոր տեսնի, կդնա խարար կտա,

կդան մեղ կբռնեն կբանտարկեն, մեր սկսած գործը կխափանվի . . .

ՅԵՂԱՌ — Թող ասում եմ . . .

ՄԱՐԴԱՐ — Վոր թողնեմ, ուրիշ անդամ դու իմ ձեռը չես ընկնի . . .

ԴԱՆԵԼ — Յես քեզ ասում եմ թող, թե չե ձեն կտամ մարդիկ կհավաքվեն . . .

ԴԱՆԵԼ — Զեն չտաս շան աղջիկ, թե չե առաներս կբանդվի . . .

(Յեղան նրա ձեռքից ազատվում ե) .

ՅԵՂԱՌ — Զես ամաչում . սրա՞ համար դու ինձ բերիք եստեղ . . . Հլա մտիկ, ես ի՞նչ արիր, չորերս պատուսեցիր . . .

ՄԱՐԴԱՐ — Վնաս չունի, հերդ փող շատ ունի . քեզ համար նորը կառնի .

ԴԱՆԵԼ — Շան տղա դու շորը պատուս, չարման յես քաշե՞մ . . .

ԳԱՐԱՍ — Զարման ինչի՞ ես մենակ դու քաշում . . .

ՏԵՐԾ — Զարմի բանը հեշտ ա, դու ասա գործը հացդվի :

ՄԱՐԴԱՐ — Յեղաս ջան, մենակ մի գնա մութն ա, կվախենաս . կաց ես քթոցը դարձարկեմ, զամ քեղ ձամբու դնեմ (դարմանով լիքը քրոցը շուր ե տալիս նրանց գլխին և դուրս գնում) .

ԳԱՐԱՍ — Ես զարմանը ովա՞ լցնում գլխներիո . . .

ՏԵՐԾ — Ազատեցնիք, յատ խեղդվեցի . . .

ԴԱՆԵԼ — Ես՞ւս, ձեն միք հանի

ՏԵՐԾ — Դարմանը լցվել ա բերանս, շունչս կտրվում ա, քիչա մնում մեռնեմ, դու ասում ես ձեն մի հանի :

ԴԱՆԵԼ — Թեկուզ մեռնես, ի՞նչ կա վոր . . .

ԳԱՐԱՍ — Ճիշտ ա առում . ընդհանուր դործի համար
կարելի ա և մեռել...

ՏԵՐՏԵՐ — Եղ ինչի՞ դուք չեք մեռնում... (դորմանք
վրաներից բայ տալով դուրս են գալիս) .

ԴԱՆԵԼ — Սպասի , մի դամ տուն , յես քու հերը կա-
նիծեմ : Շուն շան վորդի : Ուրիշ անդամ ըլեր , դու
իմ ձեռքից չեյլիր ազատվի , կրոնելի կոցեյի դար
մանի մեջ շան նման քեզ կիսեղեյի . լավ ազատ-
վեցիր ... (վոտի ձայն) Հրեա են մարդն եկավ .
դնանք ներս :

ԳԱՐԱՍ — Գնանք ... (Դանիել , Դարասիմը և տերտերը
նորից մտնում են մարաքը) .

Տ Ե Ս Ի Լ 5

Նույնիք և բանտիո :

Բանտիոր յափնչին վրան զցած , բաշլուզը գլխին
փաքաքված , վոազ ներս և գալիս և գնում մտնում մա-
րագը :

ՎԱՐԱԴՈՒՅՐ

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բնմը Աերկայացնում է գյուղի ազրյուրը : Ազ ու ձախ
կողմից փողոց : Փողոցի վրա հողի կտուրներով մի հար-
կանի տեր : Ցերեկն յե : Լուսամուտներից նրագի աղոտ
լույսեր և յերեվում :

Տ Ե Ս Ի Լ 1

Գարատիմ և տերտեր

ՏԵՐՏԵՐ — Ասոված հաջողի , սրանք կպնան , դու նորից
քու առուտուրդ կանես :

ԳԱՐԱՍ — Ապրանք կա՞ , վոր առուտուր անեմ : Անիծ-
վածները խոդկի ապրանքը ձեռքներին վալյուտա
յեն շինել , արտասահմանից մեքենաներ են բերել
տալի : Մանալովիա ա : Ապրանք չի ճարգում .
ապրանքի սով ա :

ՏԵՐՏԵՐ — Կոռաբերատիվներում եղքան ապրանքը բա-
գրանք վո՞րտեղ են բերել լցրել ...

ԳԱՐԱՍ — Ի՞նչ են լցրել . զուխի ա , պուզրի , ու մեկ ել
կնկա շապիկ վոտաշոր ել ուրիշ բան կա՞ :

ՏԵՐՏԵՐ — Յես զարմանում եմ , Խորհրդային իշխանու-
թյունը եղ ի՞նչ տեսակ կառավարություն ա , վոր
կնդա շապիկ վոտաշոր ա ծախում : Ճիշտ են ա-
սում , վոր կոմունիստները կանանց համար առ-
հասարակ շատ են մտածում :

ԳԱՐԱՍ — Կնիկարմատներից ձեռ են քաշել , հմի մեռել-
ների վոտեկորները ոգտագործելու խնդրովն են
զբաղված : Ճամբին գալուց չտեսա՞ր մեշտները
լցրած , տանում եյին :

ՏԵՐՏԵՐ.—Տեսա, բա չտեսա. ուրեմն, նրանք մեռելի
վոսկորնե՞ր եր:

ԳԱՐԱՍ.—Մեռելի վոսկոր չեր, բա ի՞նչ եր: Նրանք եւ
տավար չեն մորթում, եղքան վոսկորներ դրանք
վորտեղից են հալաքում: Ես որեղուց զերեղ-
մաններում մի հատ մեռել չեն թողնի. հանելու
յեն: Մարդիկ զյուտարարություն են անում:

ՏԵՐՏԵՐ.—Դե լավ, դրանց զյուտարարությունը հենց
մեռելների գլխին եկա՞վ: Եդ գերեզմանները զը-
րանք յերկու որումը կդադարին, բա նրանից
հետո՞:

ԳԱՐԱՍ.—Նրանից հետո պառավների յախից են բոնե-
լու: Գործի անընդունակ մարդկանց սրանք չեն
սիրում: Ես ամեն ինչի պակաս վախտը նրանց հաշ
կտան կպահե՞ն: Թումանյորելու յեն զոռով
մեռցնեն, վոսկորները տանեն-ոգտագործեն:

ՏԵՐՏԵՐ.—Ճիշտ ես ասո՞ւմ:

ԳԱՐԱՍ.—Մուտ ասելու ի՞նչ ունեմ: Խորհրդային յերկ-
ըի գյուտարարները բա հո առանց վոսկորի չեն
մնալու: Դե լավ, դրա համար դու մի մտածի
հեշտ ա, մի բան կանենք: Պինդ տեղը ընկնի,
մի սատկած գոմեշ կառնեմ կտամ, նրանք քիվա-
նից ձեռ կքաշեն: Հրեն կնանիքը յեկեղեցու դուա-
նը հավաքվել են, դու զնա նրանց ագիտացիս
արա, ինչ վոր հարկավոր ա հալի ու նրանց զը-
խումը մտցրու: Դու հոգեվորական մարդ ես, նը-
րանք քեզ կլսեն ինչ վոր ասեա՝ կհավատան: (Դուրս են գնում):

ԵԵՂԱՊԱՆ մի քանի ուրիշ կանանց հետ, կուժը ու-
սերին դրած, գալիս են աղբյուրից ջուր տանելու

Յեղսոն, կանայք, հետո չըուշ և Զմրուխտ

ԶՄՐՈՒԽՏ.—Կուլակի աղջիկ, դենը քաշվի:

ՅԵՂԱՊ.—Պատճառ:

ԶՄՐՈՒԽՏ.—Պատճառ-մատճառ չեմ իմանում. քեզ ա-
սում եմ՝ դենը քաշվի:

ՅԵՂԱՊ.—Ճերթը իմս տ, յես քեզանից առաջ եմ յեկել:

ԶՄՐՈՒԽՏ.—Ի՞նչ անեմ, վոր դու ինձանից առաջ ես
եկել: Ես վոազում եմ: Դործ ունեմ:

ՅԵՂԱՊ.—Շատ հարկավորս ա, թե դու դործ ունես:
Քու կարծիքով, ուրեմն, մենք անդո՞րծ ենք:

ԶՄՐՈՒԽՏ.—Զենդ կտրի, թե չե կուժը կտամ գլուխտ
կկոտրեմ: Ես ախպրի ջրից խմելու դուք սկի իրա-
վունք ել չունեք: Հրեն առվի ջուրը, գնացեք
խմեք:

ՅԵՂԱՊ.—Բա ինչի՞ դու են ջրիցը չես խմում:

ԶՄՐՈՒԽՏ.—Իմ բանն ուրիշ ա, ճեր բանը ուրիշ: Ճե-
ղանից վոր մի քանի մանեթ տուրք են վերցնում,
ճերդ զարաչու կնգա պես սկսում ա լաց ըլել ձե-
նը աշխարհ դցել: Կոմունիստներն այ քանդեցին,
այ թալանեցին: Համա ինքը, վոր եսքան տարի
թալանում եր, խալիսի կաշին պլոկում եր, եդ
վոչինչ:

ՅԵՂԱՊ.—Շատ մի խոսա, ճերթը տալիս եմ քեզ, արի
կուժդ լցրու, գնա, զիսից ուադ ըլի: Կատաղած
չուն ես դառել. հետո խոսալ չի ըլի”:

ԶՄՐՈՒԽՏ.—Կատաղած չունը քու հերն ա, վոր սադ որը
պատերի տակ նստած կոլխոզնիկների վրա ա հա-
ջում: Հողս նրա վայրահաջ դիմին: Մեր քուչովն

Ել չի անցնում՝ մի քար վիրցնեմ տում դժուխը
ջարդեմ։ (Կուժը լցնում դման և ուսին և դուրս
գնում)։

ՅԵՂՍՈ — Ձեղանից ամեն ինչ սպասելի ա։ Սուրբն ել ա
ձեր ձեռքին, թուրն ել։

ՀՐՈՒՇ — Բա ուզում եյիր, վոր եղ սուրն ու թուրը
ամեն ժամանակ ձեր ձեռքին մնամ։ Խնչքան մնա-
ցել ա բավական ա, սրանից հետո եղ սուրն ու
թուրը մեր ձեռքին կլինի, վոր յերբ ուզենանք՝
ձեր գլուխը կտրենք։

ՅԵՂՍՈ — Նա ձենը կտրեց, հմի սա սկսեց։ Լցրմք զնա-
ցեք, յես եսանդ կնտեմ-կսպասեմ մինչև վոր
հերթը ինձ կհտանի։ (Քաշվում ե մի կողմ-նըս-
տում)։

ՍՄՆԱՄ — Ճարտ ի՞նչ, դրանից ավելի դու ուրիշ բան
չես կարա ասի։

ՍԱՆԱՄ — Ենքան խոսացիք, վոր ախարի չուրն և լ բա-
րեկց, հողս ձեր դլիսին։

ՀՐՈՒՇ — Դեփ սրանց մեջ նա. կուլակները, վոր չըւ-
նեն, եղ ախարի ջուրն ել կվարարի ու ամեն ինչ
ել . . .

ՅԵՂՍՈ — Գնաց յեկավ, ելի կուլակների յախից կազավ

ՀՐՈՒՇ — Մեր թշնամին կուլակն ա. նրան թողած բա-
ել ուրիշ ո՞ւմ յախիցը կազենք։

ՅԵՂՍՈ — Կպեք, ձեր աչքն ել դուրս գա։ Մի կուժ
ջուրն ել դլիներիս հարամում եք . . .

(Կուժը ձեռքին առաջ զրի դուրս ե զնում)։

ՀԵԲԻՔ — Նեղացավ ու առանց ջրի վերկացավ զնաց։
(Սիակը տնից դուրս ե գալիս փողոց, դոան տուած կանգ-
կանգնում)։

ՏԵՍԻԼ. . .

Նույնի և Սահակ

ԱՀԱԿ — Ես կնիկը ինձ ասում ա, տանը նոտի ինքը
դուրս ա գնում սհաթներով կորչում, հրեն ախ-
պրում նստած մասլահաթ ա անում. բուեց ել
գիտեցի։ Ես կոմունիստներն ել միթամ խալիսին
լավութին, արին։ Քանի եղ ախպուրը չկար,
ես մեր կնանիքը կուժը տանում Եյին տալի առվի
տակովը լցնում յերկու րոպեյում տան դալի.
հմի վոր գնում են ել յերկու սհաթ չեն գա (նրա-
տում ե բարի վրա, չիբախը լցնում)։

ՏԵՍԻԼ. 4.

Սիակ և Սահամ

ԱՀԱԿ — Աստվածը հաջողի մեկ ել վոր դնաս յերբ
կդաս։

ՍԱՆԱՄ — Դե յես մեղավոր չեմ։

ԱՀԱԿ — Իհարկե դու մեղավոր չես, մեղավորը կամու-
նիստներն են, վոր եղ ախպուրը չինել են։ Ժողո-
վատեղի քիչ ունելին, եղ մեկն ել ավելացնին,
աչքներս լիս։

ՍԱՆԱՄ — Զուրը կտրվել եր, սպասում եյին ջրի գա-
լում։

ԱՀԱԿ — Զուրը կտրված ել վոր ըլիներ, ելի դու կու-
չանայիր։ Անկարելի բան ա, կնանիքը իրար վոր
«ուստ եկան», ել պրծավ, յերկու սհաթ կկանդ-
նեն կխոռան։ Դե յես զնացի։

ՍԱՆԱՄ — Ուր ես զնում. կաց չայ գցեմ խմի հետո
զնում։

ՍՀԱԿ.—Հարկավոր չի:

ՄԱՆԱՄ.—Գնում ես.

ՄԱՀԱԿ.—Զես տեսնում, վոր գնում եմ: Ինչ առ, բան եյիր ասելու: Ասա, յես վոազում եմ, ժամանակ չունեմ: Տեղ եմ գնում: Դանել աղան կանչել ա, գնամ տեսնեմ ինչ ա ասում:

ՄԱՆԱՄ.—Ախր, դու խոստացել եյիր, վոր Ես գչեր ինձ թատրոն տանես:

ՄԱՀԱԿ.—Յես ել ասեմ բան ա ասում:

ՄԱՆԱՄ.—Դա բան չի՞: Մեր շեֆերը եկել ես գչեր ներկայացում են տալու, հարեվանները դնում են, ասում եմ մենք ել գնանք, քանի տարի ա թատրոն չեմ տեսել:

ՄԱՀԱԿ.—Զես տեսել հալբաթ մի որ կտեսնես. աշխարհքը չքանդկեց և դու առանց թատրոնի չմնացիր: Ասենք դու վոր դնաս ել միենույն աքեղ չեն թողնի: Եղ ներկայացումը կոլխողնիկների համար ա:

ՄԱԿՆ.—Ներկայացումը կոլխողնիկների համար ա. կինոն՝ կոլխողնիկների համար ա. կոռպերատիվի ապրանքը կոլխողնիկների համար ա. բաղիոն կոլխողնիկների համար ա:

ՄԱՀԱԿ.—Վարկը՝ կոլխողնիկների համար ա. սերմացուն կոլխողնիկների համար ա, տրակտորը կոլխողնիկների համար ա. մի խոսքով խորհրդացին յերկրում ամեն ինչ կոլխողնիկների համար ա: Հմի քու ասելը ի՞նչ ա:

ՄԱՆԱՄ.—Իմ ասելու են ա, վոր դու ինչի՞ կոլխողից դուրս եկար, գնա նորից գրվի:

ՄԱՀԱԿ.—Գրվելու եմ. բայց թե սպասում եմ տեսնեմ եղ գրվողների բանը վոնց ա՞ ըլում: Բաւքի թի

լավ չի. ինչի՞ զուր տեղը մենք մեր տունը մեր ձեռքովը քանդենք: Դե յես գնացի: Բան ա, թե վոր կուշանամ, դոները կողպի, ճրադը հանդցը ցրու քնի (Դուրս ե զնում):

ՄԱՆԱՄ.—Կընե՞մ թե չի, եղ քու բանը չի: Դու զնում ես գնա: Անիծվի խստիաթթող. Պառավեցի, յես քու ձեռին մի լավ որ չտեսա: (Կուծը վերցնում ներս ե զնում):

ՏԵՍԻԼ. 5.

Դանել, Գարասիմ և տերտիք

ԴԱՆԵԼ.—Դուք ինձ են ասեք, եղ ժողովը նրանք վոր. տեղ են արել:

ԳԱՐԱՍԻՄ.—Դու ել մազալու հարց ես տալի:

ՏԵՐՏԵՐ.—Ի՞նչ նշանակություն, թե կուզ վորտե՞ղ, վոր արած լինեն:

ԴԱՆԵԼ.—Դուք ինձ չհասկացաք: Յես ասում եմ, յեթե եղ ժողովը նրանք Արշավիրի տանը տրած ըլլեն, զնալներս զուր ա: Խսկ յեթե կոլխողի կանցիլարումը արած ըլլեն, մեր գնալը միաք ունի: Ակոչկի տակ կնատենք, միթամ իրար հետ զրից ենք անում: Նրանց խոսակցությունից ելի ինչքան չլինի, մի քանի խոսք կլսենք, դրանից մեր յեղրակացությունը կհանենք:

ՏԵՐՏԵՐ.—Արդար խոսք ա, եղ բանը իմ մաքին չերգա:)

ԴԱՆԵԼ.—Բացի ավետարանի գրածներից, քու մտքին ուրիշ բան չի գա: Սովորել ես ավետարանը բըռնես ձեռդ, միենույն աղոթքներն ու խոսքերը ամեն տեղ ու ամեն ժամանակ կրկնես: (Խոսելով դուրս են զնում):

Արշավիր և Սիրո

ԱՅԹՈՒ — Են օրը Մարգարը ինձ ասում եր, վոր եղ առ նիծվածները խմելու մահանով ամեն որ հավաք վում են Դանել աղի տունը սաղ գչերները նըստում և կովողը քանդելու համար ինչ վոր ծրագիրներ են մշակում...

ԱՐՇԱՎԻ — Եւ, թող մշակեն, ինչ ես վախենում: Իշխանությունը մեր ձեռքին չլո՞ւ բնումը ամեն ինչ կխեղինք: Զենք թողնի, վոր նրանք իրանց ծրագիրը իրադորեն:

(Խոսելով դուրս են գնում)

Հերիքնազը, յերեխան զրկած զալիս և Սիսկի տաճ դուռը ծեծում: Սահմանը դուրս է զալիս:

Հերիքնազ, Սահման—հետո Նարգիզ և Ճրուշ

ԱՄՆԱՄ — (Աերսից) Եղ ո՞վ ա:

ՀԵՐԻՔ — Սահման մոքիր, տանին ե՞ս: Ասում եմ, ես երիխն մի սհաթ թողնեմ քու կուշոք: (Միմիաց հետ լուս խօսում են):

ՃՐՈՒՇ — Մոռըրի բացման հանդեսի որը դեյքես կը կարեմ. կվերջացնեմ:

ՆԱՐԳԻԶ — Բա եղ պատռած չորերով շողտես դա: Մառըրի բացման հանդեսի որը ասում են բաղաքից ուրիշ մարդիկ են դալու:

ԱՄՆԱՄ — Արար աշխարհ իմացեղ ա, բա եղ վո՞նց, դու շես իմացել:

ՀԵՐԻՔ — Ես լսկում վսաս կապել ա, կարում եմ տնից գուրս գոմի՞ւ (հարի վար նառում և և յերեխային ծիծ և տալիս):

ԱՄՆԱՄ — (Հերիքնազի ականջնին) Հարյուր մետրանոց յորդան են կարել ամբել: Կոլխոզի նախադան ես յերկու որս, ասում են, զնալու ա ըերի: Աւրիշ տղամարդկանց հետ կոլխոզի կնանիքը սրանից հետ եղ յորդանի տակ գչերները միասին պտեն պարկի:

(Ճրուշ ու Նարգիզը կանգնած լսում են)

ՀԵՐԻՔ — Վույ, բուռնամ: (Ասուած ուղղից վեր և կիցնում) Յես նամուսով կնիկ եմ, վեզս կարեն յես իմ մարդուն թողած ուրիշ տղամարդու հետ շեմ պարկի:

ՆԱՐԳԻԶ — Հազոր առ շաշ զնիսին. եղ վո՞ր կնիկն ագժմել իր մարդուն թողնի, զնա ուրիշ տղամարդու դու հետ պարկի:

ՀԵՐԻՔ — Հարյուր մետրանոց յորդանը բա ինչի՞ համար եք կարել տվիկի:

ՆԱՐԳԻԶ — Ե՞՞ ում միտքը վոր ծովել ա, նա մի մետրանոց յորդանի տակ ել ամեն դիշեր ուրիշի հետ պարկում ա: Խնդրում եմ, զու կոլխոզիկներն նրանց հետ չխառնեն...

ՃՐՈՒՇ — Կուշակների տարածած պրավակացիան ա: Նրանց տաճներին մարդ կհայտնա: Քիչ առաջ չեմ իմանում, ով եր ասում, իբր թե պառակներին թունավորում ենք, վոր նրանց վոսկորները տաճնենք ոգտագործենք:

ՀԵՐԻՔ — Յես ել եմ իմացել. ուրիշն, արթու ա:

ՃՐՈՒՇ — Ի հարկե, սուս ա:

ԱՄՆԱՄ — Մեկ ել են առաջ, վոր մոռըրը շինուած եք, վոր դըա մահանով երեխները հավաքեք, դարեկը Մոսկովի:

ՀԵՐԻՔ. — Վույ քռոանամ, վոր հաղար տարի ժնա,
յես իմ երեխին մսուր ջեմ տա... Գնամ մարդիս
ասեմ, կոլխոզից դուրս գրվի. չեմ ուղում....
կոլխոզն ել ձեր Շիխին դպշի, ձեր մսուրն ել...
Խաբերա չներ, մսուրի մահանով երեխերը ու-
զում եք ձեռքներից խլեք... (Դուրս ե զնում):

ՆԱՐԴ. — Մանամ մոքիր, գլխիդ եղ սպիտակ մազերիցն
ամաչում եմ, թե չե բերանս բաց կանեմ, հա-
զար ու մի ավել պակաս խոսքեր կասեմ: Պառավ
կնիկ ես, բա ամոթ չի քեզ համա՞ր, բտենց սուտ-
սուտ լուրճը ես տարածում:

ՍԱՆԱՄ. — Աղջի, դե յես ինձանից հո չեմ հնարում:
Յեկեղեցու դոնով անցնում եյի տերտերը ուրիշ
կնիկ արմատների հետ կանգնած խոսում եր, յես
ել իմացա:

ՆԱՐԴԻԶ. — Վայ յես քու տերտեր գլուխը թաղեմ:
Տեսնում ես, եղ գլուխ մեռածը ես կնիկ արմատ-
ների միտքը վոնց ապղտորո՞ւմ:
Դե լավ, նա վոր ասում եր, բա քու ինելքին ինչ
ա դալի՞ո: Երեխեքը ինչի՞ համար պտի զրկեն
Մոսկով: Մոսկավյում երեխա չի հարվո՞ւմ, թե
ուները երեխի կարոտ են: Գնանք, սրանց բան
հասկացնելը գժվար ա.... (Հրուշի հետ դուրս ե
զնում):

ՍԱՆԱՄ. — Երեվում ա, վոր տերտերը սուտ եր ասում:
Թաղեմ նրա սուտասան գլուխը, նա իր կշանքում
յանի յե՞րբ ամի դուզ խոսք ասել, վոր հմի ասի,
զուր տեղը սրանց կշտին ամոթով մնացի: (Դուրս
ե զնում):

ՎԱՐԴՈՒԽԻՑ

5-ՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲԼՅՈՒ ներկայացնում ե Դանիլ աղի բնակարանը: Գիշեր
ե: Մարդարն ու Յեղանոն թախտի վրա նստած միմիանց
հետ խոսում են:

ՏԵՍԻԼ 1.

Մարգար և Յեղան

ՄԱՐԴԱՐ. — Տունը ընենց թամզացրել են, կասես
տներից քոչում են: Ես յե՞րբ հավաքեցիք, վոր
յես չտեսա:

ՅԵՂԱՆ. — Յես ել տանը չեմ ըլել: Չեմ իմանում:

ՄԱՐԴԱՐ. — Երեվում ա, վոր դու յել ես տանը զավե-
րյա չունիս: Լսիր, արի գու սրանցից հեռացի,
գնանք կոմսոմոլ գրվի:

ՅԵՂԱՆ. — Կընդունեն, վոր:

ՄԱՐԴԱՐ. — Կընդունեն, յեթե դու քու ծնողների հետ
կապ չունենաս: Բայց թե կարող ապառահի,
վոր դու Փիկտիվնի կերպով ծնողներիցդ բա-
ժանվես, բտենց բաժանվելուց բան դուրս չի դա:
Վոր, եվել բանով պտի ապացուցես, վոր
դու իսկապես մեղ հետ ես: Այ խոսքի որինակ,
վոսկեղենի ու երծաթեղենի պահված տեղը,
վոր ինձ ասես, եղ արգեն ապացույցա, վոր դու-
իսկապես մեղ հետ ես:

ՆԱԽԱԲ և ԴԱՅԱԼ

ԴԱՅԱԼ .—Աղջի , քու երեսը շան երեսա՞ : Ելի գու կանդ-
նել սրա հետ խոսում ե՞ս : Դու չե՞մ ամաչում :
Ես գյալի հետ զու մնակ հստեղ ի՞նչ ես շինում :
Դե լավ , քեզ հետ յես հետո կլասսեմ , զիս աշ-
քիցս հեռացի (թեղոն դուրս ե զինում) : Շուն շան
վորդի , յես քեզ չե՞մ ասել , վոր գու նրա հետ
մի խոսա՞ : Ծառայող ես , զնա քու ծառայու-
թյունդ արա , դու ստեղ ի՞նչ զործ ոնես ,
նստել նրա հետ մասրահաթ ես անում :

ՄԱՐԳԱՐ .—Վոր ծառայող եմ մի բոպե աղաս ու հան-
գիստ նստելու յես իրավունք չունե՞մ :

ԴԱՅԱԼ .—Եկթե գու ազատ ու հանդիսա նստել եյի՞
սովում , իմ տունը շգայիր , վոր եկել ես չանդ-
դուրս զա սաղ որը պտես չարչարվի : Աշխատե-
լու համար ես եկել դու իմ կմիս աղայություն
անելու համար չես եկել :

ՄԱՐԳԱՐ .— Աշխատանքից յես չեմ փախչում , որենքը
ինձ ինչքան թույլ ա տալի , յես ենքան կաշխա-
տեմ , ինձ ամել բանացնելու դու իրավունք չու-
նես :

ԴԱՅԱԼ .—Եղի իրավունքը յես քեզանից պտեմ հարցնի՞
տո , դու ով ե՞ս , ինչացու ես . նարկոմ հո՞ չես .
մի վողորմելի բատրակ ես . ելի :

ՄԱՐԳԱՐ .—Վոր բատրակ եմ , անլեզու դավար հո՞
չեմ : Մի քանի մանեթ փող ես տալի գչերը մինչև
լույս հօ՞ չպտես բանացնի :

ԴԱՅԱԼ .—Փող եմ տալի պտեմ բանացնի , բա վո՞յ :

ՄԱՐԳԱՐ .—Բանացնելուն ել մի որենք կա :

ԴԱՅԱԼ .—Հենց եդ ոյ ենքան վոր քեզկեսներին լիպու ա-
ռավել , հետներդ խոսել չի ըլում , մի խոսքին ուսու-
մը ջուլաբ եք առալ :

ՄԱՐԳԱՐ .—Պաենք տա , բա վոնց : Են առաջ եր եր , վոր
ովաններիս խմում եյիք , ձեն չեյինք հանում : Եր
գնաց , պրծավ , ել չեք ահսնի : Հրես գնում եմ
բատրակկոմին բանդատվեմ : Տրեիներս մաշ-
վել ա , ինչի՞ տրեխ չե՞ս տալի :

ԴԱՅԱԼ .—Տվածներիս ել ախսոսում եմ : Ձեղ բան տալը
հարամ ա , ընենցն ել մի հրամայում ա , կտսես
գլխիս տերն ա , աներիս ճանձի նման կայել ու
ել ձեռք չեք քաշում ։ Թուր , ես ի՞նչ որենք ա ,
ես ի՞նչ կանոն ա : Նորյարը վոր նոքար ա նա ել
ովաններիս աղա ա դառնէլ : Յերեսդ շուռ տվիր թե
չե սատանի պես վոտով գլխով կկորչի : Ես
ուր ա՞ ժողով ա զնացել , ես ուր ա՞ , միու-
թյուն ա զնացել : Տո ձեր միությունն ել զըլիս-
ներիդ գիսչի , ձեր ժողովն ել : Ախր նոքարն ի՞նչ
ժողով դնալն ինչ . դուք ել վոր ժողով չզնաք ,
ով ա՞ իմանում աշխարհը կքանդվի :

ՄԱՐԳԱՐ .—Դրանով դու ի՞նչ ես ուզում տոել :

ԴԱՅԱԼ .—Դրանով յես են եմ ուզում տոել , վոր յեթե
իրավունք են տվել մել մարդ բանացնենք , ել ,
կտորած պդալի պես ինչի՞ են ամեն բանի մեջ
իրանք խառնվում : Թողնեն մենք վո՞նց ուզում
ենք , ընենց բանացնենք :

ՄԱՐԳԱՐ .—Թորհրդային իշխանությունը եդ իրավուն-
քը ձեզ չի տա :

ԴԱՅԱԼ .—Եղ վոնց ա՞ , Խորհրդային իշխանությունը
մեղանից փող առնելը իմանում ա , իսկ իրավունք
տալը չի իմանում : Բա են լավ ա՞ , վոր քոս աղ-

քատի նման ամեն սհաթ թուղթը բնրում դեմ
եք անում, ես ինչ ա՞ սոցստրախն ա, պահս տա,
ես ի՞նչ ա, կուլտ-կրթական ա, պտես տալ, զա՞
րումար գառնա ձեր սոցստրախն ել, ձեր կուլտ-
կրթականն ել: Ձեր ձևոքին կրակ հո՞ չընկանք:
ՄԱՐԴԱՐ.—Եդ խոսքերը ավելորդ ա, Առրհրդային
յերկրում ապրում եք. խորհրդային որենքներով
նոտեք վերկացեք:

ԴԱՆԵԼ.—Ձենդ կորի, դուրս կորի իմ տնից: Սրանից
հետո ել զու ինձ հարկավոր չես, շուն չան
վորդի...

ՄԱՐԴԱՐ.—Հարկավոր չեմ, դուրս արա, ել ինչի՞ ես
հայույս...

ԴԱՆԵԼ.—Դու հա կանգնել խոսում ե՞ս, գնա աչքից
հեռացիր, թե չե կը բռնեմ կցցեմ վոտիս տակ
ենքան կտամ, վոր կսատկես... (իրիով նրան
դուրս ե անում):

ՏԵՍԻԼ 3.

Դանել և Հեղինար

ՀԵՂԻՆ.—Այ մարդ, ինչի՞ են գյաղին ճամբու դրիր:
ԴԱՆԵԼ.—Հմի կանգնելու եմ դրա համար քեզ յերկու
սհաթ բացատրություն տամ: Քեփս տվեց
ճամբու դրի: Ես տան տերը յես չե՞մ:
իրավունքը իմ ձեռին չի՞ . վանց վոր կու-
զեմ ընենց ել կանեմ: Թող գնա կորչի, փչա-
ցած, աներես լակոտ եր: Սաղ որը աղջկադ քա-
մակիցն ել ընկել. նրանից ձեռ չեր քաշում: Ես որ
եղուց նրա հետ մի քան կպատահեր, դժ արի ու
խայտառակի:

(Դրսից դուրը ծեծում են)

ՀԵՂԻՆ.—Դուրը ծեծում են, գնամ տեսնեմ եղ ովա.
(ուզում ե զնալ):

ԴԱՆԵԼ.—Կաց յես կը դնամ: Դու զնա Յեղսոյի հետ
են ստոլը ընենց սարցիած, բերեք դրեք եստեղ:
ՀԵՂԻՆ.—Գոնաղները նոր գնացին. ել ինչի՞ ա
հարկավոր:

ԴԱՆԵԼ.—Նրանք գնացին, հմի ուրիշներն են դալի:
Լսիր, մի չորս շիշ են հին զինուցը կլցնես-կրե-
րես: Կաց: ի՞նչ եյի ուղում ասել, մոռացա: Հա,
զակուսկեղեն ու մի քանի տեսակ միբք ել կավե-
լացնես: Դե չուտ ել մի ուշանա: (Հեղինեն դուրս
ե զնում):

ՏԵՍԻԼ 4.

Դանել և Գարասիմ

ԴԱՆԵԼ.—Նրանք եկա՞ն.

ԳԱՐԱՍ.—Եկան—բայց թե վայ են գալուն: Զեյին դա-
լի, մինչեվ համոգել եմ, ըստեղ ա հա-
սել: Սակի տանից նրանք վոր դուրս եկան, վո-
տի վրա կանգնել չեյին կարողանում: Ստիպված
մեկի կոնից յես եմ բռնել, մյուսի կոնից տեր-
տերը և եսպես խոսելով մի կերպ բերել տեղ ենք
հասցըել: Հրեն գնա տես, բաղչի դուան նըս-
տել գինջանում են:

ԴԱՆԵԼ.—Եդ լավա, վոր խմած են.

ԳԱՐԱՍ.—Խմած վոր չինեյին, չեյին դա: Դու են ասա,
ձեր գյաղեն տանը հո չի: Շատը նրանից եյին
քաշում: Եես նրանց խափել եմ, վոր Դանել
աղան նրան ուրիշ տեղա ուղարկել:

ԴԱՆԵԼ.—Ջուտ չես ասել, յես նրան եսոր ճամբու դրի:
Սրանք գաղարկ բաներ ա, գնա նրանց ասա թող

Ներս զան, հարելանները նրանց կտեաննն,
լով չի:

(Նրանի յերկուսով դուրս են գնում, իսկ Հեղինարք Յեղանայի հետ միասին սեղանը բռնած բերում են, սուփրան գցում և ամեն ինչ դնում պատրաստում):

ՏԵՍԻԼ 5.

Հեղինար և Յեղան.

ՑԵՂԱՌ — Որը հազար ու մի տեսակ շուն ու գել կդանկնստեն կուտեն կիմեն եղ ծախսերը նրա աչքին չի գա, իսկ ծառայողը, վոր մի ջուխտ տըրեխա ուղում, կամ մի երկու խոսք ալելա ասում, նրա հետ կովումա ու նրան ճամբու դնում: Կոմունիստները ձեզ վոր ըտենց հուպ են տալի համար: Մեր տան մեջ ելած չելածը վոր հավաքել պահել եք, դուք կարծում եք նրանք ձեռքներիցդ չե՞ն խլելու. ընենց խլեն, վոր աչքներդ բաց մնա... դուք հյա սպասեք:

ՀԵՂԻՆԱՐ — Աղջի ձենդ կտրի, զնա բուֆետից գինին ու են մնացած զակուսկեղենը վերցրու բեր:

ՑԵՂԱՌ — Ձեմ գնում, ել սրանից հետո, յես ես տան գործին վոր ասես, ձեռ չեմ տալու: Դուք ինչ ուղում եք արեք: Մարդարը իրա դրքերը թողելա, եղ դրքերը վերցնելու եմ կարդամ—պատրաստվեմ, գնամ կոմսոմոլ գրվեմ:

ՀԵՂԻՆ — Վոր ընդունեն, կդրվես:

ՑԵՂԱՌ — Ձեղ մոտ վոր մնամ, իհարկե չեն ընդունի... Զեղանից կհեռանամ. նրանք ինձ ընդունեն... (դուրս և զնում):

ՀԵՂԻՆ — Քարը գլուխէ. ի՞նչ ուղում ես արա: Ձեր

ձեռքին յես կրակն եմ ընկել: Կես գիշերա գտնել, յես վոտի վրա եմ. մեկը գնում, մյուսը՝ դալի: Միսհաթ հանգստություն չունեմ: Զահրումար դառնա թե սա ել կյանքա, վոր յես եմ քաշում: (Յեղան չորս շիշ գինի և զակուսկեղեն ձեռին գալիս ե):

ՑԵՂԱՌ — Առ դիր թող գան զխտկվեն: Դրանց աչքն ել դուրս գա: Կարծես նրանք իրանց տանը ուտելու բան չունեն. սոված չների նման մի գլուխ ուրիշ դուներն են ընկած (ձեռքին բռնած քաները դնում ե սեղանին և դուրս ե զնում)...

ՀԵՂԻՆ — Ես արջիկը մտամած գժվել ա: (Սեղանը կարգի ե բերում և դուրս գնում: Իսկ Դանելը, Դարասիմը, տերտերը, Տիգրանը և Ավետիքը ներս են գալիս: Տիգրանն ու Ավետիքը խմած են):

ՏԵՍԻԼ 6.

Դանել, Դարասիմ, տերտեր Տիգրան և Ավետիք.

ԴԱՆԵԼ — Համեցեք, համեցեք... եղ վո՞ր իսչիցնա, արժան համարեցիք մեր տոն գալ:

ԳԱՐԱՍ — Դանել աղա, դրա մասին հետո կխոսենք, զու են ասա, հարեվանության մեջ կոմունիստ կամ թե կոմսոմոլ հո չի ապրում:

ԴԱՆԵԼ — Թեկուզ ապրեն, ի՞նչ կա վոր, կոմունիստները կամ թե կոմսոմոլները մեղ վնաս ավող յարդիկ չեն: Եես նրանց ընդհանրապես շատ եմ հարգում: Նրանց որինակելի ժարդիկ են:

ԳԱՐԱՍ — Դու ինձ չհասկացար. յես նրա համար եմ առում, վոր խոսքի որինակ ես մարդիկ քու տօւծը դոնազ են եկել. դու գիտես, վոր դոնազը ընենց

մի բան ա, վոր աճելախ դերքեց ու պաշտոնից
ամեն ժամանակ ել մարդ կարող ա իր ուղած
տեղ դնա:

ՏԵՐԾ — Արդար խոսքա: (Նարութակ ուսում խմում ե).

ԳԱՐԱՍ — Խոսքի որինակ. եսոր ես մարդիկ քու տունն
են եկել, եղուց իմ տունը կդան, բայց թե խըն-
դիրը նրանումնա, վոր ուղինեցը, յեթե տեսնեն,
դուռնա են շինելու աշխարհով մի հրատարակեն,
վոր կոլխողի նախագան և զյուղփորհրդի նախա-
գան կուլակների տանը նատած խմում եյին:

ՏԻԳՐԱՆ — Դե լավ, խմիլն ամոթ բան Հո՞ չի.

ԴԱՆԵԼ — Գարասիմի խոսքն ել Հենց դրա վրա ա դալի,
վոր պտեն ասի, վոր դուք կուլակների աղքեցու-
թյան տակն եք ընկած:

ԱՎԵՏԻՔ — Ե, կարծում եք չե՞ն ասում:

ՏԻԳՐԱՆ — Եհ, թող ասեն, նրանց ասելուն ովա բանի
տեղ զնում: Փառք ասու, իմ վերընտրության
ժամանակ դու քու աչքովդ տեսար, թե յես ինչ
հեղինակություն եմ վայելում: Ճիշտա, մի քանի
անտակտ մարդիկ փորձ արին կոլխովի նախագահի
պաշտոնից ինձ հեռացնեն, բայց եղ փորձը նր-
րանց չհաջողվեց, վորովհետեվ յես հեղինակու-
թյուն ունեմ: Հետեվազես ինձ իմ պաշտոնից
հեռացնել նրանք չեյին կարող:

ԴԱՆԵԼ — Յեվ շատ կսիալվեյին, յեթե նրանք կոլխովի
նախագահի պաշտոնից քեզ հեռացնեյին: Յես ա-
սել, և ելի ասում եմ, վոր քեզաես կոլխովի նա-
խագահ, Ավետիքի պես, դյուղխորհրդի նախա-
գահ սադ աշխարհը, քանզին չեն ճարի:
Բայց զաւք չկարծեք, վոր յես յերեսներիք կեղ-
ծավորություն եմ անուամ: Զե, յես եզ խռաջերն
ամփեղծ որոսով եմ ասում:

ՏԵՐԾ — Արդար խոսքա. Դանել աղան, եղ խոսքերը
անկեղծ սրտովա ասում: (Գինին լցնում ե խը-
մում):

ՏԻԳՐԱՆ — Վոր ըստենցա, թողեք անկեղծ սրտով մի
քանի խոսք ել յես ասեմ:

ԲՈԼՈՐԸ — Խնդրենք, խնդրենք...

ՏԻԳՐԱՆ — Դուք գիտեք, վոր սովորական լեզվով, մենք
ունեվորներին՝ կուլակ ենք ասում, բայց թե կու-
լակների մեջ տարբեր հասկացողության և տար-
բեր հոգեբանության տեր կուլակներ կան: Խոս-
քի որինակ, կուլակներ կան, վոր բուրգուական
որենտացիան են ընդունում: իսկ կուլակներ ել
կան, վոր հորհրդային պլատֆորմի վրա կանգ-
նած, ապնիվ քաղաքացիներ են... Ուրեմն խմում
եմ ձեր կենացը: (Խմում ե):

ՏԵՐԾ — Արդար խոսքա... (Խմում են):

ԴԱՆԵԼ — Շնորհակալ եմ (Խմում ե):

ԱՎԵՏ — Իրավունք կտա՞ք վոր մի խոսք ել յես ասեմ.

ԲՈԼՈՐԸ — Խնդրենք խնդրենք...

ԱՎԵՏ — Տիգերանի ասածներին, համարյա թե կարելիա
ասել, վոր հարյուր տոկոսով յես համաձայն եմ:
Իհարկե, ինչպես վոր ամրով աշխարհին և նը-
մանապես ձեղ ել հայտնիա, վոր ընկեր Տիգ-
րանը կոլխովի նախագահ ա, իսկ յես դյուղխոր-
հրդի: Նրա Փունկցիաների մեջ խառնվելու, ընդ-
հանրապես յեկ ներկա դեղքում մասնավորա-
պես, յես իրավունք չունեմ: Բայց թե գաղափա-
րական տեսակետով, նրա ասածները հիմնավո-
րելու և վավերացնելու յես իրավունք ունեմ:

ՏԻԳՐԱՆ — Զհասկացանք, խռաջա արա աեսնենք ի՞նչ
ես ուզում ասել.

ԱՎԵՏ.—Յես ուզում եմ ասել, վոր քու ասածները
հարյուր տոկոսով ճիշտա, յեթե սրանք հակա-
խորհրդային մարդիք ըլեյին, սրանց տուն մենք
չեյինք դա. բայց թե եկել ենք...

ԴԱՆԵԼ.—Բարով հազար բարի եք եկել. մեր դռները
ձեղ պես աղնիվ մարդկանց համար միշտ բացա:
Ուրեմն «թույլ տվեք խմենք ձեր աղնիվ կենացը
(խմում են):

ՏԻԳՐԱՆ.—Շնորհակալ եմ.

ԱՎԵՏ.—Շնորհակալ եմ

ԴԱՆԵԼ.—Յես ել եմ շնորհակալ, վոր արժան համարե-
ցիք իմ տունն եկաք, բայց թե ես մի անդամ դա-
լով բան չի դառնա:

ՏԵՐՏ.—Արդար խոսքա: Դանել աղի տունը դուք ամեն
որ պետք դա:

ԴԱՆԵԼ.—Ո՞վա բան ասում, թող գան, բայց չեն դալի:

ԳԱՐԱՍ.—Ի՞նչի չեն դալի:

ԴԱՆԵԼ.—Մանց բանը ով ա՞ հատկանում: Կուլակ ա-
նունը կպցրել են ճակատներիս, ինչքան ուժները
պատումա հու պեն տալիս: Իհարկե, կուսակցա-
կան տեսակետով սրանք մեր դեմ գաղափարական
պայքար են մղում, բայց թե իմ կարծիքով պայ-
քար մղելու բոլորովին կարիք չկա: Վորովհետեղ
մենք խորհրդային պլատֆորմի վրա կանդնած,
անշառ մարդ ենք. հակառակնական բան չենք
չենք բռնում, վոր մեր դեմ պայքար մղելու կա-
րիք դդացմի:

ԳԱՐԱՍ.—Դանել աղան ճիշտա ասում: Կառավարու-
թունը, ինչ վոր ուզումա մենք տալիս ենք, ինչ
վոր ել դժվարանում ենք և ժամանակին չենք ա-
լի, միեվնույնա, դալիս դոռով տանումա:

ԴԱՆԵԼ.—Վնաս չունի, թող տանի, դրա համար մենք
բան չենք ասում: Միայն թե ուզում ենք իմանալ,
եղ տարածները ուրա՞ գնում:

ՏԻԳՐԱՆ.—Ուրիշ տեղ չի գնում, պետական գանձա-
րանն ա գնում:

ԴԱՆԵԼ.—Պետական գանձարանը գնա, վնաս չունի,
իսկ յեթե սրա նրա ջիբնա մտնում, զանազան
մարդկանց սեփականությունը դառնում, եղ ար-
դեն լավ բան չի: Իմ ասածները, իհարկե, դուք
ձեղ վրա չվերցնեք: Մենք են մարդկանցից չենք,
վոր կառավարության դեմ հակառակ բան ասենք:
Մեր կառավարությունը լավ կառավարու-
թյունա, նա մեր ժողովրդի համար ազատու-
թյուն, մեր յերկրին հանգստություն և խաղա-
ղություն ա բերել, վոր մենք խաղաղ ու հան-
գիստ կերպով ապրենք և ուրիշներին վնաս չը-
տանք:

ՏԵՐՏ.—Արդար խոսքա. ավետարանումը գրածա.
«իսաղաղություն ամենեցուն» (խմում են):

ԴԱՆԵԼ.—Անորեն բան, իհարկե, ավետարանում չեյին
գրի, ուրեմն խմենք կառավարութան կենացը:

ԱՎԵՏ.—Հոտնկայս... Տիգրան «ինտերնացիոնալ»-ը
վոր յերգենք լավ կլինի... (Բոլորը վոտիկի են
կանգնում: Տիգրանն ու Ավետիքը «ինտերնա-
ցիոնալ»-ից մի տուն յերգում են. կուլակներն ել
մինչեվ վերջ նրանց ձայնակցում և վերջում բա-
ժակները իրար շրջկացնում են, գինին խմում
նստում նեղները):

ԴԱՆԵԼ.—Յես ասել եմ, ելի ասում եմ, վոր կառավա-
րությունը մեղավոր չի, մեղավորը մենք ենք,
վոր իրար հետ խաղաղ ու համերաշխ չենք ապ-
րում: Շուն ու կատու ենք գառել ու իրար մի-

ԳԱՐԱՍ — Խմենք... (ուզում և խմել Տիգրանքը կամգ-
նեցնում ե) .

և նոք ուստում : Մի հարցնող ըլի : ախր ո՞ւմ հա-
մար, ինչի համար : Փառք ասում մի հավատի ու
մի կրոնի մարդիկ ենք, իրար հետ կովեոր կամ
բաժանելու ի՞նչ ունենք : Ավելի լավ շի՞
իրար հետ համերաշին և սերով ապրենք :

ՏԵՐԸ — Արդար խոսքա . ավետարանումը գրվածա,
«սիրեսցեք զիմիմիանց» :

ԳԱՐԱՍ — (Փեշը քաշում ե) մի խանդարի :

ՏԵՐԸ — Թող . խոսքը տեղը վոր եկավ, պտես ասի :
ի՞նչ եյի ուզում ասեմ...թու . սատանան տանի,
դու ինձ շշկացրիր, ասելու խոսք ել մոռացա :
(Դառնալով Տիգրանին) կաց հարցնելը ամոթ չը-
լինի, դուք կուսակցականներ ե՞ք .

ՏԻԳՐԱՆ — Ուրեմն, դուք մեր կուսակցական լինելու
մասին կասկածում ե՞ք, ինդրեմ (կուստոմը
ցույց ե տալիս) :

ԱՎԵՏ — Խնդրեմ... (Նույնպես կուստոմը ցույց ե
տալիս) .

ԴԱՆԵԼ — Դե հմի համոզվեցիր, վոր նրանք կոմւնիստ-
ներ են :

ՏԵՐԸ — Բան չեմ ասում, թող կոմունիստներ լինեն,
բայց թե հայ յեկեղեցին, հայ կրոնն ու հայքրիս-
տոնեությունը սրտներումը պինդ պահեն, Գրի-
գոր Լուսավորչա սուրբ հավատը չմոռանան,
ավետարանումը գրվածա «պահյա և զղահղանյա
ըզուրբ հավատը քո»... (զինին լցնում ե խը-
մում) :

ԴԱՆԵԼ — (Տերտերին) ավետարանումը գիտենք, վոր
լավ բաներ շատա գրված, բայց թե գրանք են
տեղ ասելու տեղը չի : Վերցրեք առանձնապես
խմենք Ավետիքի կենացը :

ՏԻԳՐԱՆ — Սպասեք—չնայած, վոր անհատական կե-
նացներին սկզբունքով յես դեմ եմ, բայց թե յես
կենացը խմելուց առաջ մի յերկու խոսք
եմ ուզում ասել : Յես ձեզ հարց եմ տալիս, Ավե-
տիքը ովա՞ : Մի չքավոր դյուղացի, այսինքն,
կուսակցության համար ամենահարազատ տարր .
ներկա դեպքում գյուղացորհրդի նախադահ և կա-
ռավարության պաշտոնական ներկայացուցիչ :

ՏԵՐԸ — Արդար խոսքա, ուրեմն խմենք կառավարու-
թյան պաշտոնական ներկայացուցիչի կենացը :

ԴԱՆԵԼ — Սպասի, են մարդը եր խոսքը չի վերջացրել
(յերկար լուրջուն) :

ՏԻԳՐԱՆ — Յես ո՞վ եմ, քանի վեց թվի ստաժավոր պա-
տասխանատու կուսակցական, ներկա դեպքում,
կոլխոզի նախադահ, այսինքն կոլեկտիվ տնտե-
սության պաշտոնական ներկայացուցիչ : Ես մար-
դուն ո՞վա, մի կիսագրագետ գյուղացի, բայց
ներկա դեպքում յեկեղեցու սպասավոր, այսինքն,
Հոգեվոր դասի պաշտոնական ներկայացուցիչ :
իսկ դուք ո՞վ եք, մասնավոր սեփականատեր,
այսինքն, ունեմուր դասի պաշտոնական ներկայա-
ցուցիչներ, իսկ ներկա դեպքում, խորհրդային
պլատֆորմի վրա կանդնած աղնիվ քաղաքացի-
ներ... ուրեմն խմենք Ավետիքի կենացը :

ԲՈԼՈՐԸ — Խմենք (խմում են)

ԱՎԵՏ — Շնորհակալ եմ (խմում ե) .

ԴԱՆԵԼ — Մենք ել ենք շնորհակալ :

ՏԵՐԸ — Արդար խոսքա, մենք ել ենք շնորհակալ :

ԴԱՆԵԼ .—ԱՆՈՒԾ :

ԳԱՐԱԾ .—ԱՆՈՒԾ :

ԱՎԵՏ .—ԱՆՈՒԾ ըլեք.

ԴԱՆԵԼ .—Տիգրան ալլահվերդին քեզ մոտ : Վերցրեք, ես մի ստաքանն ել առանձնապես խմենք Տիգրանի կենացը : Կառավարության ներկայացուցիչի կենացը, խմելուց հետո, որենքով քսան վեց թվի ստաժավոր և պատահանատու կուսակցականի կենացը պտենք խմի : Տիգրան ջան, սաղ ըլես, Աստոծ քեզ ավելի չնորք տա : (Խմում ե) :

ԳԱՐԱԾ .—Տիգրան ջան, սաղ ըլես . յերանի կոմունիստները դիմուն ել քու սրտի և քու հասկացողության տեր մարդիկ ըլեն... (Խմում ե) :

ՏԵՐՏ .—Արդար խոսքա... (Խմում ե) .

ԱՎԵՏ .—Տիգրան ջան, սաղ ըլես... (Խմում ե) :

ՏԻԳՐԱՆ .—Նախքան չնորհակալություն հայտնելը թույլ տվեք, մի քանի խոսք ասեմ . (ուշադրությունը բեկինում ե տերտերի վրա) :

ՔՈՂՈՐԾ .—Խնդրենք, խնդրենք...

ՏԻԳՐԱՆ .—Քիչ առաջ տեր հայրը մի բան ասաց, եղ ասձներից երկումա, վոր տեր հայրը մարքսիզմից բոլորովին դաղափար չունի : Իհարկե, ըստ պաշտոնի և լուսումի, նրա տեսակետը ճիշտա, բայց թե կրոնը՝ ընդհանրապես և Գրիգոր լուսավորչա սուրբ հավատը՝ մասնավորապես մեղ համար նշանակություն չունի, քանի վոր մեզ, վորպես կոմունիստների դիմուն կան մատերիալիզմը և դասակարգային շերտավորման ինդիրնա հետաքրքրում...

ԱՎԵՏ .—Տիգրան, սրանք անկուսակցական մարդիկ են, ըտենց խրթին բաները սրանք չեն հասկանա:

ՏԻԳՐԱՆ .—Դրանք վոր չեն հասկանա, յես հո հասկանո՞ւմ եմ... յես քսանվեց թվի ստաժավոր պատախանատու կոմունիստ եմ . յես պարտավոր եմ լենինյան գիծը ամեն. տեղ պաշտպանելու: Տեր հայրը աբուրտ բան ա ասում, նրա ասածները, յեթե մենք մարքսիստություն առաջ կզա և յերկրորդն ել վոր մեզ ոպրոտունիզմի և աջ թեքման մեջ կմեղադրեն: Իսկ ոպրատունիզմ և ոչ թեքումը ներկա մոմենտում մեղ համար ամենավտանգավորնա . Կրակը մենք նրա դեմ պետք ե ուղղենք:

ԳԱՐԱԾՄԻՄ .—(Դանիելին). Դրա ասածներից գու բան հասկանում ե՞ս...

ԴԱՆԵԼ .—Ինքը շատ ա հասկանո՞ւմ: Սպասի, շատ չի քաշի, եղ աջ թեքումը մենք կտեսնենք սրանց ուր կտանի :

ՏԻԳՐԱՆ .—Դանել աղա, աջ թեքման մասին դու ինչ վոր բան ասացիր :

ԴԱՆԵԼ .—Յես են եմ ասում, վոր եղ աջ թեքման կողմնակիցները խելքը գլխներին մարդիկ են, նրանք խելք բան են ասում, նրանք ձեղ լավ խորհուրդներ են տալի. յեթե դուք նրանց խորհուրդներին հետեւք, չեք փոշմանի :

ՏԵՐՏԵՐ .—Արդար խոսքա, չեք փոշմանի (Խնձորը ոքնում ե գրպանը) .

ՏԻԳՐԱՆ .—Աջերի տված խորհուրդները յեթե մենք հետեւք, կուսակցության ուղիղ գծից մենք կեղվենք: ՎեկԱՊԵՀի տված խորհուրդներն ա մեղ համար կարեվոր: Վեկապե դուք հասկանում եք ինչա՞նշանակում:

ԴԱՆԵԼ .—Հասկանում եմ: Վոր անկուսակցական եմ,

դու հենց իմանում ես իմ խելքը բան չի՞ կտրում .
Կուտակցության ծրագիրը ճիշտա , յես չեմ կար-
դացել , վեկապելի անդամ չեմ , բայց թե նրա ով-
ված հրահանգները վոնց վոր հարկնա , յես հա-
կանում եմ : Վորովհետեւ իմ սոցիալական ծա-
գումը բանվորականա : Աչք եմ բաց արել մեր
տունը հենց են գլխից դասակարգայինա ըլել :
Հերս վոչխար պահող եր : Մերս՝ բուրդ զզող .
քիրս՝ թել մանող , տառո՝ խալիչա գործող :
Յեկ եղ ժամանակվանից խորհրդային հոգեբա-
նությունը իմ մեջ սկիզբա առել :

ՏիգրԱՆ .—Հասկանում եմ .

ԱՎԵՏ .—Յես ել եմ հասկանում .

ԴԱՆԵԼ .—Խելքը գլխին մարդիկ եք . իհարկե , վոր կը-
հասկանաք :

ԳԱՐԱՍ .—Տո , ջանմ , սրանք ամեն ինչ հասկանում են ,
Սեթոյի և Արշավիրի նման անհասկներն են , վոր
չեն ուզում մեկ հետ յոլա դնա :

ԱՎԵՏ .—Դու ել մարդկանց անուններ ավեր . . .

ՏիգրԱՆ .—Կուսակցական տոմսը , թե յես նրանց ձեռ-
քիցը առնել չտամ , բա յես Տիգրանը չեմ :
Բոռնցքով խփում ե սեղանին և վոտքի կանգ-
նում : Նրա հետ մյուսները նույնպես վոտքի են
կանգնում) Նրանց արարմունքը յես չեմ մո-
ռանա :

ԴԱՆԵԼ .—Ինչի պիտի մոռանաս : Նրանք ձեր մասին զա-
նազան բամբասանքներ են տարածում :

ԳԱՐԱՍԻՄ .—Յեկ դուք չկարծեք , թե եղ բամբասանք-
ները մեր ականջին չի հանում , հասնումա ,
բայց թե մենք ուշադրություն չենք դարձնում :

ԴԱՆԵԼ .—Իսկ յեթե մեր տեղ ուրիշ հակախորհրդային

մարդիկ լինելին , ձեր մասին տարածված բամբա-
սանքները նրանք չար նպատակով կգործադրեն-
ին : Իսկ մենք եղ չենք անի : Մենք խորհրդային
պլատֆորմի վրա կանգնած , աղնիվ քաղաքացի-
ներ ենք :

(Դանելը , Գարասիմը , Տիգրանը և Ավետիքը
դուրս են գնում) :

ՏԵՐԸ .—Արդար խոսքա , մենք խորհրդային պլատֆորմի
վրա կանգնած աղնիվ քաղաքացիներ ենք , եղ
բանը մենք չենք անի :

(Մեղանի վրայից մի շիշ զինի և մրգերը վեր-
ցնում դնում ե գրանը և դուրս ե գնում) :

ՎԱՐԱԳՈՒՅԹՅՈՒՆ

ԱՐԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Քեմը ներկայացնում է կոլլոգի զրասենյակ։ Սեղան, աքոռմեր, լենինի մեծադիր նկարը։ կարմիր դրոշակ և տոպատաղից քաշ տրված նավքի լամպ։ Յերեկո յի Դանելը, Գարասիմը և տերտերը մի անկյունում քաշված, միմիանց հետ խոսում են։

ՏԵՍԻԼ 1.

Դանել, Գարասիմ և տերտեր։

ԴԱՄԱՍ —Կոլլոգը թե վոր եղքան ոգտավետ բանա, տնտեսություն ունեցող կոմունիստները ինչի՞ իրանք չեն գրվում։

ՏԵՐԾ —Ովա՞ ասում չեն գրվում։ Գրվում են։

ԴԱՆԵԼ —Գիտենք վո՞նց են գրվում։ Ես որ գրվում են, մի յերկու որից հետո թողնում հեռանում։ Մահանա են բռնում թե մեր կանայքը ուղի չեն։

ՏԵՐԾ —Եդ նշանակումա, վոր իմ խոսքերը եդ կանանց գլխում տպավորելա։ Ել ուրիշ անգամ չասսեք թե յես գործ չեմ կատարում։

ԳԱՄԱՍ —Դրանք դատարկ բաներա. Տիգրանը դարտեսնենք, կոլլոգի անունով մի գրություն կը տա՞ ։ Են դինի արաշը գեղից դուրս բերենք։

ԴԱՆԵԼ —Վոր չտա, տուններու կըանդվի,

ՏԵՐԾ —Եւս ելի գլխի չեմ ընկնում թե եդ դինին ո՞ւ վրա եց ծախում, դրա առնող մուշտարին ո՞վ։

ԳԱՄԱՍ —Պետական հիմնարկները։

ՏԵՐԾ —Մասնավոր մարդկանցից ախր ուրանք առեվտուր չեն անում. զրա համար, կարծեմ հրահանդ ել կա։

ԴԱՆԵԼ —Իսկ քեզ ովա՞ ասում, վոր պետական հիմնարկները առանց հրահանդի են գործ տանում։ Նրանց մոտ ամեն ինչ ել հրահանդովա կատարվում։ Բայց թե եդ հրահանդ տվողներն ու հրահանդ կատարողները ամեն տեղ ու ամեն ժամանակ կամ իսկ մի խելքի ու մի մտքի տեր մարդիկը չեն ըլլում։ Եդ հրահանդը մինչեվ տեղ հասնի և նրան մինչեվ տեղում կհասկանան, մենք մեր իմացածը կանենք...

ՏԵՐԾ —Հիմա հասկացա...

ԳԱՐԱՍ —Հոգեվոր մարդ ես. և դրա համար ել բան դու դժվար ես հասկանում։

ԴԱՆԵԼ —Սուս արեք Տիգրանը գալիս ա։

ՏԵՍԻԼ 2

Դաւիթ և Տիգրան.

(Տիգրանը մտախոհ ներս և մտնում և զարմացած նայում)։

ՏԻԳՐԱՆ —Ինչի՞ համար եք եկել. դուք եստեղ ի՞նչ գործ ունեք։

ԴԱՆԵԼ —Գործ ունենք, վոր եկել ենք, գործ վո՞ր չունենայինք, չեյինք դա։ Մի ինդըի մասին քեզ հետ ուզում ենք խոսել

ԳԱՐԱՍ —Դու մեղ մոտ ել չես գալի, մեր գալն ել, հո՞ դիտես ելի. քիչ դժվար ա։ Մեզ եստեղ կտեսնեն, հետո քո յերեսը խոսք կդա, լավ չի։

ՏԻԳՐԱՆ —Եդ խոսքերը ավելորդ ա, յեթե գործով եք

եկել, գնացեք Սեթոյի մոտ, կոլխոզի նախագահը
հմի նա ա: Կոլխոզի նախագահի պաշտոնից ինն
հեռացրել են: Մրանից հետո, խնդրում եմ դոք
ինձ հետ գործ չունենաք...

(Նարգիզը առանց հայտնելու ներս և գալիս, իսկ
կուլակները նրան տեսնելուն պես խկույն դուրս
են գնում) .

ՏԵՍԻ. 3.

Տիգրան և Նարգիզ

ՏԻԳՐԱՆ.—Եղ ի՞նչ անքաղաքավարություն եր քո
կողմից:

ՆԱՐԳԻԶ.—Իսկ քո կողմից յերելի քաղաքավարու-
թյունա, վոր կուլակների հետ նստել, մասլա-
հաթ ես անում: Զլինի ձեր խոսակցությունը յես
խանդարեցի: Ինչի՞ համար եյն յեկել,
ի՞նչ եյին ուզում: Դե լավ, չես ու-
զում, մի ասա, առանց քու ասելու ել կուլակների
միտքը յես հատկանում եմ: Նրանք մեղ համար
լավ բան չեյին ասի:

ՏԻԳՐԱՆ.—Զուր ես կարծում, շատ անդամ նրանք ա-
զելի խելոք բան են ասում, քան թե մեր ընկեր-
ները:

ՆԱՐԳԻԶ.—Մեկ ել դու յես խելոք բան ասում. տես-
նում եմ, բերանիցդ մարդարիտներա թափվում,
կոմունիստին մտիկ ավել ի՞նչ խոսքերա ասում:
Ուրեմն, եղ խելոք խոսքերը դու նրանցից ես սո-
վորե՞լ... հա՛, հա՛, հա՛. ճիշտ ասած, քու
տեղ յես կարմրում եմ:

ՏԻԳՐԱՆ.—Լեզուդ քեզ քաշի, խոսքդ ճանաշի: (Բը-
ռութեան խիում է սեղանին):

ՆԱՐԳԻԶ.—Դե լավ ինչի՞ ես նեղանում: Քեզ սեղան
ջարդելու համար չեն նստեցրել եղտեղ. խելքը
հավաքիր գլուխու, որինավոր գործ արա:
ՏԻԳՐԱՆ.—Խրաներդ դու պահի քեզ համար, առանց
քու կարգադրության, յես իմ գործը անում եմ:
ՆԱՐԳԻԶ.—Տեսնում եմ վոնց ես անում: Կոլխոզում
ընդունվելու համար զիմում տվողներ կան, յերկու
որա գնում գալիս են, քեզնից պատասխան չեն
ստանում:

ՏԻԳՐԱՆ.—Սուտ եօ ասում, յես նրանց պատասխան
տվել եմ:

ՆԱՐԳԻԶ.—Նա պատասխան չի, վոր դու յես տվել:

ՏԻԳՐԱՆ.—Յես նրանց հետ յերկար խոսելու ժամանակ
չունեմ:

ՆԱՐԳԻԶ.—Իսկ կուլակների հետ խոսելու ժա-
մանակ ունե՞ս:

ՏԻԳՐԱՆ.—Դրանով դու ի՞նչ ես ուզում ասել:

ՆԱՐԳԻԶ.—Դրանով յես են եմ ուզում ասել, վոր դու
կուլակների գործով ավելի յես հետաքրքրու-
վում, քան կոլխոզի խնդիրներով: Ինչպես յերե-
վումա, նրանց տանը կերած աղ ու հացը չես մո-
ռանում, կամ թե չես նրանց դիմու արագի համը
են որվանից բերանումդա մնացել:

ՏԻԳՐԱՆ.—Յես ինդիրեցի, վոր եղ բանը ել մյուս ան-
դամ յերեսովս չապք, բայց դուք ամեն անդամ
կրկնում եք:

ՆԱՐԳԻԶ.—Դե լավ, սիսարդ վոր վիզդ ես առնում, ել
չենք ասի: (Ավետիքը պատի բերքը ձեռին բը-
ռութ, բարկացած ներս և գալիս):

ՆԱԽԵՒ և ԱՎԵՏԻՔ.

ԱՎԵՏ.—Աստվածու սիրես, Հայ մի տես ի՞նչ են արել.
վերցրել մեղ յերկուսիս ել պատի թերթում նկա-
րել են. սրանք կուլակներն, ես երկուսից մեկը՝
դու յես՝ մեկը՝ յես եմ. զինու բակալը ձեռքնե-
րիս բռնած, կուլակների հետ պոռշտի ենք ա-
նում...

ՏԻԳՐԱՆ.—Մա ուղղակի խայտառակությունա...
(Թերթը պատում ե). դե արի լեզու գտի սրանց
հետ աշխատի:

ՆԱՐԴ.—Եդ լեզուն կորած չի, վոր գտնեք: Եդ լեզուն
կոլխոզի ծրագիրնա: Դուք վոր կոլխոզի ծրագրով
աշխատեք, ձեզ ո՞վ բան կասի: Կամ թե չե եդ
պատի թերթը հո մենակ ձեզ համար չի լույս
տեսնում:

ԱՎԵՏ.—Հենց բաննել եղա, վոր մենակ մեղ համար ա
լույս տեսնում: Եդ զահրումարը մի նոմեր չե-
լավ, վոր նրա մեջ մեր մասին բան չփրեն:

ՆԱՐԴԻՍ.—Դրա համար դուք նեղանում ե՞ք:

ԱՎԵՏ.—Քեզ համար վոր դրեն, դու չես նեղանա՞:

ՆԱՐԴԻԶ.—Թե վոր ծուռ բան կբռնեմ, թող դրեն,
ի՞նչ կա վոր:

ՏԻԳՐԱՆ.—Խնդրում եմ դու մեղ հետ չհավասարվես...
մենք կուսակցականներ ենք և կուսակցական
տոմս ունենք (կուս տոմսը ցույց ե տալիս):

ԱՎԵՏ.—Մենք կուսակցական տոմս ունենք... (կուս
տոմսը ցույց ե տալիս):

ՆԱՐԴԻԶ.—Վոր տոմս ունեք ինչո՞վ եք ինձանից ա-
վել... սրանից նրանից մի երկու խոսք լսել եք:

դրանով խալիսին զարժացնում ե՞ք: Դուք ձեր ա-
րած դործը ցույց տվեք: Տոմսը ի՞նչիսա պետք,
վոր բերում աչքսեք կոխում: Հողս գլխներիդ:

ՏԻԳ.—Բոլա ըռեխոդ շախ տառ. ուրիշները կմսն, ա-
մոթա:

ՆԱՐԴԻԶ.—Դուք կարծում եք ուրիշները ձեզ չեն ճանա-
չո՞ւմ: Դուք արխային կացեք: Նրանք իմանում
են թե դուք ի՞նչ պտուղներ եք: Երեսներիդ, վոր
բան չեն ասում, դուք հենց իմանում եք հետեւ-
ներիցդ չե՞ն խոսում...

ԱՎԵՏ.—Զավղադ մարդկանց փեշակը՝ խոսանա. թող
ինչքան ուղում են խոսան. նրանց խոսալուն ո՞վա
ուշադրություն դարձնում:

ՏԻԳ.—Մենք կոմունիստներ ենք, մեզ կուսակցական
աշխատանքը և կոմունիստական դադասիարնա
միայն հետաքրքրում:

ՆԱՐԴ.—Ը՛Կ, հողս գլխներիդ, թե դուք հասկանում
եք կուսակցությունը, կամ թե կոմունիստական
գաղափարը ի՞նչ բանա... Եդ տոմսն ել, ովա՞
իմանում վո՞րտեղիցա ձեր ձեռքը ընկել: Եդ
տոմսն ել վոր չունենայիք, պատերի տակ սոված
ծարավ վերկնկնեյիք, երեսներիդ մտիկ տվող
չեք ըլի:

ՏԻԳ.—Զենդ կտրի, լիրը, անզգամ...

ՆԱՐԴ.—Կուսակցականը բա եդ խոսքը կասի՞... դու
ի՞նչ կուսակցական ես. քեզ պես կուսակցական-
ները զանթարի տակը ջուխտը մի շահիա, հողս
գլմիդ (դուրս ե գիտւմ):

ԱՎԵՏ.—Ըսենց բերանը պատուած կնդան յես մի բոպե
չեմ պահի, յես զարմանում եմ, դրա մարդը
ինչա՞ մտածում, վոր նրան հայա տալիք պա-
հում:

ՏԵՐ — Նա մեղավոր չի : Մեղավոր նրանք են, ովքեր
որանց նմաններին առաջ են քաշում : Յետ չեմ
հասկանում, համերաշխ կերպով աշխատելու
համար ընկերական ու մտերմական պայմաններն
ստեղծում, ասում են աջ թեքման մեջն ա ընկել,
վերջնում պաշտոնից հեռացնում են ու մի յերկու
արշինանոց պոչն ել հետեւիցդ կապում : Հակա-
ռակն ես անում, ասում են չինովնիկ ա, բյուրո-
կրատ և սկսում են ամեն կողմից վրադ հարձակ-
վել աջ ու ձախ քարկոծել : Մարդ չի իմանում,
թե վո՞նց անի... թո՞ւ, հարամեց ամեն ինչ : Ես-
տեղ մնալ սրանից հետո չարժի (սեղանի վրայից
թխտերը շարուում ե գետին և դուրս գնում) :

ԱՎԵՏ — Ճիշտա ասում, պաշտոնից հեռացնելուց հե-
տո ել ի՞նչ յերեսով նա եստեղ պտի մնա : Նրա
տեղ յետ ել վոր ըլեմ, յետ ել կհեռանամ, մի բո-
պե չեմ մնա (դուրս ե գնում) :

ՎԱՐԱԳՈՒՅՑ

ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեմը ներկայացնում ե պահեստի առաջ : Մի կողմը
տախտակամած պահեստն է, մյուս կողմը՝ խոտի դեզ :
Կոլխոզիկները բազաֆից յեկած բանվորական բրիգա-
դի հետ յերգելով աշխատում են : Լիքը մեշոկները սայ-
լիքից վեր են բերում, բերաները կարում և տանում
պահեստը :

ՏԵՍԻԼ

Գեղամ, Կարո, Ոհաննես, Արշավիր, Սերո, Համբ,
Նարգիզ, Հրուշ, Զմրուխտ և ուրիշները : Արշավիրն ու
Սերոն խոտի գեզի մոտ կանգնած, միմյանց հետ
խոսում են :

ԱՐՇԱՎԻՐ — Սայլերը կազատվեն թե չե, կարգագրի ա-
ռաջի հերթին ես խոտը կը են-տանեն իրա տեղում
գարսեն : Իմ կարծեքով խոտը եստեղ պահելու
բոլորպին միտք չկա : Աչքից հեռու տեղ ա, ո՞վ
ա իմանում, ինչ կպատահի :

ՍԵՐՈ — Ճիշտ ես ասում : Առանց են ել մեր տավարը
ես ձմեռ կերի պակասություն ա քաշելու : Հան-
կարծ մի բան կպատահի, մենք վոտով-գլխով
կկորչենք :

ԱՐՄՎԿ — Խնդիրը նրանում չի, թե մենք կկորչենք, —
յետ վախենում եմ մի փորձանք պատահած դեպ-
քում կոլխոզը քանդիկի : Հաղիվ մենք նրան վո-
տի յենք կանգնացրել, — յեթե քանդիկի ; մեր
գործը նորից կդժվարանա :

ՍԵԹՈՒ — Կուլակներն եւ հենց ըտեղ մի բանի յեն ըստասում :

ԱՐԴԱՎ. — Ճիշտ ե, նրանք քնած չեն: Նրանք գիշեր-ցերեկ մտածում են, թե վոնց անեն, վոր մեղ վնաս հասցնեն:

ՍԵԹՈՒ — Յես դրանց հերն անիծեմ: Կոլխոզը դրանց աչքին փուշ աղառել: Նրանք մեր հաջողությունը տեսնում են, ապելի յեն կատաղում:

ԱՐՇԱՎ. — Նրանց կատաղությունը վնասից ավել մեղ ոգուտ չի տա: Հարկավոր ե, վոր մենք նրանցից զգույշ լինենք:

ԱՐՇՈՒ — Լսիր, իմ սիրու կասկած ընկալ: Արի հենց ես որպանից խոտի վրա հսկողություն նշանակենք: Եղ շանվորդիքը վախում եմ գչերը դան, խոտի դեղը կրակ տան:

ԱՐՇԱՎ. — Լրադրում դրված եր, վոր կուլակները մի քանի տեղ եղ փորձը կատարել են:

ՍԵԹՈՒ — Յես դրանց հերն անիծեմ, դրանցից ամեն ինչ ապասելի ա:

(Գեղամը ու Սհակը խոսելով գալիս են)

ԳԵՂԱՄ — Սհակ բիծա, տեսնո՞ւմ ես, ինչ տեմպով ենք աշխատում:

ՍՀԱԿ. — Եղ տեմպ խոսքը չեմ հասկանում, բայց թե կրակի կտոր եք: Զեր աղբաթը իսեր ըլի, եսոր յեթե դուք չդայիք և մեղ քոմագ չանեյիք, ես բամբակը չոլում կմնար:

ԳԵՂԱՄ — Բայց թե չմնաց: Սհակ բիծա, կոլեկտիվ աշխատանքը եսպես ա: Մենք ձեզ կողմենք, դուք մեզ կողնեք:

ՍՀԱԿ. — Իհարկե մենք մեկ-մեկու պտենք քու մագ անի, վոր մեր ընդհանուր գործը առաջ ընկնի:

ԿԱՐՈՒ — Ընկեր գեղամ, մենք մեր աշխատանքը վերջացրինք:

ՈՀԱՆ — Գնամ շոփիքերին ասեմ, մեքենան պատրաստի: (Դուրս և դնում):

ՆԱՐԳԻՉ — Եղ ինչի՞ մասին եք խոսում:

ԳԵՂԱՄ — Վոչինչ, Սհակ բիծի հետ հենց ենակես զըռույց ենք անում:

ԱՐՇԱՎ. — Մի ուրիշ ժամանակ կգաք զրույց կանեք: Հիմա մութն ընկնում ե, դուք առավոտ դորնի յեք դնալու, ճանապարհից միք ուշանա, գնացեք:

ԳԵՂԱՄ — Ա, չտոժ, գործն արդեն վերջացրել ենք. կարող ենք գնալ: Ընկերներ, պատրաստվեք, մենք ճանապարհվում ենք:

ԲՈԼՈՐԸ — Մենք պատրաստ ենք: (Գործը քողնում են և հավաքում Գեղամի շուրջը, իսկ ալտօյի սիգնալը շարունակ տալիս ե):

ԳԵՂԱՄ — Յտեսություն, ընկերներ: (Բանվորները միասին նույնը կրկնում են:)

ԱՐՇԱՎԻՐ — Յտեսություն, բարի ճանապարհ: Կոլխոզիկները նույնին բոլորը միասին կըրկնում են Արշավիրի ասածները: Այնուհետև բանվորներ, հեռանում են, իսկ կոլխոզիկները յերկար ժամանակ կանգնած գլխարկները ոդի մեջ նոնում են և շարունակ կրկնում. «Յտեսություն, բարի ճանապարհ» և այլն:

ՏԵՍԻԼ 2

Նույնին և Մարգար

ՍԵԹՈՒ — Ի՞նչ ես ժանդերդ տվել. սուքի ուրբաթը հետո:

ՄԱՐԳԱՐ.—Դե լավ, յեթե սիրտու ուրախ ա, ծափ
տուր, յես պար գամ: Ըսենց ել բան կը ինի, մի
կողմից մենք չինում ենք, իսկ նրանք մյուս կողու
մից զալիս քանդում են:

ԱՐՇԱՎ.—Ի՞նչ կա, ի՞նչ ա պատահել:

ՄԱՐԳ.—Ել ուրիշ ի՞նչ կարելի ա սպասել կուլակնե-
րից. առվի բանդը գնացել նորից քանդել են:

ԲՈԼՈՐԸ.—Առվի բանդը գնացել են քանդել:

ՍԵԹՈ.—Ես նրանց հերն անիծեմ: Տեսնում եք, գըլս-
ներիս ինչ ոյին են բերում:

ՄԱՐԳ.—Են որը մենք չինեցինք, իսկ եսոր նրանք
քանդեցին: Դե հմի արի գնա եդ բանտի վրա
նորից մի տասը որ կորցրո՞ւ:

ՍԵԹՈ.—Ես զահրումարն առանց են ել մենք ճեղքվածք
ունենք, յեթե եղ բանտի վրա նորից մի տասը որ
կորցնենք, ճեղքվածքը վորոշված ժամանակու-
միջում վերացնել մենք չենք կարող:

ՄԱՐԳ.—Կանգնել խոսալով բան դուրս չի գա: Եղ առ-
գով յեթե ես յերկու որս ջուր չգնաց, մենք կո-
րած ենք:

ԲՈԼՈՐԸ.—Գնանք տեսնենք՝ ինչ ենք անում: (Բոլորը
միասին գուրս են գնում):

ԲԵՄԸ ՄԹՆՈՒՄ Ե

Տ Ե Ս Ի Լ Յ

Դանել, Շմո, իետո Գարանիմ և տերտեր

ՇՄՈ.—Են որն ել դու ինձ խոսք տվիր, յեթե կովսողից
յես դուրս գամ, աղջիկը տալու յես ինձ, բայց
թե չտվիր:

ԴԱՆԵԼ.—Աղջիկս չամաձայնվեց:

ՇՄՈ.—Դե լավ, աղջիկը հմի համաձայնվո՞ւմ ա, վոր
խոսք ես տալիս:

ԴԱՆԵԼ.—Յեթե չամաձայնվեր, եսոր յես քեզ խոսք
չեյի տա: Վոր խոսք եմ տալիս, նշանակում ա,
վոր նրա համաձայնությունը կա: Լսիր, նա քեզ
սիրում ա, նրա սիրող կպել ա քեզ: Քու մասին
են որը խոսք ընկալվ. նա ասում եր, վոր յեթե
ինձ Շմոյին չտաք, յես իմ զլուխը կսպանեմ:

ՇՄՈ.—Դրո՞ւմ ես ասում, Դանել աղա:

ԴԱՆԵԼ.—Սուտ առելու ի՞նչ ունեմ: Ուրեմն, դու ինձ
չե՞ս հավատում:

ՇՄՈ.—Հավատում եմ:

ԴԱՆԵԼ.—Դե պրծավ գնաց: Նշանակում ա, վոր մենք
մեր պայմանը կապեցինք վերջացրինք: (Գարա-
սիմն ու տերտերը ներս են գալիս) Հրես սրանք
ել եկան: Ես մարդկանց ներկայությամբ խոսք
եմ տալիս, վոր յեթե եղ գործը դու կատարես,
յես իմ աղջիկը տամ քեզ:

ԳԱՐԱԾ.—Դանել աղան խոսքի տեր մարդ ա. նա վոր
մի բան ասեց, կանի: Դրա մասին դու բոլորու-
վին անհոգ յեղիր:

ՏԵՐՑԵՐ.—Արդար խոսք ա, Դանել աղան, վոր խոս-
տանում ա՝ նշանակում ա, վոր իր խոսառմը նա
անշուշտ կկատարի:

ԴԱՆԵԼ.—Դրանում կասկած չկա:

ՇՄՈ.—Վոր ըտենց ա, թող մի քիչ մտածեմ:

ԴԱՆԵԼ.—Մտածելու կարիք չկա: Յես քեզ վոնց վոր
ասում եմ, դու գնա ընենց արա:

ԳԱՐԱԾ.—Ճիշտ ա ասում, Դանել աղան վոնց վոր ա-
սում ա, դու գնա ընենց արա: Զուր տեղը ժա-
մանակ մի կորցրու:

Ահակ, շոփիեր և գյուղացի

ՍՀԱԿ.—ի՞նչ ես սհաթ բե սհաթ սվիստոկ տալի, չես
տեսնում, վոր սվիստոկի ձենից եշս խրտնում ա:

ՇՈՅՑԵՐ.—Դե լավ, յես ի՞նչ անեմ, վոր քու եշը սը-
վիստոկի ձենից խրտնում ա: Նրան խրատ տուր,
վոր ուրիշ անդամ չվրտնի:

ՍՀԱԿ.—Կոռպերատիվի ապրանքը բա, վոր հմի կոր-
չի, դու պատասխանատու յե՞ս:

ՇՈՅՑ.—Բա վոր սվիստոկ չտամ, ավտամարիլի տակ
մարդ ընկնի, դու պատասխանատո՞ւ յես: (Դուրս
ե գնում):

ՍՀԱԿ.—Շան լեզուն բերանումն ա:

1 ԳՅՈՒՂ.—Ընենց խոսում ա, կասես ես յերկրի տերը
մենակ ինքն ա:

Նույնի և Ավետիք

ԱՎԵՏԻՔ.—Գչերվա կեսին ես ինչ զալմաղալ եք բարձ-
րացրել:

ՍՀԱԿ.—Ախաբեր ես աֆտամարիները մեզ շատ են քյոլ-
լուղ տալի: Բաենց բան չիլինի: Շոփիերը սվիս-
տոկա թե ինչ զահրումարա փչեց, նրա ձենից
եշս խրտնեց գնաց ընկավ չոլերը: Բա սա որենք
ա:

ԱՎԵՏԻՔ.—Դե լավ, շոփիերը ի՞նչ մեղավոր ա, վոր
քու եշը աֆտամարիլի ձենիցը խրտնում ա:

ՍՀԱԿ.—Շոփիերը մեղավոր չի, բա յե՞ս եմ մեղա-
վոր:

ԱՎԵՏԻՔ.—Դե լավ, ասենք թե նա ա մեղավոր, աես-

ՏԵՐՏԵՐ.—Արդար խոսք ա, ժամանակը թանդ արժի,
Դանել աղան վոր վոր ասում ա, դու դնա ընենց
արա:

ՇՄՈ.—(Մի քամի քայլ գնում ե և կրկին վերադառ-
նում) Զե, յես չեմ անի, յես վախենում եմ:

ԳԱՐԱՍ.—Այ շաշ, եղ խոսքը մի ասա, Դանել աղան
վոր իմանա դու ըտենց վախլուկ ես, նա իր աղ-
ջիկը քեզ չի տա: Դու գիտես, վոր նրա աղջկա
համար ուրիշները դլուխ են կոտրում: Աշխարհը
վոր քանդես, դու նրա պես տեսքով աղջիկ չես
ճարի: Բա ափսոս չի՝ նրա պես իրուն աղջկան
ճեռքից տաս:

ԴԱՆԵԼ.—Զի ուզում, թող մնա: Ատիպելու կորիք
չկա: Եղ գործը յես ուրիշն հանձնարարեմ:

ԳԱՐԱՍ.—Ուրիշն հանձնարարելու կարիք չկա: Ես
մարդը համաձայնվում ա: Դե ասա, գնո՞ւմ ես,
թե չե:

ՇՄՈ.—Գնում եմ:

ԴԱՆԵԼ.—Գնա, մի վախի: Մէնք եստեղ կունդնած
ենք: Յեթե ուրիշ մարդ գալու ըլի, մենք քեզ
իմաց կտանք:

(Շմոն գնում ե)

ԳԱՐԱՍ.—Գնաց ...

ՏԵՐՏԵՐ.—Գնաց ...

ԴԱՆԵԼ.—Լսեցեք, ինչ եմ ասու: Նա իր չործը կվեր-
ջացնի թե չե, իրան ել հարկավոր ա տեղն ու
տեղը ...

ԳԱՐԱՍ.—Հասկանալի ա ...

ՏԵՐՏԵՐ.—Մեշոկը յես վաղորոք բերել պատրաստե-
կմ:

ԴԱՆԵԼ.—Սա՛, մարդ ա գալի քաշիք դրադ: (Դուրս
են գնում)

նում եք վոր սաղ գեղը քնածա, դուք ես գշերիս
կեսին դալմաղալ եք զցել թե ինչ :

ՍՀԱԿ.—Բա վո՞նց անեմ մի անդամ չի, յերկու անդամ
չի, ամեն անդամ եղ զահրումար աֆտամաբիլի
ձենից եշ խրտնում ա, բեռը վրիցը չուռ տալի
գնում ընկնում սար ու քար : Դե արի գնա նրա
հետեւից երկու սհաթ ման արի, նրան դթի, ծե-
ծելով-բղելով վերցրու բեր ու դուդ ճամբի վրա
կանգնացրու, բայց թե բեռ վրեն չերած են կող-
մից մի ուրիշ աֆտամաբիլա դուդուալով դալի,
խեղճ հեյվանը նորից խրտնումա, բեռը վրից
շուռա տալի գնում ընկնում սար ու քար, ախպեր
դե յես ել հալիվոր մարդ եմ, նրա քամակից ա-
մեն անդամ Հո չեմ կարա դնա :

ԱՎԵՏԻՔ.—Դե լալ հմի ինձ վոր ասում ես, յես ինչ
անեմ : Ավելի լավա եղ շոփիերների հետ դուք
ինքներդ խոսաք և հարցը ինքն ըստինքյան
կլուծվի :

1. **ԳՅՈՒՂ**.—Մեր տօելն նրանք անդաջ չեն անում :

ՍՀԱԿ.—Շոփիերները դու գիտես, վոր բերանները
պատռած, աներես մարդիկ են . նրանց հետ վոր
խոսում ես, նրանք ընենց խոսքեր են ասում, վոր
մի տասն ու չորս շահի ել մենք ենք մնում նր-
րանց պարտ :

ԱՎԵՏԻՔ.—Հետաքրքիր ա ի՞նչ են ասում, վոր նրանց
ասածներին դուք չեք կարում պատասխան տաք :

ՍՀԱԿ.—Ասումա, ես քյավառա պոեղին ել հո, թամամ
զահլաներո տարավ : Դուք ձեր եշերով դոմեշի
ու յեղան արաբաններով ասումա, ճամբեն զանիս
եք արել, ու ել մեզ հնարավորություն չեք տալի,
վոր մենք աշխատենք :

1. **ԳՅՈՒՂ**.—Ձեր պատճառով, ասումա, մաշինեն են-
քան դես դեն ենք չուռ ու մուռ տալի, վոր չուռ
շուռ փչանումա և մեր երեսը ասումա խոսքա
դալի :

ԱՎԵՏ.—Դե սուռ Հո չի ասում : Յանի եղ զահրու-
մար ճամբեն Հո մենակ ձեղ չե՞ն տվել . հնարա-
վորություն տվեք նրանք ել աշխատեն : Յերթե-
վեկությունը ինչի՞ եք խանգարում, չե վոր եղ
շոփիերներն ել պիտական ծառայողներ են և մա-
շինեն ել պիտական ապրանքա, ինչի՞ զուր տեղը
փչանա, չե վոր նրան փողա տված :

ՍՀԱԿ.—Բան չեմ ասում գե վոր եշ անլեզու Հելմա-
նա, եղքան տեղը չի հասկանում :

ԱՎԵՏ.—Եշը վոր չի հասկանում, դու Հո՞ հասկանում
ես : Եղ զահրումար յանի ի՞նչ կլինի ճամբի մի
զրադով քշեք-դնա : Մի դարդակ բանի համար
ինչ եք զուր տեղը խայլին գլխացավանք պատ-
ճառում :

1. **ԳՅՈՒՂ**.—Բա վո՞նց անենք գյուղիսորհրդի նախա-
գահ ես . որենքն ու իրավունքը քու ձեռինա,
դրա համար մի կարգադրություն արա :

ԱՎԵՏ.—Որենքն ու իրավունքը, վոր իմ ձեռքինա, գր-
րանում կասկած չկա : Բայց թե եղ չի նշանա-
կում, վոր յես պիտական գործերը երեսի վրա
պտեմ թողնի ու դա քու եւի խնդրով զրադի :
Առանց են ել ինձ աջ թեքման մեջ են մեղադրում,
ըտենց մի կարգադրություն ել, վոր անեմ, ա-
ջությունը վրաս թամամ կհաստատվի : Զե, ը-
տենց բան յես չեմ անի, զնա խաթագ ինձանից
քաշի... (ուզամ և դուրս զմա) .

ՍՀԱԿ.—Գնում Ե՞ս :

ԱՎԵՏ.—Բա Հո սունգ չե՞մ մնալու :

ՍՀԱԿ. — Բա յես վո՞նց տնեմ.

ԱՎԵՏ. — Վո՞նց ուզում ես արա. դա իմ գործը չէ.

1. ԳՅՈՒՂ. — Մի կարգադրություն անելիք ու ընենց դնայիր:

ՍՀԱԿ. — Կոռպերատիվի ապրանքը բա վոր կորչի նրա տակից ել յես կարամ դուրս գա, խեղճ մարդ եմ, ալիր, յես ել մեղքեմ...

ԱՎԵՏ. — Ես ինչ անհասկ մարդիկ են, յես բանեմ առում, սրանք հենց իրանց եշեն են քշում: Յես դարձանում եմ, դուք ես աշխարհում չե՞ք ապրում: Ես անցու դարձից բա դուք տեղեկություն չունե՞ք: Համագումարներում բա ես քան խոսում են, ճառում են, վորոշումներ են դուրս բերում, բա դուք սկի չե՞ք հետաքրքրվում:

ՍՀԱԿ. — Դե լավ, համագումարների ճառերն ու վորշ շումներ իմ եշի հետ ի՞նչ կապ ունի:

ԱՎԵՏ. — Վո՞նց թե ինչ կապ ունի: Լսիր, մեր յերկիրը ինդուստրիալ յերկիրա: Ծեկոնստրուկտիվ շրջանն ենք անցել: Քիմիային և ծանր արդյունաբերությանն ենք զարկ տալի: Գործարանները ժեխանիղացիայի յենք յենթարկում: Գյուղերում ու քաղաքներում ելեկտրոֆիկացիա յենք անց կացնում: սոցիալիզմ ենք կառուցում: Քու եւ կամ թե նրա յեղան ու գոմեշի արարան ել սրա նից հետո ի՞նչներիս ապետք... Որես դենը մեր ճամբեքով ափտամարիլ, տրամվայ, յերկաթուղի, աերոպլան. ըսենց բաներ ա վազլղելու: Ուզի, իսոսքով մեզ տեմպ ա հարկավոր, տեմպ... դու հասկանում ես, տեմպը ի՞նչ բան ա:

ՍՀԱԿ. — Ձեմ համեստում:

ԱՎԵՏԻՔ. — Դե վոր չես հասկանում, դնա հասկացի, (դուրս ե գնում)

Սիակի ու 1 գյուղացին յերկար ժամանակ կանգնած միմյանց յերեսի յեն նայում

1. ԳՅՈՒՂ. — Են ի՞նչ բան ա, կոլխոզի պահեստը կը բակ ա ընկել:

ՍՀԱԿ. — Տունդ քանդվի, բա ել ո՞ւր ես կանգնել: Գնա Արշավիրին, Սեթոյին խմաց արա, թող գան, զե շուս, վաղի, ել մի կանգնի: (Դուրս են գնում)

ՏԵՍԻԼ 6

ԴԱՆԵԼ, Գարասիմ և տերսեր

ԴԱՆԵԼ. — Նա դեմ ա գալու, դենը գնալու ել ուրիշ ճամբա չկա:

ԳԱՐԱՍ. — Գալիս ա, ձեն միք հանի:

ԴԱՆԵԼ. — Տեր հայր, դու մեշուլը հանի պատրաստ պահի յես նրան կխոսացնեմ, իսկ դուք ձեր գործը կտեսնեք:

(Շմալկնը վագելով զալիս ե նրանց մոտով անցնելու)

ԴԱՆԵԼ. — Գործդդ կատարեցիր, վերջացրի՞ր:

ՇՄՈ. — Վերջացրի:

ԴԱՆԵԼ. — Ապրես: Դեսն արի քեզ բան պտեմ ասի: Լը սիր, առավոտը կդաս մեր տուն քու հարսանիքի մասին կխոսենք:

(Գարասիմ ու տերտերը նրա հետեւից հանկարծ զալիս են, բռնում մեղուկը գլխով անցկացնում)

ՇՄՈ. — Կուլակներն ինձ սպանեցին, ողնեցեք:

ԴԱՆԵԼ. — Ձենդ կտրի, շուն շան վորդի... (Շմային խեղդում են)

ԳԱՐԱՍ. — Վերջացրի...

ՏԵՐՏԵՐ. — Հոգոցն համբուցելոց . . .

(Յեկեղեցու զանգերի ձայն, ազմուկ իրարանցում)
ԴԱՆԵԼ. — Անիծվածները շուտ իմացան: Գալու յին կը-
րակը հանդցնեն:

ԳԱՐԱՍ. — Մինչև նրանք կդան, խոտի հետ պահեստի
բամբակն եւ կվառվի:

ՏԵՐՏԵՐ. — Գալիս են. դանք . . .

ԳԱՐԱՍ. — Գնանք . . . (դուրս են զնում) (կոլխոզնիկնե-
րը ներս են գալիս, ձեռին կժերով ու վեդրոնե-
րով զուր, լազուրներ և կրակը համացնելու հա-
մար զանազան գործիքներ)

ՏԵՍԻԼ 7

Արշավիր, Սերո, Համբո, Սիակ, Սահամ, Նարգիզ,
Զմբուխտ, Հրուշ, Հերիքնազ, հետո Ավետիք, Տիգրան
և ուրիշներ

ԱՐՇԱՎ. — Կրակը քիչ ա մնացել հասնի պահեստը:
Շուտ արեք հասեք:

ՄԵԹՈ. — Խոտի բանը արդեն վերջացավ: Պահեստում
յեղած բամբակը դոնե կարողանանք փրկել:

ՄԱՐԳԱՐ. — Ախ, թէ կիմանամ ես կրակը ո՞վ ա դցել . . .

ԲՈԼՈՐԸ. — Կուլակների արած բան ա . . .

ՀԱՄԲՈ. — Եես դրանց հերն անիծեմ: Դրանք մեղնեց
ձեռ չեն քաշում . . .

ԱՐՇԱՎ. — Կանգնել խոսալու ժամանակը չի: Պահեստի
դուռը կոտրեք, բամբակը դուրս բերեք:
(պահեստի դուռը կոտրում են և մեշոկներով
բամբակ դուրս բերում):

ԱՎԵՏԻՔ. — Մի Փանար բերեք դեռը, ըստեղ ինչ վոր
մեշոկ ա ընկած:

ՆԱՐԳԻԶ. — (Լապտեր ձեռին) Տեսնեմ, եղ ի՞նչ ժեշտի

ա:

ՏԻԳՐԱՆ. — Լուս արա: (մեշոկը բաց ե անում և հան-
կարծ բոլորը միասին վախեցած հետ-հետ են
ժաշվում)

ՏԻԳՐԱՆ. — Այ խալիս, դեսն եկեք, եստեղ մարդ են ու-
պանել:

(Բոլորը հավաքվում են)

ԱՎԵՏԻՔ. — Նախքան ձեռ տալը, հարկավորա արձա-
նագույթյուն կազմել:

ԲՈԼՈՐԸ. — Արձանագույթյան ժամանակը չի. Հանեք,
տեսնենք եղ ո՞վ ա . . . (դիակը մեշոկից հանում,
դնում են զետին)

ՄԵԹՈ. — Շմոն ա: (Բոլորը ապշած նայում են)

ՎԱՐԱԳՈՒՅՑ

ՅԵՐՈՐԴԻ ՊԱՏԿԵՐ

Բեմը ներկայացնում է Դանել աղի բնակարանի տուաշ։ Ազ ու ճախ փողոց, իսկ դիմացի կողմը Դանել աղի տունը։ Փողոցի վրա դուռ և լուսամուտ։ Կես որ է։

ՏԵՍԻԼ 1

Քո և Սիակ

ՍՀԱԿ — Գնացել եմ մտել գոմը և ի՞նչ եմ տեսնում։ Իրանց յեզների ու ձիաների առաջ յոնջան գեղ են արել, իսկ իմ կովն ու եւը դարդակ ախոռի առաջ կանգնած, մտիկ են տալիք։ Բա ըսկնց անխիզ բան կրոնե՞ն։ Յես իմ տավարին բա ըսկնց եմ մտիկ տվել։ յես նրանց աչքի լսի նման պահել եմ, նրանց վախտին ջրել եմ, վախտին կեր եմ տվել։

ՍԵԹՈ — Սհակ բիձա, դու եղ ի՞նչ բաների մասին ես մտածում։ Կոլխովի գոմը տավարը վոր իր վոտը ներս դրեց, ել նա վոչ իմն ա, վոչ քուն։

ՍՀԱԿ — Վո՞նց թե։ ուրեմն, քու ասելով, ել սրանից հետո յես իմ ապրանքի տերը չեմ։ Կոլխովն ամեն ինչ սեփականե՞ց։

ՍԵԹՈ — Սհակ բիձա, կոլխովն ուրիշ, մենք ուրիշ։ Կոլխովը հենց մենք ինքներս ենք։ Կոլխովում իմ ու քունը չկա։ Կոլխովի ամբողջ ունեցվածքը մեր բոլորի սեփականություն ա։

ՍՀԱԿ — Վոր ըտինց ա, վնաս չունի։

ՍԵԹՈ — Ըտենց ա, Սահակ բիձա, մտքովդ ուրիշ բան թող չանցնի։

ՍԱՀԱԿ — Հակառակ չեմ։ Եղ կոլխովը թող ըլի։ բայց թե չի՞ կարելի, վոր սրանից հետո իմ կովը իմ տանեցիք դան կթւն, — դե դիտես ելի, կիմի արմատի խասիաթ ա, նա վոր տեսնում ա իր կովն ուրիշն ա կթում սիրտը պակասում ա։

ՍԵԹՈ — Լավ, կկարդաղրեմ, վոր սրանից հետո, ձեր կովը դուք դնաք կթեք։

ՍՀԱԿ — Կաց, մի բան ել հարցնեմ։ Յես իրավունք ունիմ։ վոր որը մի անդամ դոմը մտնեմ, իմ եշը թիմարեմ։

ՍԵԹՈ — Ինչի չե։ ամեն ժամանակ ել դու իրավունք ունեն։ (Դուքս ե գնում)

ՍՀԱԿ — Որիշ բան պտեի հարցնի մոռացա։ (Մտածում ե) վիտս չունի, ուրիշ անգամ վոր միտո դա, կհարցնեմ։

(Սիակը կանգնած մտածում է։ Մարգարը կոլխովների հետ ներս ե գալիս)։

ՏԵՍԻԼ 2

Մարգար, նարգիզ, Զրուշ, Զմրուխտ, Սիակ և Համբու.

ՄԱՐԳԱՐ — Ինչ ուզում ա ըլի, ես որ մենք Դանել աղի տան վեչչը պտի կրենք վերջացնեն, վոր եղուց առավոտվանից կոլխովի գրասենյակը տեղափոխվում ա ըստեղ։

ՀԱՄԲՈՒ — Դե լավ, բա որանք վոր ըստեղ են.

ՄԱՐԳԱՐ — Հմի դրանց դարդն ենք քաշելո՞ւ։ Զհանդամը դրանց դլուխը, յեթե չկարացինք հասցնել, դուքս կանեմ, դուռը կկողպեմ կզնամ, միկնույն

ա, սրանց մինչև տռավոտ նա ժամանակ տրված տռավոտը գնում են.

ԶՈՐՈՒԹՅՈՒՆ — Թող դնան կորչեն — տեղներս կլենանք. (ներս են գնում իսկ Դանիելն ու Գարասիմը ներսից խոսելով դուրս են զալիս) :

ՏԵՍԻԼ 3.

Դանիել և Գարասիմ

ԴԱՆԻԵԼ — Դուրս դամ, թող աչքու չտեսնի, տան ելած չելածը տանում են...

ԳԱՐԱՍԻՄ — Իմ տանը, վոր ասեա մի տաեղ յեն թողել դիմի հավաքել տարել են:

ԴԱՆԻԵԼ — Թող տանեն, յես սրանց ավազակ հերն անիծեմ: Դալստանի սարերում բուն դրած դաշաղները են չեն անի, ինչ վոր սրանք են մեղ անում: (Ժամացույցին նայում ե) սպասի յերկու սհաթից հետո, յես սրանց հետ կիսում: Շուն շան վորդիք, յես ձեր գլխին ընենց մի ոյին կանդնացնեմ, վոր դուք ձեր գնալու ճամբեն մոռանաք: Հերիք ա, մեղ հոգի հավատից հանեցիք: Դուք մեղ սադ սադ սադ զերեզման եք ուզում դնեք, եդ ձեղ չի հաջողվի ...

ԳԱՐԱՍԻՄ — Կամաց խոսա, կլսեն:

ԴԱՆԻԵԼ — Լսում են թող լսեն ... ջուր ընկնողը ել անձրելից չի վախենա: կատաղությունից քիչ ամսում վրա ընկնեմ ես պատերի քարերը կոծեմ: Տանել չեմ կարողանում, յերբ վոր տեսնում եմ, երեկով իմ նոքարը ես որ գլխիս տերն ա դառել ելիկել իմ տնից ինձ դուրս ա անում:

ԳԱՐԱՍԻՄ — Կամիոի նախագահը վոնց վոր երեխում ա ձեր դյաղան ա.

ԴԱՆԻԵԼ — Դրա համար ել կատաղած շուն ա դառել ընկել ջանս:

ԳԱՐԱՍԻՄ — Սրանք մեղ զինաթափ են անում, վոր բարքի կարողանան իրանց սոցիալիզմը կառուցեն:

ԴԱՆԻԵԼ — Խալիսի տները քանդում են, թե ինչա՞ իրանց համար սոցիալիզմ են կառուցու՞մ: Թող դան մեղ ել հարցնեն, տեսնեն մենք եդ սոցիալիզմը ուս զու՞մ ենք. մենք չենք ռեղում, մենք համաձայի չենք, իրանց կամքը թող զսոով չփաթաթեն մեր վկին: Սեփական իմ մի կաոր հողը ինձ համար հաղար անդամ լավ ա, քան զրանց ամբողջ սոցիալիզմը:

ԳԱՐԱՍԻՄ — Եդ ել հարցա. ովա՞ իմանում սոցիալիզմը ըլելու ա՞ թե չե: Տրոցկին ինքն իրա բերանովը ասելա, վոր եդ սոցիալիզմը մի յերկում գլուխ գալու բան չի:

ԴԱՆԻԵԼ — Տրոցկին ինչ ուզում թող ասի, սրանք իրանց ասածը անում են: Մինչև առավոտ մեղ ժամանակ են տվել, լիսը բացվեց թե չե անիծվածները մեզ քշում են: Ես ամարաթի պես սարքած տուն ու տեղը պտեմ թողնա, ես ձուն ու ձմեռ ժամանակ գնա ընկնի չոլերը ... Ասում ես մի խոսա, աիր վոնց չխռամ: սիրոս բողմից տրաքվում ա ... (Մտածում ե).

Աիր թե մերոնք կդան. մենք սրանց ցույց կտանք քշելը ինչպեսա հարկավոր ...

ԳԱՐԱՍԻՄ — Յես իմ հույսը չեմ կտրել. ինձ թվումա, վոր մերոնք կդան... նշանակված ժամանակը մոտենումա. քիչ ել սպասենք: (Խորխում շատ հեռվից լսվում ե հրացանի տրաքոց).

ԴԱՆԵԼ. — Կասես թվանդի ձեն եր.

(Նստած տեղից վեր և բռչում.)

Գարաս. — Ինձել թվաց, վոր թվանդի ձեն եր... գնանք
տեսնենք, մերոնք կլինեն:

ԴԱՆԵԼ. — Գնանք:

(Դանելն ու Գերասիմը դուրս են գնում).

Տ Ե Ս Ի Ը Լ 4

Համբո, Սիակ, Նարզիզ, Զմբուխտ և հետա
Մարգար: Բալորի ձեռին տնային իրեր. իսկ
Մարգարի ձեռին մի ցուցակ և մի կողպեք:

ՀԱՄԲՈ. — Յես ձեզ ասում եմի, վոր Դանել աղի տան
վեշը ուիփից շատ կլինի:

ՆԱՐՅ. — Թող շատ ըլի. դարսելու տեղ վախում ես
չճա՞րիի:

ԶՄԲՈՒԽԻՍ. — Կոլխողը հմի վոր կհարստանա:

ՀՅՈՒՇ. — Նրանց ել մի հարցըրուե. մեր ու աղջիկ նըս-

տեր լաց են ըլում:

ՄԱՐԳԱՐ. — Վնաս չունի. թող լաց ըլեն: Նրանց լաց
ըլելով աշխարհը ըլ քսնդվեց: Թե սրտներդ ցա-
վումա, հանեք վրհերիդ շապիկը տվեք նրանց:

ՀԱՄԲՈ. — Վախում ես չվերցնե՞ն կվերցնեն:

ՄԱՐԳԱՐ. — Դե գնացեք, ել միք կանդնի: Մի վոտ ել
վոր դաք տանեք, ել րան չի մնա... յես հստեղ
ձեղ կոպասեմ: (Նստամ և քարի վրա) .

ԱՀԱԿ. — Եշա կրերեյի, մի քանի վոտ կունեյի կվեր-
ջանար:

ՀԱՄԲՈ. — Դու ել քառ եշովդ խալին զարժացըք: Ըս-

կի առաջ: Դանել աղին տան վեշը՝ իմ տան վեշ-
ը, վոր մի քանի վոտ տանելով վերջանար: (Բա-
ցի Մարգարից բոլորը գնում, իսկ Մարգարը
մուծում ե).

ՄԱՐԳԱՐ. — Դանել աղին, վոր քչում ենք, ես յալա,
բայց թե Յեղոսն ել նրա հետ գնումա ևս, մեկը
սկի լավ չի... (մտածում և յերկար ծամակալ) թե
վերցնեմ զոռով փախչեմ... մեր որերում, դա մի
քիչ անվայել բանա. իբր կամքով վոր դար, լավ
կլներ. բայց չի գալի. Հորից վախումա: Ինչ ա-
նե՞մ, մնացել եմ յերկու սրի արանքում: Թե բայց
թողնեմ գնա. ի՞նչ անեմ... դեռ չի զնացել հմիկ-
վանից պրոտիններս սկսում ա բոշա-
նալ... Ես ի՞նչ ախմախ բաներ եմ ասում. հան-
կարծ մի ուրիշ կլիսի վրես կծիծաղի... ու ի՞նչ
անեմ. բա վոր սկրում եմ... յես մեղագո՞ր եմ,
վոր նա կուլակի աղջիկա:

Տ Ե Ս Ի Ը Լ 5

Մարգար, Յեղոս և Հեղիմար.

ՀԵՂԻՆ. — Մարգար, բա ես բանա՞ վոր դու ես բերում
մեր գլախին: Ելած չելածը հավաքեցիր տարար,
մեզ թողիր են չոր գետնի վրա:

ՄԱՐԳԱՐ. — Ես քան տարի ուրիշները, վոր չոր դետնի
վրա եյին, մի որից մի որ նրանք եկել քեզ դան-
գատվե՞լ են: Մեր ու աղջիկ ընենց սուզ ու շր-
վան եք բարձրացրել, կասես աշխարհը ուլիմերից
փուլա եկել: Կամ թե չե տարածներս ինչա, ար-
ժեքավոր բաները առաջուց վերցրել պահել եք:

ՀԵՂԻՆ. — Բա եդ խալիները, եդ աբրեշումի յորդան

դոշակը քի՞չ բանա, վոր տանում եք: Առանց դը-
րանց մենք վո՞նց ենք յոլա գնալու:

ՄԱՐԴԱՐ — Ուրիշները վո՞նց են յոլա գնում.

ՀԵՂԻՆ — Ուրիշները սովորել են.

ՄԱՐԴԱՐ — Դուք եւ կսովորեք... կամ թե չե, մենակ
դուք հ՞ք: Հրես յուցակը ինձ մոտա: Աւզում
եք բոլորի անունները մեկ մեկ կարդամ, աևսեք
ումնից ի՞նչ ենք վերցրել.

ՅԵՂՍՈ — Եդ յուցակը ի՞նչիա քու մոտ:

ՄԱՐԴԱՐ — Կամ իսի նախագահը յես եմ, վո՞նց թե
յուցակը լնչի՞ա քու մոտ: Ապակուլականացման
աշխատանքները մեր գեղում իմ կարգադրու-
թյամբա կատարվում:

ՅԵՂՍՈ — Եդ յերպանիցու պաշտոնդ ըտենց մեծացել:

ՄԱՐԴԱՐ — Են որվանից, վոր ձեր տնից դուրս եկա.

ՀԵՂԻՆ — Բա վոր ըտենց մեծ պաշտոն ես ունեցել, ին-
չի՞ մեզ չպաշտպանեցիր. ախր դու մեր տանը
ենքան տարի մնացել ես, մեր աղու ահացը կե-
րել ես.

ՄԱՐԴԱՐ — Աղ ու հացը մեջ բերելու կարիք չկա:

ՀԵՂԻՆ — Վո՞նց թե կարիք չկա: Մենք քեզ ըտենց ենք
մտիկ տվել—ըտե՞նց ենք պահել:

ՄԱՐԴ — Գիտեմ վոնց եք պահել: Վո՞նց եք մտիկ
տվել... մի ջուխտ տրեխների մայլաթը ինչ եր,
վոր խայում եյրիք տաք, գցեմ վոտներս ձեր
գործն անհմբ: Բորբկ վոտներով քարերի վրա
ենքան մանեյի եկել. վոր քարերի ճղած տեղից
արին եր գնում.

ՅԵՂՍՈ — Եդ խոսքերը մի ասա... (յերեսը դարձնում
ե և սկսում ե ենկիկալ).

ՄԱՐԴ — Իհարկե, ավելորդա, վոր ես խոսքերը եսոր
եստեղ ասում եմ. ձեզնից վրեժ լուծելու համար
չի, վոր յես ես բանն անում եմ: Դուք տեսնում
եք վոր սա ընդհանուր ա. սա դասակարդային
կոփա, ես կովում խնայել չկա:

ՅԵՂՍՈ — Դուք կովում եք, իսկ խալիսը ըստեղ սոված
պտեն մեռնի:

ՄԱՐԴ — Մի վախի, դու սոված չես մեռնի, քու հերը
ենքան վոսկեղեն րա ել ինչի՞ համարա պահել:
Այս թե նրա տեղը կիմանամ...

ՅԵՂՍՈ — Ի՞նչ կանեյիր.

ՄԱՐԴ — Կվերցնեյի կտայի կառավարության: Մերոնք
ուշացան: Զեր խառա խուռեքը զնացիք վերցրեք
դուրս բերեք. դուռը կողպում եմ զնամ:

ՀԵՂԻՆ — (Յեղսոյին) լսեցիր ի՞նչ ասեց. Հողը քու շաշ
խելքին: Տես քեզ համար սկի մտածումա, մենք
ջհանդամը:

ՄԱՐԴ — Յերկար բարակ խոսելու ժամանակ չի, յես
զնում եմ.

ՀԵՂԻՆ — Գյուրը դնա, ջհանդամը դնա: Հարամ ըլի մեր
ամակը. անաղուհաց քրդի շուն: Մեր տունը
եկար մարդ առար, ել մեզ բանի տեղ չես դնում:
Քուատոն գու (ներս ե գնում).

ՅԵՂՍՈ — Մեկ տնից դո՞ւրս ես անում ելի...

ՄԱՐԴ — Լունցա երեվում... (կողպիքը ձեռին խա-
ղացնում ե).

ՅԵՂՍՈ — Բա ձեռդ կղորի՞, վոր դու եդ կողպիքը դը-
նես մեր դռան վրա...

ՄԱՐԴ — Լաղաթն ել դրա մեջա, վոր ես կողպիքը յես
իմ ձեռքով պտեմ դնի ձեր դռան վրա.

ԵԵՂԱՌ. — Դու խիղճ չունես... իմ շաջ խելքին առա,
վոր քեզ սիրում եմ...
(Յերեսը դարձնում ե և լաց ե լինում).

ՄԱՐԴԱՐ. — Դե վոր սիրում ես, եստեղ ի՞նչի համար
ես կանդնել, գնանք մեր տուն:

ՄԱՐԴ. — Վոր դամ, ես դուռը ել չե՞ս կողպի:

ՄԱՐԴ. — Կկողպեմ...

(Յեղսն նորից յերեսը դարձնում ե և լաց ե լինում. իսկ խորքում հրացանաձգություն. յեկեղեցու զանգակների ձայն. կամացի նիշ. աղմուկ իրարացում) ես ինչա պատահել, յեկեղեցու գանգակները ևս գշերվա կեսին ինչի՞ համար են ատլի... (Համբոն հրացանը ձեռին վազելով գալիս ե).

ՏԵՍԻԼ 6.

(Նույնի և Համբո)

ՀԱՄԲՈ. — Տունդ քանդվի, բանդիտները գեղին վրա են
տվել, դու կանգնել ըստեղ սերես բացաարվո՞ւմ
դրա ժամանակնա՞, հրեն տղերքը գիրք են բռնել
թշնամու դիմ կուլում են, գնա մի տեղից թվանդ
ճարի գնանք նրանց քոմադ անենք, նրանք նեղ
տեղն են. թշնամին մեղ զոռում ա... (Համբոն
դուրս ե գնում. իսկ Խարզարը մտածում ե).

ՄԱՐԴ. — Դե լալ, հմի թվանդը յես վորտեղից ճարեմ..

ՅԵՂԱՌ. — Կաց. յես կճարեմ... (Աերս ե գնում և հրացան ու պատրանդաշը լիք փամփուշտներով բերում տախս ե նրան). առ վերցրու գնա ընկերներիդ քոմադ արա.

ՄԱՐԴ. — Յեղսոս, յես քեղանից անչափ չնորհակալ եմ,

քու Յե լավությունը յես չեմ մոռանա (պատրութաշը կապում ե մեջքին).

ՅԵՂԱՌ. — Դրա ժամանակը չի, վերցրու գնա, ել մի ուշնա, հմի հերս կդա, նրա ձեռից չեմ պլծնի. նրա պահած տեղից եմ. հանել:

ՄԱՐԴ. — Դու նրան կասես, վոր յես եմ հանել. մեղքը ինձ վրա գցի... դե մնաս բարով... ովա՞ իմանում, բալքի ել մենք իրար չտեսնենք... Յեղս ջան ավել պակասը կներես...

(Յեղսոյի ձեռքը տլմում ե, հրացանը վերցնաւմ և դուրս ե գնում: Յեղսն յերկար ժամանակ կամգնած նրա հետեւից նայում ե).

ՅԵՂԱՌ. — Նա ինչի՞ եղ խոսքն ասալ... հողը զԱմիս,
նրան մի փորձանք չպատահի...

ՏԵՍԻԼ 7.

Յեղս և Հերիփնագ

ՀԵՐԻՔ. — Աղջի, դու են ինչ տվիր նրան տարալ.

ՅԵՂԱՌ. — Թովանգներ.

ՅԵՂԱՆ. — Վույ քոռանամ հո: Աղջի, գժվել եր՞: Բա ըսենց վախտը թշնամու ձեռը մարդ թվանդ կտա: Հերիք վոր հմի դա թվանդ ուզի, յես նրան ի՞նչ առեմ, ինչ ջուղաբ տամ: Յեղսն ու Հեղինարք ներս են գնում).

Քարտուղար և գործարկում

ԳՈՐԾԱԲԿՈՄ .—Լսում եմ : Վո՞րտեղից եք խոսում :
ՔԱՐՏՈՒՂ .—Գալկոմից : Ո՞վ ե հեռախոսի մոտ :
ԳՈՐԾԱԲԿՈՄ .—Մեզ մոտ յերկու սմենա յի աշխատում :
Ընկ . Դարբինյան մեր բանվորները բոլորն ել
հարվածայիններ են : Տեմպով աշխատում են : Մի
ցեխը մյուս ցեխին, սոցմրցման և հրավիրել : Ան-
ցյալ յեռամսյակում ճեղքված ունելինք : Վորոշել
ենք այս յեռամսյակում ճեղքվածքը ծածկենք :
ՔԱՐՏՈՒՂ .—Այդ բոլորը լավ ե : Բայց դուք իմ տված
հարցին չեք պատասխանում : Յես ձեզ հարցնում
եմ, ո՞վ ե հեռախոսի մոտ :

ԳՈՐԾԱԲԿՈՄ .—Գործարկոմը :
ՔԱՐՏՈՒՂ .—Ընկեր գործարկոմ . մի ուրիշ անդամ ա-
ռիթ կունենամ ճեր զեկուցումը լուելու . իսկ այժմ
բարի յեղեք Գեղամին կանչել հեռախոսի մոտ :

ՏԵ՛ՄԻ 3.

Քարտուղար և Գեղամ

ԳԵՂԱՄ .—Ալո՞...
ՔԱՐՏ .—Դարբինյանն ե խոսում :
ԳԵՂԱՄ .—Լսում եմ, ընկեր Դարբինյան :
ՔԱՐՏ .—Լսի՞ր Գեղամ : Մի շատ կարևոր գործով ճեր
բնվորների հետ միասին գյուղ պետք ե մեկնես :
ԳԵՂԱՄ .—Հենց հիմա :
ՔԱՐՏ .—Հենց հիմա :
ԳԵՂԱՄ .—Հենչ կա, ի՞նչ ա պատահել : Հարսանիք հո-
գի :
ՔԱՐՏ .—Հարսանիքի նման մի բան ե : Կոլխոզնիկները

ԶՈՐՌՈՐԴԻ ՊԱՏԿԵՐ

ՏԵ՛ՄԻ 1.

Արշավիր և Դարբինյան

Բեմը բոլորվին մութ ե : Արշավիրն ու Գալկոմի
քարտուղարը հեռախոսով միմյանց հետ խոսում
են :

ԱՐՃԱՎ .—Բանդիտները գյուղը շրջապատել են . շտագ
կերպով ոգնություն հասցրեք...

ՔԱՐՏ .—Ոգնությունը շտագ կերպով դժվար թե կարո-
ղանամ հասցնել... տեղական ուժերով դժ-
մադրեք թշնամուն :

ԱՐՃԱՎ .—Հակախորհրդային տարրերը գլուխ են
բարձրացրել և միացել թշնամուն... տեղական
ուժերով յերկար դիմաւէրել մենք չենք կարող...
Տեր դեմ ուժեղ ադիտացիա ե զնում... ժողո-
վուրդը պանիկայի մեջ ե : Շատերը հուսահատվել
են... նրանցից մի քանիսը նույնիսկ անցել են
թշնամու կողմը . իսկ ուրիշերը դիրքերը խողնում
հեռանում են : Դրույթունը լուրջ ե ... խնդրում
եմ շւամալ ոգնություն հասցնեք...

ՔԱՐՏՈՒՂ .—Շատ բարի : Ատրոյ տվեք (Զանգահա-
րում ե) կենտրոն . կենտրոն . թո՞ւ, սատանան
տանի . քնած եք ի՞նչ ե, միացրեք Մեխործա-
բանին : Այո, Մեխործաբան :

Ճեղ հրավիրել են, ճեր ներկայությունը գյուղում
խիստ կարեվոր է :

ԳԵՂԱՄ — Յեթե հարսանիքի համար ե, եղ դեպքում,
լավ կլիներ, վոր նրանց համար մի նվեր տա-
նելինք բանվորների կողմից :

ՔԱՐՏ — Նվեր դուք ուրիշ անդամ կտանեք : Բացի ճեր
հրացաններից այս անդամ դուք հետներդ ուրիշ
բան չպետք է վերցնեք : Շտալեցեք : Ժամանակ
միք կորցնի : Մեքենան այստեղ ձեզ և սպասում :
(Բեմը բոլորովին մքնում ե) :

ՎԱՐԱԳՈՒՅՑ

ՎԵՑԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲԵՄԸ ներկայացնում ե Դանել աղի տան առաջ : Գիշեր
ե : Խորքում հրացանաձգություն :

ՏԵՍԻԼ 1.

Նարեփ, Հյուշ, Զմրուլստ, բանդիտ և ուրիշ կանայք :
(Բանդիտը հրացանը ձեռքին, նրանց առաջն արած բե-
րում ե)

ԲԱՆԴԻՏ — Հակառակվելու ժամանակը չի . ընկեք
առաջ... թե չե հրացանը կքաշեմ ճեղ բոլորիդ
տեղն ու տեղը կսպանեմ :

ԶՄՐՈՒԼՍ — Սպանում ես սպանի . սպանելուց մենք
չենք վախճանում :

ՆԱՐԳԻԶ — Հողս ճեր գլխին, սպանելուց ու թալանե-
լուց ավելի դուք ուրիշ բանի չորհք չունեք :

ԲԱՆԴԻՏ — Ասում եմ ճենդ կտրի :

ՆԱՐԳԻԶ — Զենս չեմ կտրում, ինչ ուզում ես արա :
Հողս ճեր գլխին, եկաք թե չե ելի նորից սկսե-
ցիք տներ թալանել, խալխի աղջկերանց ու կա-
նանց բոնաբարել...

ԲԱՆԴԻՏ — Շատ մի խոսա, ընկեք առաջ :

ՀՐՈՒՇ — Մինչե դուք մեզ չասեք ուր եք տանում և
ինչի՞ համար եք տանում, մենք մեր տեղից չենք
շարժվելու :

ԲԱՆԴԻՏ — Հետաքրքրվելու ըոլորովին կարիք չկա :
Կոմունխաներին մենք գիտենք ո՞ւր ենք տանում
և ինչի՞ համար ենք տանում :

ՆԱՐԴ.— ՄԵՆՔ կոմունիստ չենք։ ՄԵՆՔ կոլխոզնիկ ենք։

ԲԱՆԴԻՏՏ.— Կոմունիստներն ու կոլխոզնիկը միևնույն ա: Կոմունիստների հետ մենք մեր կոփվը եսոր կվերջացնենք, իսկ եղուց կոլխոզնիկների հարսանիքը կանենք։

ՆԱՐԴ.— Այ քեզ հարսանիք։ (Նրան մի ժամի անգամ ապսակում ե, իսկ մյուսները իրացանը նրա ձեռքից խլում են և դուրս վագում)։

ԺԲԱՆԴԻՏՏ.— Վայ յես ձեր կոլխոզնիկ հերն անիծեւ... Բոնեցեք դրանց, մի՞ք թողնա... (դուրս ե գրնում)։

(Խորբում իրացանաձգություն։ Աղմուկ, իրաբնում)։

Տ Ե Ս Ի Լ 2.

Հեղինար, Յեղսու, հետո Դանել. Դարասիմ և տերսեր.

ՀԵՂԻՆ.— Աղջի, Յեղսու, ես ի՞նչ Զալմաղալ ա, ես ի՞նչ տրաքոց ա։

ՑԵՂՍՈՒ.— Ինչ տրաքոց վորն ա, չես տեսնում, վոր կոփվ ա։ (Դանելը տերսերի և Դարասիմի հետ խոսելով գալիս ե)։

ՏԵՐՏ.— Յես ձեղ չեյլ^o ասում, վոր կոլխոզից բան դուրս չի գա։

ԳԱՐԱԶ.— Ներողություն, դու չե՞իր ասում, աջ թեք ման կողմնակիցներն եյին ասում։

ԴԱՆԵԼ.— Շունը շնից, երկուսը մի տնից։ Յես դրանց հերն անիծեմ։ Հմի դու եղուց թամաշա արա, տես եղ կոլխոզնիկների գլխին յես ինչ որ եմ կանգնացնում... Այ կնիկ, դնա թվանդր բեր, դնամ եղ շներից մի երկուսին խիմեմ սատկացնեմ, բաւքի սիրոտ հովանա...»

ԳԱՐԱԶ.— Սատկացնելու տեղն ա... դրանք մեզ հոքի հավատից հանեցին...»

ԴԱՆԵԼ.— Այ կնիկ, ախր քեղ բան ասացի^o։ Աղջի Յեղսու, դու գնա բեր... Ձեզ ի՞նչ ա պատահել, յեր ձեղ բան եմ ասում, դուք կանգնել իրար երեսի եք մտիկ տալի... գնացեք թվանդր բերեք։

ՀԵՂԻՆ.— Թվանդր չկա։

ԴԱՆԵԼ.— Վո՞նց թե չկա. ախր եղ զահրումարը յես իմ ձեռքովս եմ տեղավորել... Զլինի^o եղ գրադեն առաջուց նրա տեղն իմացել ա, գնացել վերցրել տարել ա... վայ, յես քու ալաղակ հերն անիծեմ...»

ՏԵՐՏ.— Ձեր գյաղին յես քիչ առաջ տեսա, թվանդր ձեռքին դնում եր, կարծեմ նրան խիմեցին... (Յեղսու լաց և լինում)։

ԴԱՆԵԼ.— Հախն ա, թող խիմեն, յես դրա անաղ ու հաց քրդի շուն հերն անիծեմ. իմ հացը ուսում եր գնում ուրիշի դռանը հաչում...»

ՀԵՂԻՆ.— Աղջի, ձենդ կտրի, ըստեղ ուրիշ մարդեկ կան, ամոթ ա...»

ՏԵՐՏ.— Եդ ձեր Յեղսոն ինչո՞ւ ա լաց ըլում։

ԴԱՆԵԼ.— Բա չես ասի, եդ շաշը են գյաղին սիրում եր... (Լուր խոսում են)։

ՀԵՂԻՆ.— Հողը քու շաշ խելքին, ենքան արիր, վոր նրանք ել իմացան։

ԴԱՆԵԼ.— Դե լավ, վերջ տուր... սրանք ուսար մարդիկ չեն. թեկուղ իմանան. լնչ կա^o վոր։ Ամոթ բան չի, ջահելություն ա. եղ ջահելությունը ժամանակին մենք ել ենք արել։

ՏԵՐՏ.— Արդար խոսք ա, Յեղսոյին միք մեղադրի. ջահել տղան ու չափահաս աղջիկը նավթի ու

կրակի որինակի բան ա. ինչքան ուղղում ես
մուղայիթ լաց, մնանույն ա, նրանք իրար կողքի
վոր մնացին, պաժարը անխուսափելի ա...

ԴԱՆԵԼ.— Լավ ա վոր ըսենց վերջավորություն ունե-
ցավ. թե չե խալտառակություն կներ:

ԳԱՐԱՍ.— Վնաս չունի, հրես կոիվը կվերջանա, ձեր
Յեղսոյի համար յես ընենց մի հրեղեն փեսացու
ճարեմ, վոր տեսնողի աչքը մնա վրեն:

ՏԵՐՏ.— Յես ել ձեղ խոսք եմ տալի, վոր խաչ ու ա-
վետարանով դրանց համար ընենց պսակ կատա-
րեմ, վոր ոխտը լուծ գոմեշ լծեն, չկարենան դը-
րանց իրարից բաժանել...

ՀԵՂԻՆ.— Լսում ե՞ս... եղ խոսքերը նրանք քեզ հա-
մար են ասում, յես զարմանում եմ, դու նրա
մեջ ինչ ես տեսել, վոր սիրտը ըտենց կպել ա
նրան:

ԴԱՆԵԼ.— Դե գնացեք տուն. եղտեղ միք կանգնի,
ցուրտ ա, կմբսեք: (Յեղսոն և Հեղինարը ներս
են գնում): Ղալմաղալը կտրվել ա: Դուրս գանք
տեսնենք մեր արծիվները ինչ են անում:

ՏԵՐՏ.— Գնալու կարիք չկա: Առանց մեր գնալու յել
ինչ վոր հարկավոր ա նրանք կանեն:
(Խորքից «Ինսերմացիոնալ» յերգի ձայն).

ԴԱՆԵԼ.— Ես ինչ ա նշանառկամ:

ԳԱՐԱՍ.— Եղ նշանակում ա, վոր կոմւնիստները հաղ-
թում են...

ՏԵՐՏ.— Տեր, փրկյա զմեղ ի չարե... (աղբում ե):

ԴԱՆԵԼ.— Երեվում ա, վոր մերոնք գնացին... բայց
թե ինչի՞ նրանք ըսենց չուտ գնացին, յես չեմ
հասկանում:

ԳԱՐԱՍ.— Կանգնել մտածելու ժամանակ չի. փաղչենք:

ԴԱՆԵԼ.— Ուրիշ ճար չկա, պտենք փախչի... նրանք
վոր գան մեղ կկոտորեն...

ՏԵՐՏ.— Տեր. դու փրկյա ըղմեղի չարե. (ծնկաչոք ա-
ղբում ե):

ԴԱՆԵԼ.— Մրանց իմաց տայինք:

ԳԱՐԱՍ.— Դրանց իմաց տալը հարկավոր չի. կոմու-
նիստները կնիկ արմատներին ձեռ չեն տա...
քանի նրանք չեն եկել դուրս արի գնանք...

ԴԱՆԵԼ.— Գնանք... (Դանելն ու Գարասիմը փախչում
են):

ՏԵՐՏ.— Մրանք գնացել են, իսկ յես կանգնել ինձ հա-
մար արխային աղոթք եմ անում, բա վոր եղ
անիծվածները գան բոնեն ինձ եստեղ մորթե՞ն...
Տեր դուրյա ճանապարհ իմ... (փառաջան հա-
նում ե դնում քեվի տակ և դուրս փախչում):

ՏԵՍԻԼ 3.

Մերու, Սիակ և Թեվոս

(Մերուն զինված ե, իսկ Սիակն ու Թեվոսը անզին).

ՄԵԹՈՒ.— Սհակ բիձա, յես քեզ վրա զարմանում եմ.
Խորհրդային իշխանությունը քու կայքն կարո-
ղությունն ել ջ՞ո չեր խել, վոր դու ել նրանց
կողմն ես անցնում:

ՄՀԱԿ.— Ել մի ասա, եռ յաշի տեք մարդ եմ, ըսենց
սխալմունք չեյի արել:

ՄԵԹՈՒ.— Դե լավ, Սհակ բիձան ասենք, հալիվոր մարդ
ա, ուրիշների խելքին ընկալ, վեր կացավ գնաց:
Ախր, դու կոմսոմոլ ես, ախր դու կուսակցու-
թյան թեկնածու ես. դու ի՞նչ եյիր մտածում

գիրքը թողնում գնում բանդիտների հետ և միանում...

ԹԵՎՈՍ.—Յես կարծում եյի թե Խորհրդային իշխանություն չկա...

ՄԵԹՈ... Բա դու չեյիր տեսնում, վոր կա՞... ինչի՞ եյիր գնացել թշնամու դիրքերում կանգնել մեր դեմ կովում:

ԹԵՎՈՍ.—Խարվեցի...

ՄԵԹՈ...—Խելքը գլխիդ չե՞ր, ինչի՞ եյիր խարվում: Ի՞նչի եյիր ուրիշների առաջներին հավատում: —Դե լավ. խոսելու ժամանակ չի. տղերքը կովում են, գնացեք նրանց գոմաք արեք. (Խոսելով դուրս են գնում):

ՏԵՍԻԼ 4.

Արշավիր, Տիգրան և Ավետիք

(Յերեքի մոտ ել հրացաններ).

ԱՐՇԱՎ.—Յես զարմանում եմ, ուրիշներին խրախուսելու փոխարեն, դուք ինքներդ եք պանիկայի յենթարկում: Հուսահատվելու կարիք չկա. բանվորները հրես վորտեղվորա կղան մեղ ոդնության:

ՏԻԳ.—Բանվորներից հույսդ կտրի. նրանք յիթե գալու միտք ունենային, մինչեվ հիմա տասն անգամ յեկած կլինեյին: Թշնամին հրեն նորից մեղ շրջապատում ա. վորքրաթիվ ուժերով նրանց դեմ կովել չենք կարող անձնատուր լինենք վերջանագնա: Ավետիք դու ինչ կարծիքի ես:

ԱՎԵՏ.—Յես քու առաջարկին համամիտ եմ. ինչքան

չուտ անձնատուր լինենք, մեղ համար ենքան լավ ա. զոհեր քիչ կտանք:

ԱՐՇԱՎ.—Անձնատուր լինելու մասին վոչ մի խոսք: Կանգնել խոսելու ժամանակ չի, թշնամին զոռում ա. կրակեք... (Արշավիրը պատի տակ չոգում ե և հրացանով կրակում):

ՏԻԳ.—Փամփուշտ կա՞ վոր կրակեմ, ինչով կրակեմ: Մի քանի հատ փամփուշտ ա մնացել:

ԱՐՇԱՎ.—Մինչեվ վերջին փամփուշտն ել հարկավոր ա կրակել և մեր դիրքը պաշտպանել. ո՛, անիրավները խփեցին... (Հրացանը ձեռքից քողնում ե և ուշաբափ ըլլինում):

ՏԻԳԻԱՆ.—Դե պաշտպանի տեսնեմ վո՞նց ես պաշտպանում... զահրումար դառնա, ո՞վ ուզում ա թող գնա կովի, յես չեմ ուզում, յես գնում եմ գըլուխս ազատեմ...

ԱՎԵՏ.—Դու վոր գնում ես, յել ել եմ գալի: Գնանք. իշի հահատակ ըլիլն ել մի բան չի: (Տիգրան ու Ավետիքը դուրս են գնում).

ՏԵՍԻԼ 5.

ՍԵՐ-ԾՐՈՒ. Նարգիզ, Զմրուխտ և Համբո. (հրացանները կրակելով գոլիս են փողոցով անցնելու).

ՆԱՐԳԻԶ.—Վույ քոռանամ, Արշավիրին խփել են... (մոտենում ե նրան):

ՄԵԹՈ...—Առանց այն ել մեր թիվը քիչ եր սա ել եստեղ ընկալ (բոլորը կանգնած արտավում են. իսկ Սերոն կուանում ե նրա շնչառությունը ստուգում):

ՄԵԹՈ...—Նա կենդանի յե: Կոնիցը հրես արին ա գնում:

Նարդիզ, շորի կտոր կունենամ, տուր վեր
քը կապեմ, արնաքամ չլինի :

ՆԱՐԴ. — Առ վերցրու կապի... (տակի յուրկան պատ-
ռում ե տալիս) :

ՄԵԹՈ. — Դե լավ յես կկապեմ, դուք դնացեք: Եղ ա-
նիծվածները մի բաշ վրա չտան, գան մեղ բոլո-
րիս կոտորեն:

ՀԱՄԲՈ. — Դե, մենք դնանք... (կրակելով գնում են) :

ԱՐՇԱՎ. — Ես ինչա՞ պատահել ինձ հետ, յես ինչի՞ եմ
եսպես թուլացել... Տիրանն ու Ավետիքը ո՞ւր են
նրանք մեղ դափաճանեցի՞ն... գոնե բանվորները
շուտ գայլն մեղ ոգնության հասնելին:

ՄԵԹՈ. — Կդան, դու դրա մասին մի մտածի... դու են
ասա, վերքդ հո շատ չի նեղացնում:

ԱՐՇԱՎ. ... Դրա ժամանակը չի... հրացանս տուր ինձ:
(Սերոն և Արշավիրը դուրս են գնում, իսկ Մար-
գարը հրացանը ձեռին վազվալով գալիս ե) :

Տ Ե Ս Ի Լ 6.

Մարգար հետո Յեղս և Հեղինար.

ՄԱՐԴԱՐ. — Տղերք չան, յես ձեր հոգուն մատաղ,
դուաղ կացեք: Դիրքերը ձեռքից չտաք... Հրեն
բանվորները պուլմուտը վերցրած դալիս են
մեղ քոմադ անեն... (դուրս ե գնում) :

ՅԵՂԱՐ. — Սա նրա ձենն եր... Մարդա՛ր, Մարդա՛ր...
կաց, յես ե եմ դալի... (Յեղսն դուրս ե գնում,
իսկ Հեղինարը շեմքից ձայն ե տալի) :

ՀԵՂԻՆ. — Աղջի, եղ ուր ե՞ս գնում... Յեղսո, չլսեց
դնաց... վույ քոռանամ յես (ներս ե գնում) :

Գեղամ, Կարո, Ոհաննես և մի խումբ բանվորներ.

ԳԵՂԱՄ. — Շտապեք եղ անիծվածները մեր ընկերներին
նեղն են լծել... Կարո ջան, գնդացիրը դու չուտ
արա սարքի...

ԿԱՐՈ. — Ես ըսպեյիս լենտը շցեմ, ընենց մի ժարիտ ա-
նեմ, վոր...

ՈՀԱՆ. — Յես դրանց բանդիտ հերն անիծեմ:

ԳԵՂԱՄ. — Խոսալու ժամանակը չի անցեք գործի (դը-
րոշակը և գնդացիրը ձեռքներին նրանք փողոցով
անցնում են: Մի փոքր հետո ուժեկ որածու-
թյուն. կեցցեների ու ուռաների աղաղակ, իսկ
այնուհետեւ «Խնտերնացլումալ» յերգի ձայնը) :

ՎԱՐԱԴՈՒՅՐ

ՅՈԹԵՐՈՐԴԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է կոլլուզի նոր գրասենյակի առաջ, Դանել աղի տներում: Դռան նուկատին կոլլուզի նույն ցուցանակը: Լուսամաւտի վրա կարմիր դրոշակ, իսկ փողոցաւմ իրար վրա խառ ի խոռն կերպով թափված մի շարք գյուղատնտեսական գործիքներն և մեքենայի գանազան մասեր:

S Ե Ս Ի Լ 1.

Յեղան և Հեղինար

ՀԵՂԻՆ.—Աղջի, դե ես քուչումը չպտեմ ասի, դնանք առուն, ենտեղ կասեմ. եստեղ վախում եմ ուրիշ ները լսեն:

ՅԵՂՍՈՒ.—Յեղ ասում եմ, վոր քրւ տունը վոտ չեմ դնի: Ինչ վոր ասելու յես, եստեղ ասա. յես վըռազ տեղ եմ դնում, գործ ունեմ:

ՀԵՂԻՆ.—Թու քու երեսին. ենքան ներիցդ ըլիլ ես, վոր քու հարազատներիդ խոսքն ել բանի տեղ չես դնում (լաց ել լինում):

ՅԵՂՍՈՒ.—Այ մեր, դե յես ի՞նչ անեմ: Քեզ հետ կանգնել խոսելն ել վախում եմ: Ուանց են ել ամեն որ երեսովս են տալի... (արւածվում ե):

ՀԵՂԻՆ.— Ճակատներիս հալբաթ ես եր գրած... որներս սեվացավ... Որը մթնում ա, լիսանում, դուռս բաց անող չկա... յես եստեղ եմ անտեր ու

անտիրական յերեսի վրա վեր ընկել մնացել, հերդ՝ ընտեղ...

ՅԵՂՍՈՒ.—Հորս անունը մի տուր, նրա համար վոր ասես մի եսքան չեմ մտածում, նրա նման հեր չունենամ լավ ա...

ՀԵՂԻՆ.—Զորանա եղ լեզուդ... եդ խոռքը դու վո՞նց ես ասում:

ՅԵՂՍՈՒ.—Վո՞նց չասիմ, ես կոխվները դիվն նոս պատճառովը չե՞ր... Հրեն խեղճ Արշավիրը են որդից ինվալիդ աղարսել, բանվորներն ել միքանի հողի սպանվեցին: Կնդա, երեխի տեր մտրդիկ եյին: Բա նրանք մեղք չեյին (ուզում ն գընալ):

ՀԵՂԻՆ.—Աղջի, գնում ես... Ախը յես քեղ բան սլոհեյի ասի...

ՅԵՂՍՈՒ.—Դե ասա: Հմի կդան, կտեսնեն, վոր քեղ հետխոսում եմ, լավ չի:

ՀԵՂԻՆ.—Դեսն արի, անգաջիդ ասեմ, վոր մարդ չեմ մանա (քաշում եմ մի կով):

ՀԵՐԴ.— ապսարել ա, վոր պահած վոսկեղենը հանեմ մի ապահով տեղ գնեմ:

ՅԵՂՍՈՒ.—Դե լավ, դու եղ վոսկեղենի տեղը իմանո՞ւմ ես վոր:

ՀԵՂԻՆ.—Իմանում եմ, մարադում դարմանի տակն ա, բայց թե մենակ իմ բերեու բան չի: Ասում եմ քեղ հետ միասին գնանք:

ՅԵՂՍՈՒ.—Դե լավ, իրիզունը կդամ մթնով կզնանք, վոր մեղ տոսնող չինի (մտածում ե) Այ մեր, բա ինչի եսքան ժամանակ դրա մասին դու ինչ վոչինչ չեյիր ասում:

ՀԵՂԻՆ.—Հերդ կարգադրել եր, վոր չասեմ:

ՅԵՂՍՈՒ.—Իե տրի ու ըտենց հոր մասին մտածի, ոկի
յել չեմ մտածի, ջանը դուրս դա, աքսորատե-
ղում թող տանջվի ու չարչարվի: Ուրիշի համար
հոր փորեց, ինքը նրա մեջ ընկավ... թե վոսկե-
ղեն ել ենտեղ հանած տարած կըլնեն, ամեն ինչ
կդրստվի:

ՀԵՂԻՆ.—Վոյ, հողը գլխիս, տարած վոր ըլեն, հորդ
ձեռից չեմ պրծնի:

ՅԵՂՍՈՒ.—Են մարազը որը հարյուր մարդ ա մտնում ու
դուրս դալի, եսքան ժամանակ ենտեղ պահած
բան կմնա՞... Հրեն Մարգարը. զնամ տեսնեմ,
են ուր ա՞ ընենց վոաղ վոաղ զնում: (Դուրս ե
գնում):

ՀԵՂԻՆ.—Աղջի, դու նրան բան չասես, տարած վոր ը-
լեն, տունս կքանդվի, հողը գլխիս... (Դուրս ե
գնում):

Տ Ե Ս Ի Լ 2.

Մարգար և Յեղսու

ՄԱՐԳԱՐ.—Ապակուլականացման գործերը քննող կո-
միսիա ա եկել: Կուլակներին իրավունք են աը-
վել, վոր աքսորատեղից մի որով գան ներկա-
յանան: Գնամ տեսնեմ, ինչ եմ անում: Գլուխս
խառն ա:

ՅԵՂՍՈՒ.—Ուրեմն, իմ հերն ել ա եսոր գալու:

ՄԱՐԳԱՐ.—Վոչ թե գալու, այլ թե հիմի արդեն յեկած
պտի ըլի:

ՅԵՂՍՈՒ.—Վայ, հողը գլխիս:

ՄԱՐԳԱՐ.—Ի՞նչ ես շփոթվում, հորդ գալու վրա եղա-
քան վոր ուրախանում ես, ել ինչի՞ համար ես
կանդնել, նա հմի եկած կըլի: գնա հետը մի
սրաալի պաշտի արա, կարստած կըլնես, հորդ

հարազատ զավակն ես, դնա, ել ինչի՞ համար ես
կանդնել մտածում: (Ուզում ե զնալ):

ՅԵՂՍՈՒ.—Կաց, բան պտի ասեմ: (Մտածում ե):

ՄԱՐԳԱՐ.—Ի՞նչ ես ասում:

ՅԵՂՍՈՒ.—Գնա, բան չեմ ասում:

ՄԱՐԳ.—Բա ել ի՞նչի համար կանդնեցրիր:

ՅԵՂՍՈՒ.—Հենց ընենց, ուզում եյի քեզ հետ խոսեմ:

ՄԱՐԳ.—Դու յել խոսելու ժամանակ ես գտել... (Ու-
զում ե զնալ):

ՅԵՂՍՈՒ.—Գնո՞ւմ ես:

ՄԱՐԳ.—Բա հո եստեղ չեմ մնալու: Կոմիսուիան ինձ
կանչել ա, զնամ տեսնեմ ինչ ա ասում (Ուզում
ե զնալ):

ՅԵՂՍՈՒ.—Կաց... (Մտածում ե),

ՄԱՐԳ.—Ժամամ կուլակի սերունդ ես... դե ասու,
տսնեմ ի՞նչ ես ասում: Յես ուշանում եմ:

ՅԵՂՍՈՒ.—Վոսկեղենի տեղն իմացել եմ:

ՄԱՐԳԱՐ.—Տնաքանդ, բա ել ո՞ւր ես կանդնել. զնանք:
Շուտ, հըմի հերդ կգա պահված տեղից կհանի:
Քանի նա չի հանել, գնանք մենք հանենք: (Յեղ-
այի քեցից բռնած, քաշելով դուրս ե գնում):

Տ Ե Ս Ի Լ 3.

Դամել և Հեղինար

(Դամելը պատռությած և հնամաշ շորերով).

ՀԵՂԻՆ.—Յեղսոն ել հո են որվանից գնացել ա են դյա-
ղի հետ ա ապրում...

ԴԱՄԵԼ.—Նրա անունը մի տուր, ել սրանից հետո նա
մեր զավակը չի: Նրա անունը մեր ցուցակից

Ծնջվեց : Տես են վիվեսկան վորտեղ են կըպ-
շրել : Եղ վիվեսկան վոր չկպցնեյին, ես խալսը
կարծես չե՞ր իմանա կոլխոզի գրասենյակը
վո՞րտեղ ա : Սատանէն ասում ա, չնա հանի դը-
ցի վոսներիդ տակը ջւռդ ու հշուր արա .

ՀԵՂԻՆ .—Զարդելով բան դուրս չի դա : Զարդելուց
բռնեցիք, վոր ես որն ընկանք... եղ ինչա՞քու
հալը . հասես զաղթական ըլես... քոռանա իմ
աչքերը ... (լաց ել լինում) :

ԴԱՆԵԼ .—Բնտեղ մտիկ : Դրոշակի պատճառով են յեքա
մեխը վոնց ել խփել են ակոչկի ռամկան ջարդել,
խարաբ արել... մայ յես ձեր կոլխոզնիկ հերն ա-
նիծնմ : Եղ ախմախ բանի համար, են դյողալ
ռամկեն ընենց չնորքից կրցե՞ն... ափառս ռամ-
կա, ափառս :

ՀԵՂԻՆ .—Այ մարդ, ի՞նչ ես կորցրել, ինչի՞ հետեւ-
իցն ես ընկել...

ԴԱՆԵԼ .—Հենց բանն ել եդ ա, կորցրել եմ, վոր սիրաս
ըսենց ցավում մղկուռմա ե՞...
Եդ դրոշակը վոր տեսնում եմ, կարծես են մեխը
սրտում խփած ըլեն... Դանել աղի տան վրա
կարմիր դրոշա՞կ... ասում ես մի խոսա, գե
վո՞նց չխոսամ... արինը տալիս ա գլխովս...
Գործիքները բերել արեի ու անձրեվի տակ թա-
փել են : Թողը տվել-ժանդը կերել ա : Թամաշա
արա, մաշինի վինտերն ու զայկերը տես վո՞ր
տեղ ա ընկած (կոանում ել վերցնում) : Շուն
շանվորդիք, ես ապրանքը դուք վոր չեյիք բա-
նեցնելու, յես բանացնում եյի, ինչի՞ եկաք ձեռ-
քիցս իւլցցիք...

ՀԵՂԻՆ .—Այ մարդ դրա ժամանակը չի, կամիսիան
կանչել ա, զնա տես ինչ ա ասում :

ԴԱՆԵԼ .—Ինչ պտեն ասի . կենտղործկոմի հրատարա-
կած դեկրետի համաձայն մեղնից ինչ, վոր վեր-
ցրել են, պտեն նորից վերադարձնի : Լրագրի եղ
համարը կարծեմ մոտս ա : (Դրապանից մի ժամի
համար լրագիրներ ե հանում) : Սա չի, աս Ստալի-
նի հոդվածն ա : Նրա հերն ել ըստի անիծած : Ես
հոդվածը նա վոր մի քանի ամբու առաջ գրեր,
ես բանը սկի չ' պատահի : Հրես դթա, եղ
դեկրետը ստեղ ա տպված : Ես լրագրի համարը
տանկմ դրանի աչքը կոխեմ... Լսիր յես մոռա-
ցա հարցնեմ : Վոսկեղենը գարմանի տակից հանել
ե՞ս :

ՀԵՂԻՆ .—Զեմ հանել : Յեղսոյի հետ եսոր պտեյինք գհա
հանի :

ԴԱՆԵԼ .—Յեղսոյն, ուրեմն, տեղը իմացել ա՞ , ել պըր-
ծավ, վոսկեղենը ձեռքներիցս դուրս եկավ : Են
դյալեն հմի գնաց հանեց : Գնանք տեսնենք...
(Հեղինարը հետ շտապ դուրս ե գնում) . իսկ
Մարգարի ու Յեղսոյ փողոցի հակառակ կողմից
սնդուկը յերկու կողմից բռնած ըերում են) :

Տ Ե Ս Ի Լ 4.

ՅԵՂՍՈՅ, Մարգար և Համբու .

ՅԵՂՍՈՅ .—Հակառակի նման կոլխոզի գրասենյակն ել
կողմած ա... .

ՄԱՐԳԱՐ .—Վնաս չունի կտանենք գուղխորհրդի գրա-
սենյակում կղնենք :

ՅԵՂՍՈՅ .—Լստեղ ել կամիսիայի նիստն ա :

ՄԱՐԳԱՐ .—Կամիսիայի նիստը մեղ չի խանգարում :
(Համբոն վագելով գալիս ե) :

ՀԱՄԲՈՆ .—Տնաշեն, դու եդ վո՞ր տեղ ես, երկու սհաթ
քու հեռվից յես ման եմ գալիս : Կամիսիան քեղ
կանչում ա . արի գնանք :

ՄԱՐԳԱՐ .—Կամիսիյան կարողա քիչ սպասի . ոտ նբա-
նից ավելի վաժնի գործ ա :

ՀԱՄԲՈ .—Եդ ինչ ա՞ գոր :

ՄԱՐԳԱՐ .—Խաղինա ա ...

ՀԱՄԲՈ .—Ումն ա՞ :

ՄԱՐԳԱՐ .—Մերն ա ...

ՀԱՄԲՈ .—Վո՞նց թե մերն ա , այսինքն :

ՄԱՐԳԱՐ .—Այսինքն իմն ա , քունն ա , սրանն ա ...

ՀԱՄԲՈ .—Բաց արա տեսնեմ .

ՄԱՐԳԱՐ .—Վոր տեսնես վայ թե մի բաշ գժվես . Դե
արի ու ես նեղ մաջալին ամեն բանը թող գնա
բժշկի հետեւից ման արի . եստեղ յերկար մը-
նալը վտանգավոր ա . վերցրու տանենք աղջի ,
Յեղսո , դու ել քոմագ արա . զրադդ մի քաշի . հենց
իմացի քու հարսանիքի բաժինքն ենք տանում :

ՑԵՂՍՈ .—Հարսանիքը մենք արել ենք պլծել :

ՀԱՄԲՈ .—Զադսում գրիւլը հարսանիք չի նշանակում :

ՄԱՐԳԱՐ .—Ճիշտ ա ասում . Զազսը իրա տեղն ունի
հարսանիքը իրա տեղը :

ՀԱՄԲՈ .—Մսուրի շենքը հրեն վերջացել ա , բացման
հանդեսի որը՝ ձեր հարսանիքը պտենք անի .
իսելքդ ո՞ւրա գնում : Մեր տղերքը եդ որվա հա-
մար արդեն պատրաստություն են տեսնում . . .
(սեղուկը վերցնում դուրս են գնում) .

Տ Ե Ս Ի Լ 5.

Տիգրան և Ավետիք

ԱՎԵՏ .—Ես կամիսի վորոշումները կոլխողի վարչու-
թյան նիստում հարկավոր ա քննության առնել :

ՏԻԳՐԱՆ .—Ախմախ բան ես ապում .

ԱՎԵՏ .—Մրանց վորոշումն ուրեմն , վերջնական ա :

ՏԻԳՐԱՆ .—Համարյա թե : Ասում են , գոր 50 տոկո
խլված բաներ վերադարձնում են :

ԱՎԵՏ .—Բա վոր մենք ասում եյինք , դրանք մեզ վրա
ծիրաղում եյին : Մեզ աջ թեքման մեջ եյին մե-
ղաղըրում : Հմի ասա խնդրեմ , աջը իրանք են , թե
մենք , զուրը տեղ չե՞ր ես զալմաղալը , դե հմի
գնա , կուլակներից ինչ վոր խլել են նորի պլտոի
վերադարձնեն իրանց :

ՏԻԳՐԱՆ .—Դու սկսում ես ելի քու հին դարմանը քամուն
տալ (դուրս են գնում) :

Տ Ե Ս Ի Լ 6.

Ավետ յել Համբա .

ՄԵԹՈ .—Գնամ տեսնեմ , բալքի թղթերի մեջ գտնեմ
(գրասենյակի դուռը բաց ե անում ու ներս ե գը-
նում) :

ՀԱՄԲՈ .—Անջախ մի վերին հարկում ատլրում եյի ,
բալկոնը առաջին , փողոցի վրա լուսամուտներ ,
արեգակը սաղ որը միջին : Դե հմի արի սհմաց
տունը կող ու նորից գնա մտի են խոր վիրապը ,
չե , եդ կամիսի վորոշումը ինձ սկի դուր չեկավ :

ՄԵԹՈ .—Զկա . ոլ իմանում եդ ցուցակը սկի չեն ել
կաղմել , զուր տեղը յես հենց ման եմ գալի (գը-
րասենյակի դուռը փակում ե) :

ՀԱՄԲՈ .—Զահրումար դառնա , եդ կամիսիան միթոմ
բան արեց : Նրանց վորոշումները դիմի կուլակ-
ների ոգտին երավ . ախպեր թե վոր ես ապրանքը
տալու եյինք իրանց , ել ի՞նչի համար վերցրինք ..
զու ինչի ես մտածում , քու ճեռքից ել հո սենյակ
ները չեն խլելու :

ՍԵԹՈՒ. — Դու ել սենյակի դարդն ես քաշում։ Կամիսի
վորոշումն իմացան թե չե, ամենքը մի կողմից
գալու են գլխիս կանգնեն։ Դե արի ու իմացի ում-
նից ի՞նչ ե վերցրել և ումը ի՞նչ ես տալու։

ՀԱՅԻՌՈ. — Սպասիր, Մարզարի մոտ կարծեմ մի ինչ վոր
ցուցակ կա։

ՍԵԹՈՒ. — Տնաշեն դե ասա ե՛, յես եղ ցուցակին եմ հենց
ման գալի, գնանք… (դուրս են գնում)։

Տ Ե Ս Ի Լ 7.

Դանել, Հեղինար և հետո Յեղս։

(Դանելի ամբողջ շորք դարձմանուտ, տխուր ու տրտում
ներս և գալիս)։

ԴԱՆԵԼ. — Եսքան ժամանակ դու չկարացիր եղ զահրու-
մարը գնաս հանես մի ապահով տեղ դնես ու
պահես… հմի ես ի՞նչ անեմ, Հույսո եղ վոսկե-
ղենի վրա յեր։ Մտածում եյի թե կտանեմ կծա-
խեմ, փող կշինեմ և դրանով կապրեմ, ոե հիմի
արի ու ապրի… (լաց և լինում)։

ՀԵՂԻՆ. — Քոռանա իմ աչքերը, վոր քեզ լոտենց խղճա-
ցած չտեսնեյի (լաց և լինում)։

ՅԵՂՍՈՒ. — (Մի քուլք ձեռքին ներս և գալիս) Խնդիր
եք ներկայացնում և չեք ել ուզում զնաք պա-
տասխանը իմանաք։ Ի՞նչա դուք սպասում ք, վոր
պատասխանը կամիսիան ինքը դա ձեզ հայտնի։
ՀԵՂԻՆ. — Ի՞նչ են վորոշել, ինչ վոր մեղանից վերցրել
են տալիս ե՞ն։

ՅԵՂՍՈՒ. — Մի սենյակ և մի կով տալիս են։

ԴԱՆԵԼ. — Բոկ մնացածը, տա՞նս, այդի՞ս, ոնասաւն-
նե՞րս, գործիքնե՞րը։

ՅԵՂԻՆ. — ԶԵՆ.

ՀԵՂԻՆ. — Հորդ գեղում մնալու մասին ի՞նչ են վորոշել։
ՅԵՂՍՈՒ. — Վորոշել են Հայաստանի սահմաններից հե-
ռացնել։

ՀԵՂԻՆ. — Հորդ գլխիս… (լաց և լինում)։

ԴԱՆԵԼ. — Եղ դիմ են դյատի սարքած բաներն ա…

ՅԵՂՍՈՒ. — Նա կամիսի անդամ չե։

ԴԱՆԵԼ. — Կամիսի անդամ չե, բայց թե եղ վորոշումը
նրա թելադրությամբ ա կազմած։

ՅԵՂՍՈՒ. — Դուք սովորել եք ամեն ժամանակ նրան մե-
զարքել։ Գլուխ չունեմ ձեզ հետ դներու։ Վեր-
ցրեք ես ձեր տված դիմումն առ, ես գնում եմ
(քուզը գցում ե և ուզում և դուրս գալ)։

ՀԵՂԻՆ. — Աղջի ուր ես գնում։ Գնա եղ կամիսին քու-
կողմից խնդրովի, բալքի եղ վորոշումը նրանք
փոխեն։

Տ Ե Ս Ի Լ 8.

Նույնի և Մարգար։

ՄԱՐԳԱՐ. — Եղ վորոշումը չե փոխի. դուք պարտավոր
եք եղ վորոշմանը յենթարկվելու։ Դանել աղա-
դու ինչի համար ես կանգնել, ժամանակը լրա-
նում ա, քո ընկերները դնում են, սպասուածիք
դու ել նրանց հետ գնաս։

ԴԱՆԵԼ. — Կդնամ… (արհամարաթեավ հասյում են մի-
միանց վրա)։

ՎԱՐԱԳԱՌԻ ՅՐ

ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՅԾԱՌԱԽՑՈՒՆ

ԲԵՄԸ ներկայացնում է մասւրի համար կառուցված
նոր շենքի առաջը: Դռան ճակատին ցուցանակ, խոշոր
տառերով վրան գրված: «Մ Ա Ռ Կ Բ»: Կեսոր է:

Տ Ե Ս Ի Լ 1.

Զմբուխու, Հրուշ, Համբո և պիոներական խմբակ

(Պիոներական խմբակը քարտուկի զարկերի տակ
մարզականիներ և կատարում, իսկ մյուսները
դրաշակներով և զանազան նկարներով ու պլա-
կատներով շենքը դրսեվի կողմից զարդարում են:
Զմբուխու ու Հրուշը նոր շորեր են հագել:

ԿՈԼՎԱՐ. — Ե՞նկ, յերկու, մեկ-յերկու, ձախ... մեկ,
յերկու, ձախ...

ԶՄԲՈՒԽԻՏԸ. — Քու դեյրեն մաղիսկի կարած ա, իսկ ե-
մը յես եմ կարել. քունիցը ինչո՞վ ա պակաս:
Մարդկ, ինչ լավ նստում ա վրես:

ՀՐՈՒՇ. — Էսկի յել լավ չի նստում. այս տեղը ծուռ ա:
ԶՄԲ. — Ծուռ աչքով ես մտիկ տալի, նրա համար աչ-
քիդ ծուռ ա յերեվում: Էսկի յել ծուռ չի:

ՀԱՅՄԲՈ. — Գործներդ վերջացրեք, դրա ժամանակը չի:
Հմի վորտեղ վոր ա մեր շեֆերը քաղաքից կը-
գան, իսկ մենք գործը դեռ չենք վերջացրել:

ՀՐՈՒՇ. — Մեր շեֆերը իմանո՞ւմ են, վոր մսուրի բաց-
ման որը Հարոանիք պտի անենք:

ՀԱՅՄԲՈ. — Իմանում են: Արշավիրը, կարծեմ, գրել ա:
Բանվորները հարսանիքի համար, ասում են ինչ
վոր նվեր են պատրաստել և եսոր հետները բերե-
լու: Են: Կարսն ու Ուաննեսն ել խոստացել են
նրանց հետ գտն:

ՀՐՈՒՇ. — Ճիշտ են ասու՞մ:

ՀԱՅՄԲՈ. — Ուարելու ի՞նչ ունեմ, մսուրի բացման և հար-
սանիքի հանդեսին նրանք ել են ուզում ներկա-
լինել:

ԶՄԲ. — Զա՞ն, նրանք ել վոր դալիս են, լավ կիմի...
(Հրուշի հետ սկսում են պարել ու բաշխուել):

ՀԱՅՄԲՈ. — Բնենց ուրախանում եք, կասես նորահարսոք
զուք րլեք: Թուչկոտելու ժամանակը չի: Գնանք
ճղներ բներնք զուռը և ակոչկեն մի լավ զարդա-
րենք: (Դուրս ե գնում):

ՀՐՈՒՇ. — Գնանք: (Ծիծաղելով միասին դուրս են գր-
նում: Պիոներական խմբակն էլ մարզակները
վերջացնում են և նույնպես դուրս են գնում):

Տ Ե Ս Ի Լ 2.

Արշավիր, Սեբո, Տիգրան, Ավետիք և Մարգար.

(Արշավիրի մի թեվը կապած, լրագիրը մյուս
ձեռքով բանած կարդում է, իսկ կոլխոզի մյուս
անդամներն ուշադրությամբ լսում են):

ԱՐՃԱՎ. — Եղ հոդվածից ես մի կտոր տեղը միայն կը-
կարդամ (կարդում է) «Հացածթերման ասպա-
րիզում կուլակն ակտիվ դիմաղրությամբ ճշդ-
նում և ձախողեցնել մեր տնտեսական քաղաքա-
կանությունը: Նա հազարությամբ մի զարդուղի ճա-
նապարհներով փորձում ելիր աղդեցության տակ

առնել Առբհրդային իշխանության առանձին ստորին սղակները—գյուղիարհուրդները. նա փօրձում է կազմալուծել և այլասերել առանձին կոմունիստների և նույնպես կուռքիջների: Նա ակտիվ պայքար և մղում կորսնուեսութունների դեմ: Վնասաբարության միջոցով խանդարում է կոլտնեսությունների անտեսական ամրացումը, աւելորի յե յենթարկում գյուղի սոցբարիստական չնարաբության ակտիվ մարտիկներին: Նա կաշառում է դյուղի չքավորական մտօսաների առանձին անկայուն առարերին և վերջապես նոր սգտակործում է մեր կազմակերպությունների ամեն մի սխալը, ուժեղացնելու համար միջակ գյուղացիության առանումներն իր ազգեցության շրջանակի մեջ առնելու հոմար նրա առանձին հետամնաց չերտերը»:

ՄԵԹՈՒ. —Կենտկոմի քարտուղարի, համազումարում ասած եղ խոսքերն ամբողջովին մեզ ա վերպերում: Եղ հողվածը կտրելու յեմ մոտս սրահն ու ամեն որ կարդամ:

ՄԱՐԴՈՒՐ. —Մենակ քու կարդալով բան դուքս չի գոլ: ԱՐԾԱՎԻՌ. —Ճիշտ ա առում. կոլխոզի ամեն մի անդամ եղ հողվածը ամեն որ պիտի կարդա, վոր սրանից հասու սխալներ չգործի:

ԱՎԵՏ. —Լուրում ես Տիգրան ես քարը սրանք մեր կառւըն են հցում: Սրանք մեղ մեղադրում են, վոր իրանք արդար դուրս գան:

ՄԵԹՈՒ. —Արդարանալու բոլորովին կարիք չկա:

ՄԱՐԴՈՒՐ. —Ճիշտա ասում. արդարանալով կամ իրար մեղադրելով բօն դուրս չի գա: Մենք մեր սխուները պետք ե աւզգենք:

ԱՐԾԱՎԻՌ. —Վոչ միայն ուզդենք, այլ թե պայմաններ ըստ անդենք, վոր նման սխալներ նորից մենք չկատարենք: Դուք գիտեք, վոր սխալներ մենք ըստ բոլոր ունեցել ենք, իսկ եղ սխալներ եսոր ծածկելու և սվագելու միայն չկա: Եկեք մենք հասեղ պարզ ու աշկարա ամեն մեկս խոստովանենք և դործնականում ցույց տանք վոր ես սխալներից մենք անկեղծորեն հետ ենք դառել:

ՄԱՐԴՈՒՐ. —Կարեվորը դա ա:

ԱՎԵՏ. —Լավ ա, վոր դուք ձեր բերանովն եք խոստավանվում: Ել չառեք, թե կոլխոզի խնդիրները դուք մեղանից շատ եք հասկանում: Իմացած յեղեք, վոր մենք ձեղանից պակաս գլխի տեր մարդիկ չենք: Եղ կոլխոզի խնդիրները, փառք ասու, մենք ել ենք հասկանում:

ՄԵԹՈՒ. —Տեռանք, թե վո՞նց ելիք հասկանում: Ճեր յերկու ամսավա շինած կոլխոզը երկու ոհաթումը բանթվեց:

ՄԱՐԴՈՒՐ. —Եղ նրանից եք, վոր թղթի վրա յեր չինգած: Թղթի վրա վոր չինված չմինեք, չեր քանդիկ: Հարյուր տոկոսի յետելիցն ընկանք, բայց թե 15 տոկոսը մնաց ձեռքներիս:

ՄԵԹՈՒ. —Եղ 15 տոկոսը, վոր մենք հիմնավորենք, մնացածը հեշտ ա:

ԱՎԵՏ. —Հիմնավորեք, ինչ ուզում եք արեք, եղ ճեղ ա վերարերվում: Դու գյուղիարհուրդների նախագահ ես, նու կոլխոզի նախագահ, աշխարհի տեր ու տիրականը դուք եք, իւսովունքը ճեր ճեռին ա, ի՞նչ ուզենաք կանեք:

ԱՐԾԱՎԻՌ. —Ասանց մտածելու ես խոսում:

ԱՎԵՏ. —Կմառածեմ, թե չեմ մտածի, եղ քո հաշիվը չի:

Յես անկուսակցական մարդ ևմ : Բջիջի քարտու-
ղարությունը դու պահի քեզ համար , յես քեզա-
նից կախում չունեմ : Սրանից հետո , խնդրում եմ
դու ինձ նկատողություն չանես :

ԱՐՃԱՎ. — Անկուսակցականներ կոլլուգում մենակ դու
չես , անկուսակցական մարդիկ մեզնում շատ
կան , բայց նրանք եղանակ չեն խոսում :

ՏԻԳՐԱՆ. — Նրանց ձեռքից կուսակցական տոմս չեն իր-
ել :

ԱՎԵՏ. — Կուս տոմսը վոր ձեռքներիցս խլեցիք , կարծում
ես լավ արթ՞ք :

ԱՐՃԱՎ. — Լավ արթնք թե վասա , եղ ես չեխում , բայց են-
դիմամ , վոր սրանից հետո յեթե դուք ձեզ լավ
պահէք , մենք վորանեզ հարկավորնա կմիջնոր-
դենք , վոր եղ կուստոմսը դուք նորից հետ ստա-
նաք :

ՏԻԳՐԱՆ. — Շնորհակալ ենք , ստանց ձեր միջնորդու-
թյան ել եղ տոմսը մենք հետ կոսանանք : Կու-
սակցությունից են մեզ հետացընէլ , կոլխոզից հո
չեն հետացընէլ : Կոլլուգում մենք ձեզ հետ հայտ-
սար իրավունք ունենք : Սրանից հետո մենք կաշ-
խատենք և կտեսնենք ով ինչ շնորքի տեր ա և թե
կարծնականում իրանց հանձնարարիած դործը
ո՞վ ինչպես ա կատարում :

ԱՐՃԱՎ. — Յես քեզ հետ համաձայն եմ (ձեռքն սղմում
և և քաշում մի կողմ նրա հետ լուռ խոսում) :

ԱՐՃԱՎ. — Խնդրին յեթե եղ կերպ մոտենանք , 100 տո-
կովին մենք շուտով կհասնենք :

ՍԵԹՈ. — Եղ արդեն մեր տարեփելիք աշխատանքից ա
կախված :

ԱՎԵՏ. — Կոլխոզի նախագահ ես լուսել , հեշտ-հեշտ խո-
սում ես : Եղ աշխատանքը դու կարծում ես մի

վա գործ ա , վոր գնաս անես վերջացնես գաս տե-
ղող հանդիտ նստես :

ԱՐՃԱՎ. — Դու ել հենց մի դլուխ հանդիտ նստելու
մասին ես մտածում : Կոլխոզի աշխատանքները
մեզ համար ամեն որից անելու դործ ա :

ԱՎԵՏ. — Ամեն որից խնդիրը չի , եղ գործը հանդիտ
սրամը ել կարելի ա անել , վրադիելու և շտապելու
բոլորովին կարիք չկամ :

ՍԵԹՈ. — Հինգ տարվա պլանը չորս տարում կատարելու
մասին , ինչպես յերեսում ա , դու բոլորովին գտ-
գափար չունես :

ԱՎԵՏ. — Դու ել միթամ Ամերիկա գտար : Կարծես հե-
տեւներիցգ ընկել են , վոր անպատճառ ել պլանը
չորս տարում կատարեք : Չորս տարում չի , թող
14 տարում ըլի , գլխներդ ո՞վ ա կոտրում :

ՍԵԹՈ. — Վոր ասում եմ աջ թեքման կողմնակից ևս , նե-
զանում ես : Աջ թեքումը ել պուդավոր ու պոչափոր
չի : Ախր եղ զահքումար աջերն ել հենց եղ են ա-
սում ե՞...

ԱՎԵՏ. — Դե լավ ես աջ եմ , դուք դնացեք եղ հինգ տար-
վա պլանը չորս տարում կատարեք , տեսնենք ինչ
ա դուքս գտու : Յես չեմ հասկանում եղ տեմպով
աշխատանքը մինչև յերբ պըսի տանենք :

ԱՐՃԱՎ. — Մինչև վոր մենք մեր վերջնական նպատակին
կհասնենք :

ԱՎԵՏ. — Զահքումար դառնա , ո՞ւրա թե հասնում ենք :
Սպասելով աշխներս ջուք կտրեց :

ԱՐՃԱՎ. — Թամբալ մարդու խոսք ա (Համբոն վազե-
լով ներս ե գալիս) :

ՀԱՐՄԲՈ. — Մեր շեֆերը յեկան (դուքս ե վագում) :

ԱՐԺԱՎԻՔ — Յնանք նրանց պիմավորենք (բոլորը դուրս
են գնում) :

S E U H L 3.

Նարգիզ, Սերո, հետո Հրաւշ, Զմրուխտ, Կարո և
Հովհաննեն

ՄԵԹՈ — Կանչի Հևոներ խոսու, յեթե կհամաձայնվեն,
վեսա չունի, կարելի ա: (Սերոն և Նարգիզը քաշ-
վաւմ են մի կողմ և լուս խոսում: Կարոն ու Հով-
հաննեար, ծաղիկները կրծքներին ամրացրած, Հը-
րաւշի և Զմրուխտի հետ խռանելով գալիս են) :

ՀՐԱՎԱՐՆԵՍ — Ի՞նչ կարիք կա շտապելու: Մեր ասուս-
նության խնդիրն ել չո հինդ տարվա ծրագրի մեջ
չի մտնում, վոր եղքան վլազում եք: Քիչ ել կըս-
պասենք:

ԿԱՐՈ — Ճիշտ ա ասում: Կապասենք. շտապելու կարիք
չկա:

ՀՐԱԽԵՇ — Աղջի, լոռ՝ ամ ես, որանք ես ինչեր են ասում:
ԶՄՐՈՒԽՏԸ — Վոնց վոր երեխում ա, ճամբին գալուց որ-

րանք իրար խոռք են տվել:

ՆԱՐԴ — Եղ ի՞նչ եք իրար հետ փոխում, հորցնելը ա-
մոթ չլինի:

ԶՄՐՈՒԽՏԸ — Մեր ենք բացատրվում:

ՆԱՐԴ — Դե լով, եղ բացատրությունը քանի՞ տարի ա-
բաշելու:

ՀՐԱԽԵՇ — Մրանց հարցըու:

(Կրանք քաշվում են մի կողմ և միմյանց հետ լուս
խոսում, իսկ կոլտողներները նաղրա ու զուռնան
առաջները արած, պարելով և ծափ տալով գա-
լիս են) :

S E U H L 4.

Եռյեմ, Արշավիր, Սերո, Տիգրան, Ավետիք, Համբա,
Գեղամ, Մարգար Յեղան, Հերիքնաց և ուրիշներ

ՀԱՄԲՈՅ — Այ խալիս, առաջարկություն կա, վար մեր
չեֆեն պար ածենք:

ԲՈԼԱԲՐԸ — Խնդրենք, խնդրենք:

ԳԵՂԱՄ — Ա չտոժ, վոր ասում եք՝ կպարեմ: (Պա-
րում ե):

ՀԱՄԲՈՅ — Հերթը նորահարսին ու նորափեսին ա...

ԲՈԼԱԲՐԸ — Խնդրենք, խնդրենք... (ծափ են տալիս,
Մարգարն ու Յեղան պարում են. Նարգիզը կար-
միք բաշկինակը բերալ, կապում և Յեղանի
գլխին) :

ԲՈԼԱԲՐԸ — Կեցցե մեր նորահարսը:

ԶՄՅԵՆԸ — Նորահարսը թող կարմրի:

ՀՄՐՈՒԽՏԸ — Նա նոր չի կարմրելու:

ԳԵՂԱՄ — Ինչպես երեսում ա, Մարգարը լավ աշխա-
տանք ա տարել... Բայց ինքը բատրակ, նա կու-
լակի աղջիկ... կարծես մի տեսակ, ինչպես ուսւ-
ներն են ասում, նե կլեխոյա... .

ԱՐԺԱՎ — Հասկանում եմ, դու ինչ ես ուզում տակ,
բայց դու ինքդ տեսար, թե ինչպես կոմի ժամա-
նակ, զիրքերում թշնամու դեմ մեղ հետ միտսին
կովում եր: Ռերիշ խռաքով առած, նա րավ քննու-
թյուն ովեց:

ԳԵՂԱՄ — Ա չտոժ, յեթե եղախ ե, վնաս չունի...

ՍԵԹՈ — Նարգիզ, ի՞նչ արիր, դլուխ ա զալի, թէ չե՞:

ՆԱՐԴԻԶ — Գլուխ ա զալի:

ՍԵԹՈ — Աւրեմն, կարո՞ղ եմ հայտարարել:

Նույնին և բանվորներ

ՆԱՐԳԻՉ. — Կարող ես :

ՀԱՎԱՀԱՆՆԵԾ. — Իրավունք ունես :

ՄԵԹՈ. — Եւ խալիս, մի քանի ըստեցով ինձ լսեք :

ՀԱՄԲՈ. — Լոռզություն : (նադարագունան դադարում ե) :

ԲՈԼՈՐԸ. — Լսում ենք :

ՄԵԹՈ. — Ընկերներ, ինչպէս ձեզ հայտնի ա, եսոր մենք հագարվել ենք հստեղ յերկու նպատակով : Առաջին նպատակը նա յե՝ վոր մսուրի բացման հանդես են կատարում : Իհարկե, դրա մասին մենք իրա ժամանակին տեղումը կիսուենք : Յերկրորդ նպատակն ել են ա, վոր եղ մսուրի բացման հանդեսի հետ միաժամանակ, ընկեր Մարգարի և ընկեր Հեղսոյի հարսանիքն ենք ոնում :

ԲՈԼՈՐԸ. — Եղ մեղ հայտնի ա :

ՄԵԹՈ. — Յերեփի ձեզ եւ եւ ա հայտնի, վոր ես մեր յերեւասարդները վազուց ա իրար վրա սիրահարված են. այսինքն, ուղում եմ ասել, վոր նրանք իրար խոսք են տվել և ետ խոստումը ուղում են նրանք եսոր կատարեն : Աւրիշ խոսքով, նրանք եսոր սոցմբցման կարդով իրանց հարսանիքը ուղում են միացնեն ընկեր Մարգարի ու ընկ. Յեղսոյի հարսանիքն : Դուք հոգեմ չե՞ք :

ԲՈԼՈՐԸ. — Դեմ չենք, ուսուա . . .

ԳԵՂԱՄ. — Ա, չոտժ, ծախսերի խնայողություն ա :

(թանվորները, կարմիր դրոշակով և զանազան պլակատներով, զարդարված տրակտորը ներս են քերում :

ԳԵՂԱՄ. — Ընկերներ, թույլ տվեք ընդհանուր կարգով մի հայտարարություն ել յիս անեմ : Հրես մեր բանվորներն ել յեկան, արակառը ել հետները բերին. ինչպես վոր տեսնում եք, եդ արակառը մեր դործարանի բանվորներն են շինել և ուղակել ձեզ, միաժամանակ հանձնարարելով, վոր դուք ձեր գիրքերում լինեք միշտ արթուն և դպաստ :

ԱՐՇԱՎ. — Կեցցե մեր բանվոր ընկերները :


ԳԵՂԱՄ. — Կեցցե մեր կոլխոզնիկները :

ԲՈԼՈՐԸ. — Ուսուա . . . ուսուա . . .

(նադարագունան նվազի տակ, բոլորը միասին քեզ քեզի բոնած, պարում են) :

ՎԱՐԱԳԱՐԻՑՅ





ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅՈՒ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «ԳԱՐԴԱՎԱՐԻ»—պիես 3 գործ . յերկրորդ հրատարակ . սպառված :
2. «ՆԱԽՈՐՅԱԼԻՒՆ»—պիես 3 գործ . առաջին հրատարակ . սպառված :
3. «ԲԱՆԴԻՑՆԵՐ»—վիես 3 գործ . յերկրորդ հրատարակ . սպառված :
4. «ԳԱՆԵԼ ԱԴԱ»—պիես 1 գործ . առաջին հրատարակ . սպառված :
5. «ԺՈՂՈՎ»—պիես 2 գործ . առաջին հրատարակ . սպառված :
6. «ԱՆԱԲԻԵՒՏ»—պիես 1 գործ . առաջին հրատարակ . սպառված :
7. «ՈՒԲՎԱԿԱՆՆԵՐ»—պիես 2 գործ . առաջին հրատարակ . սպառված :
8. «ԳԻԲՔԵՐՈՒՄ»—պիես 8 գործ . 4 պատկերով :

Պատրաստ է տպագրության համար «ԱԶԳԱՆՇԱՆ» ըրամա 5 գործ . 4 պատկերով , կռուվա ապստամբությունից :

«Ազգային գրադարան»



NL0365901

56.993

ԳՐԱԴԱՐԱՆ

782-0

1931.

891. 99
4-30